


1927

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ



## «ՀՈՅ ՅԵՂՍՏՓՈՒՍԵԿՆ ԴԱՂՆԵԿՑՈՒԹԵՆՆ» ՕՐԳԱՆ

### 1927--1928

Տարին վերջացաւ անստուգութեան մէջ:  
Տժգոյն և տաղտկալի:

Նոյն քաջըլուքը՝ միջազգային հրապարակի վրա: Անվերջ ժողովներ, բանակցութիւններ, պայմանագրութիւններ: Անընդհատ երթևեկ դէպի ժընև, և մայրաքաղաքէ մայրաքաղաք: Իերնէ բերան ջերմ հաւաստիքներ՝ խաղաղութեան համար, վսեմ ճառեր՝ կանաչ սեղաններու վրա: Իսկ պետական գրասենեակներու խորը՝ գաղտնի թուղթեր և զինարաններու մէջ տնդազին պատրաստութիւններ վաղուան համար:

Բանակ, օդանաւ, մարտանաւ, քիմիական պատերազմ, վիթխարի վարկեր, — բոլորը իրենց կարգին, և, իբրև թագ ու պսակը ողբերգութեան՝ մարդանջներ՝ պատերազմը «օրէնքէ դուրս հռչակելու», յաւիտենական խաղաղութեան դաշինքներ կնքելու:

Դժաւոր է ըսել. — երէ՞կ աւելի վառօդ կան մթնոտլոտին մէջ, թէ այսօր: Երէ՞կ աւելի լուրջ էին մարդիկ, թէ այսօր, Ազգերու Դաշնակցութեան հովանաւորութեան տակ:

1899—էն ի վեր, հանդիսաւոր ժողովներ կը սարքէին, սպառազինութիւնները կը ճատելու համար: Ելքը՝ քանի մը պատերազմ, մինչև 1914—ի աննախընթաց արիւնհեղութիւնը, որուն վերջերը չեն սպիացած տակաւին:

Այն ատեն, որոշ համբանք մը ունէին մեծերը, կամ սպառազէն ուժերը: Այսօր՝ հիններէ մէկը միայն տապալած է,—Աւստրիա-Հունգարիան: Մէկը՝ առժամապէս կաշկանդւած — Գերմանիան: Իսկ փոքրերէն, ծաւալած կամ հասակ նետած են բազմազան կերպարանքներ, — Ամերիկան, որ չի գոհանար տոլարին տիրապետութեամբ և կուզէ իշխել նաև գէնըզլի. Ֆրանսա իտալիան, որ հասած է իր ուժերու գերագոյն լարման, և հազիւ կը զսպւի, տարածելու թափին մէջ. Մեծն Բրիտանիան, որ պարտադիր զինւորութիւն չունի, բայց կը ճգնի ամենէն հզօրը մնալ. Փրանսան, որ վերստյով կը սպառնայ. Խորհրդային Ռուսիան, որ աշխարհի ամենէն մեծ բանակը ունի, ինչպէս ցարականը: Նորբէն՝ Լեհաստանը,

որուն ախորժակը միշտ սուր է. Ռումանիան և Եուլիո-Սլավիան, որոնք ահագին հողերու տակ ինկած են, աւարը պահպանելու համար: Պուլկարիան և Յունաստանը՝ զրկանքի դառնութեամբ և վրէժով լեցւած, ու վերջապէս, հիւանդակայ թուրքիան, որ դարձ մը ունեցաւ, չնորհիւ հիւսիսի հովերուն:

Այս կարաւանին մէջ, ո՞րն է այն քաջը որ առաջին զանգակը պիտի կախէ, հրացան մը կամ թնդանոթ մը պակաս գործածելու համար:

Եւ ասոնց դիմացը՝ միւսները, — անոնք որ լուծի տակ են, կամ ինկան, նորէն, հազիւ արշալոյսը ողջունած: Կովկասը՝ իր չորս ժողովուրդներով, նորագարթ Ուկրայինան, կամ Լիբըին ժամուն սթափած քիւրտերը: Եւ անոնք որ փոքրամասնութեանց խնդիրներ ունին, կամ անհամալէճներ, չազատագրւած հողեր: Լիթուանիա մը խաղաղութիւն կը խոստանայ ժընևի ժողովին առջև, սպառնալից նալաւքներու տակ, բայց չի կրնար մոռնալ վիրնան, ինչպէս Գերմանիան չի կրնար հաշուել Շլեզիոյ կամ իր գաղթավայրերուն կորուստին հետ, ոչ ալ Պուլկարիան՝ կուրանայ Տոպրուճան, կամ Թրակիան:

\*\*\*

1927—ը սեւագոյն տարին եղաւ Խորհրդային Հայաստանի համար, 1921—էն յետոյ:

Իշխանութիւնը՝ աւելի քան երբեք ապիկար և չկամ: Ոչ մէկ հիմնական ձեռնարկ, թափառական բազմութիւններու տեղաւորման համար: Տարւան ընթացքին 300 հողի փոխադրեցան Պոլսոյ կայաններէն՝ և 1200 հողի՝ Յունաստանէն: Երկու կարաւաններն ալ մէկ տարի առաջ վիզա ստացած, «իրատէ»-ի կը սպասէին:

Նանսէնեան ծրագիրը բուրջի մը պէս քշեցաւ Ազգերու Դաշնակցութեան օրակարգէն, իսկ ատանց ճահիճներու չորացման, Երևան չուզեր ներգաղթի խօսքն իսկ լսել: Եւ այս՝ 1923—էն ի վեր, երբ Չիչերին իր հռչակաւոր աւետիսը կուտար, 50,000 գաղթականներ կուրան և կըրգըզներու երկիրը ցրելու համար:

Երևանի մարզպաններու «ազգահասարակական» աշխատանքի մասին գաղափար մը տալու համար, յիշենք որ, Անաստուրի խորհրդէն թշուառ բեկորներ ճամբայ կելլեն դէպի Տրապիզոն կամ Սամսոն, Հայաստան, գոնէ Կովկաս մասերու միամտութեամբ, բայց Բաթումէն կը վերադարձին (օրինական պատրակներով) և կապաստանին... Պոլիս:

Բայց այս անտարբեր և ապիկար իշխանութիւնը աւելի քան գործօն է մէկ ճակատի վրայ, և այս տարի մրցանիչը կտրեց, նոյնիսկ բաղադատելով հարեան հանրապետութեանց հետ:

Կակնարկենք բռնի զինաթափութեան և զանգաւածային ձերբակալութեանց, որոնք մասնաւոր սաստկութիւն մը ստացան 1927-ի յուլիսին, իրենց թափը պահելով մինչև տարւան վերջերք:

Դրօշակի ընթերցողները ծանօթ են մանրամասնութեանց: Հազարէն 1200 հոգի բանտարկւած, Հայաստանի բոլոր մասերուն մէջ: Գրեթէ նոյնքան՝ սարբ բարձացած, մասնաւորապէս Արագածի և Չանգեղոսի շրջաններուն մէջ: Գիշերային, գաղտագողի աքսորներ, 20-30-40 հոգիներ խուճերով: Եւ այս բոլորը՝ առանց կուսակցութեան, տարիքի կամ դասակարգի խտրութեան: Կրնանք ըսել որ դաշնակցականները նազագոյն թիւը կը կազմեն:

Եւ այս բոլորին հետ զուգընթաց՝ սիստեմատիկ, մոնկոլեան բռնութիւններ՝ զէնք մը աւելի կորզելու համար անպաշտպան գիւղացիներու ձեռքէն, ճիշտ այն պահուն երբ հարեան թուրքն ու թախարը կը զինւին շնորհիւ քէմալական գործակալներու:

Աւելորդ է նկարագրել այս բարբարոսութեանց հետևանքով յառաջ եկած հոգեկան ջլատումը, կամ հինգ-վեց հազար մայրերու, քոյրերու և երեխաներու թշուառութիւնը: Այլ և երկրի առևանկան, ընդունակ ուժերու ծիւրումը:

Մէկ խօսքով, 870,000 բնակչութեամբ Հայաստանի Ձէկան կրնայ, կատարեալ հպարտութեամբ, ասպարէզ կարաւ Մոսկուայի Կեդք. Ձէկային, որ 99 միլիոն մարդ կը համբէ, բուն Ռուսաստանի մէջ:

Ի՞նչ գործնական հետևանքներ ունեցան այս կործանարար, ժողովրդապան չահատակութիւնները՝ գաղութներու մէջ:

— Խորին վրդովում՝ աշխատաւորութեան մէջ, բողոքի միթիւններ և բանաձեւեր, և անգոր կատաղութիւն: Հեզնական, ամարդի արտայայտութիւններ, նոյնիսկ շինծու հերքումներ՝ շարագործներու հաշիւն և զովասանականներ՝ նորէն անոնց հասցէին: Յուզիչ մեկուսացում կամ անասնական անտարբերութիւն, մասնաւորապէս այն « մտաւորական » երևելիներուն կողմէ, որոնք տարիներէ ի վեր կուրծք կը ծեծեն ազգի սիրոյն, Եւրոպայի պողոտաներուն վրայ:

Հայ բոլշևիկները եթէ ուրիշ արժանիք ալ չունենան, բաւական է այս մէկը, — ամբողջ ժողովուրդի մը ողնայարը փշրել, կաշկանդել անոր ազգային գիտակցութիւնը, և լուսթեան դատապարտել զայն բանտով ու աքսորով, — որպէզի կոյրերուն աչքերն անգամ բացուին, իրենց «առաքինութեանց» մասին:

Տարի մըն ալ այսպէս, և քնացողներն անգամ կարթնանան:

\*\*\*

Տարին վերջացաւ խաղաղութեամբ: Այսինքն մեծ ու պոտիկ տարի մըն ալ ժամանակ ունեցան, զէնքերը իւղոտելու համար:

Եւ նորը կը սկսի աւելի մուծ: Թերևս ճակատագրական:

Բնագագաբար, կը դառնանք մենք մեզի և կը հարցնենք.

— Իսկ մե՞նք...

Ի՞նչպէս կը դիմաւորենք նոր տարին, նախ՝ իբրև կազմակերպութիւն:

Ամէն բանէ առաջ, կրնանք առանց վերապահութեան յայտարարել, որ թուրքում չըկայ կազմակերպութեան մէջ: Ընդհակառակն: Անհետացածներուն, յոգնածներուն տեղ նորեր կը հասնին ամէն շրջանի մէջ: Երիտասարդութիւնը ինքնաբերաբար կուգայ մեզի: Եւ այսօր աւելի գիտակցօրէն, հասունցած՝ կեանքի դաժման փորձերով: Մեր ձեռքն է, վերջնապէս Դաշնակցութեան հետ կապել այս թարմ տարրերը, կենդանի աշխատանքով, և օրւան պահանջներուն ճշգրիտ հասկացողութեամբ:

Վերջացող տարւան ընթացքին, մեր կարգ մը մարմինները ուժասպառ եղան այսպէս կոչւած ազգային տաղտուկներով, շնորհիւ միջավայրի առանձնայատուկ պայմաններուն, և խանդարեցաւ ներդաշնակութիւնը: Բայց, անցողակի երևոյթներ են առանց, և այժմ, մանաւանդ վերջին Շրջ. ժողովներէն յետոյ, բոլորը փարձ են կազմակերպական աշխատանքի: Եռանդը չէ որ կը պակսի մեր մարմիններուն, ոչ ալ շարքերուն մէջ:

Իրերու ներկայ դասաւորումը դատապարտած է մեզ ինքնամփոփ, լուս աշխատանքի: Կը գտնենք տքնութեան, պատրաստութեան շրջանի մը մէջ: Եթէ առ այժմ ազմկալի գործեր չկան, կա՛յ, սակայն, գալի՛ք օրերու համար պատրաստ գտնելու պարտականութիւնը:

Ուրխս ենք, որ տարւան ընթացքին գումարւած Շրջ. ժողովները անըբաղարձած են այս հարցին, և համապատասխան բանաձեւեր չէկարկած:

Ունինք, օրինակ, յստակ որոշումներ մեր քաղաքական առաջադրութեանց մասին: Գիտենք անոնց տարողութիւնը և մեր վրայ ինչպէս պարտականութիւնները:

Կը մնայ, որ վարիչ մարմինները հետզհետէ աւելի մշակականութեամբ և հետևողականութեամբ յարաւ տանեն աշխատանքները,

եղածը կատարելագործելու համար: Չախմախմ-  
լըներով սկսանք, բայց անոնց կապելու դա-  
տապարտուած չենք, ոչ ալ զարանալու: յեղա-  
փոխական միտքը սնդադար կը գործէ, իսկ  
օրան իրականութիւնը նոր ուժեր և միջոցներ  
կը պարտադրէ:

Ամբողջ աշխարհ երկունքի մէջ է: Մեծ  
ու պղտիկ անհամբեր շարժումներ կընեն վաղ-  
ւան հանդէպ, որ վրդովիչ հարցական մըն է:  
Բոյորն ալ կը լարեն իրենց ուժերը, կը  
նորոգեն գէնքերը, և կը սպասեն առաջին պա-  
տեհութեան: Եւ ամէն մէկը կը դողդողայ իր  
ունեցածին վրա: «Եթէ չեմ կրնար բան մը  
աւելի անել, վրա չտամ ինչ որ ձեռքս է»:

Մենք աւելի շատ իրաւունք ունինք ա՛յս

ուղղութեամբ խորհելու և պատրաստելու:  
Գաղտնիք չէ, որ յաճախ անակնկալի եկած  
ենք, վճռական ժամուն, թանկագին պատե-  
հութիւններ կորսնցնելով:

Եթէ մեզի տրած չէ, այսօր, դըրտագին  
գործեր կատարել, այդ չի նշանակեր թէ ձեռ-  
նածալ պիտի նստինք, մինչև որ «Տէրը կամե-  
նայ»:

Ընդհակառակն, տասնապատիկ աւելի ե-  
ռանդով պիտի փարինք մեր կազմակերպու-  
թեան աւանդութիւններուն, պիտի գործենք,  
պիտի նորոգելնք անվճար, որպէսզի կարե-  
նանք ըսել, յարմար ժամուն:

— Պատրա՛ստ ենք:

## ԹՈՒՐՔԻՈՅ ՄԱՐԴԱՅԱՄԱՐԸ

Ներկայ տարւայ Հոկտեմբեր 28-ին տեղի ունեցաւ  
Թուրքիոյ մարաշահամար բեւեհացի մասնադէտ ժա-  
քարէ ղեկավարութեան տակ և 60,000 պաշտօնեաներու  
աշակցութեամբ:

Այդ երանելի երկրի մէջ ա լա թուրքա շատ խո-  
րամանկ ու ծիծաղելի բաներ տեսանք անցեալին: Բայց  
այս վերջին տարիներու փորձերը կը դերագանցեն  
ամբողջ անցեալը: Բուլղերիեան շարժումներով մը, առանց  
միջուկի, կերպարանքէ կերպարանք փոխեցաւ այդ  
երկիրը: Բռնութեան դաւազանը յարողութիւն դտաւ  
ու, համբիշի մը շարանին պէս, չնկերային և թաղա-  
քակրթական կարեոր խնդիրները, նոր պատկերներով,  
կարգի մտան և աշուպս ալ կը մնան: Այդ բոլորը թէև  
զարմանալի թւեցաւ շատերուն, բայց դիւրութեամբ  
զլուրի եկաւ: Հրամանագիր մը ընէ իսկ Ֆէսերը և  
փաթթոցները վար առաւ ու քրիստոնեաներու բոլոր  
հնամաշ զլխարկները տեղը դրաւ՝ ամենէն շատ արգա-  
հատելի վիճակի մէջ դնելով ջրկիրներն ու մուլաները:

Վերջապէս, զրջանք ըմբռնել, որ այդ բոլորը  
հրամանագրերով կարելի էր զիրականացնել, սակայն,  
չէինք կրնաք երևակայել, թէ վիճակագրութիւնն ալ  
այլալիսի հրամաններու ենթակայ պիտի ըլլար: Թուր-  
քիան վիճակագրական անփոփոխելի օրէնքներն ալ  
փոփոխելի դտաւ՝ կարծելով, անշուշտ, թէ նոյնքան  
դիւրին բան մըն է, որքան Ֆէսերու վերացման խնդիրը:

Թուրքիոյ ներկայ վիճակագրական ախտաակի հրա-  
տարակումը աւելի քաղաքական յայտարարութիւն մըն  
է, քան վիճակագրական մտահոգութիւն: Թուրքիա  
պարզապէս կողմէր աշխարհին ցոյց տալ, որ ինք ունի  
14 միլիոն բնակիչ և, բնականօրէն, այդ համեմատու-  
թեամբ՝ զօրք և դիմադրական կորով:

Եւրոպական հանրային, գերտական և քաղաքական  
կարծիքներու հետ խաղալու զարաւար փորձառութիւնը  
թեւադրեց Մուստաֆա Բէմալին ինկիւրի հրաւիրելու  
Եւրոպացի մասնադէտ մը՝ վտահ, որ ան միայն  
կեդրոն մը պիտի նստէր ու պիտի վաւերացնէր 60,000  
թուրք պաշտօնեաներու հեռագիրներու և ցուցակներու  
արդէնքը: Ու Եւրոպան և դրացի աղբերն ու պետու-

թիւները բաւական երկար ժամանակ ճշմարտանման  
լիտի դռնէին այդ վիճակագրութիւնը, որ, յամենայն  
չէպս, մասնադէտ ժաքարի ղեկավարութեամբ կա-  
տարուած էր:

Սովորութիւն դարձած է ըսել, թէ թիւը և հաշիւը  
Իհայն նշանակութիւն ունին ամէն մէկ դրական գործի  
մէջ: Վիճակագրութիւնը անփոփոխելի քիւ է, ու այդ  
թւի վրա կը կատարուի ամէն հաշիւ, ամէն դատողու-  
թիւն: Բայց թւանշան մը այնքան արժէք ունի, որքան  
շտուութեամբ կը Համապատասխանէ բանքային այսինչ  
իրական քանակութեամբ դրամի, կամ այնինչ երկրի  
Տշգրիտ բնակչութեան, այլապէս թւաբանութեան դա-  
տադրքերու շարած թիւերու արժէքը միայն կրնայ  
ունենալ, որ ենթադրական հաշիւներ են՝ անոտհամա-  
րէն ընդարձակելու ընդունակ և, սակայն, ուէ իրա-  
կան առնչութիւն չունին շոշափելի հաստատութեան մը  
հետ:

Մուստաֆա Բէմալ Թուրքիոյ վիճակագրութեան  
մօտեցած է մաթէմատիքական այնքան ճշտութեամբ,  
որքան թւաբանութեան դատադրքի հեղինակ մը: Միայն  
այն տարբերութեամբ, որ դատադրքի հեղինակը շատ  
լաւ դիւրի, թէ իր շարած թւանշանները, որոնք շատ  
անզամ ոսկիներու դումարը կը յայտարարեն, որպէս  
շոշափելի արժէք, հաւատար են զերօրի:

Ուրեմն, հրամանագրին ու զաւազակն այստեղ չեն  
օգնիր Մուստաֆա Բէմալին: Մածոն ծախողն ու ջըբ-  
կիրը ծակած յարդէ զլիարկ մը, նոյնիսկ ձմեռաւոյ  
էղանակին, կրնան իրենց զլուրն անցնել, որպէսզի  
թուրք պաշտօնեան զո՛հ մնայ եւրոպականացման այդ  
երևոյթէն, բայց ոչ Մուստաֆա Բէմալի հրամանով  
և ոչ ալ ժաքարի մասնադիտութեամբ Վանի նահանգին  
մէջ 75,000 բնակիչ կարելի է բուսնել:

1914-ին նահանգներու վիճակագրութեան, Հայոց  
Ազգային Պատրիարքարանի և եւրոպական այլ աղբիւր-  
ներու հիման վրա այսօրւայ Թուրքիոյ բնակչութեան  
թիւը կը հասնէր 14,500,000-ի: Եթէ այդ թւէն հանենք  
Հայերը, յոյները, պատերազմի Թ հրանդութեան կո-  
րուստները, տեղահանուած և ջարդուած զերբերը,  
A.R.A.R.®

եզիտները, ասորիները և չերեզները կը մնայ մօտաւորապէս 8,500,000 բնակիչ: Թուրքիա անուճ չէ ունեցած. գոնէ իրենց բազմաթիւ տեղեկութիւնները, 1926-էն անդին, ա՛յլ կը հաստատեն: Հետևաբար, եթէ անդամ պատերազմի կորուստները չհաշուենք, ներկայ Թուրքիան 8,5-էն 9 միլիոնի սահմաններու մէջ կը մնայ: Հապա պատերազմի կորուստները. չէ՞ որ միայն սպանուած զինուորներու թիւը պաշտօնական տեղեկութիւններով կը հաշուի 700,000 հոգի, իսկ պատերազմի ընթացքին համաճարակներէն և քաղաքացիական ու միջնդային կռիւներու ընթացքին փնջացածները...

Այս ընդհանուր դիտողութիւնները մանրամասն փաստարկութեան չենք կարող ենթարկել, որովհետև հին և նոր ճշգրիտ ու մանրամասն վիճակագրական տեղեկութիւնները կը պակսին: Թուրքիոյ բնակչութեան ընդհանուր թիւի ճշտումը մեզ համար, համեմատաբար, աւելի նւազ նշանակութիւն ունի, քան այն յարաբերութիւնը, որ կայ Տաճկահայաստանի թւական իրական տեսններու և յայտարարուած նոր վիճակագրութեան գումարներու միջև:

Ուրեմն, մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք Վիւսընի սահմանադժած հայկական նահանգներու վիճակագրութեան վրա և թւական փաստերով ըննութեան առնենք ու հիմնադրենք այդ հողամասի ազգաբնակչութեան իրական պատկերը:

Ըստ Թրքական վերջին մարդահամարի, Վիւսընի սահմանադժած Տաճկահայաստանի մէջ ազգաբնակչութեան քանակը հետևեալ պատկերն ունի.

1. Տրապիզոն	
Ռիզէ	163,059
Տրապիզոն	293,052
Գիւմրիւխանէ	121,907
<hr/>	
	578,018

Նկատի առնելով, որ Տրապիզոնի գաւառի միայն մէկ շտորոքը և Գիւմրիւխանէի կէտը կը մտնեն Վիւսընեան Հայաստանի մէջ, պէտք է, ուրեմն, Տրապիզոնի բնակչութեան երեք շտորոքը և Գիւմրիւխանէի կէտը դուրս հանել Տրապիզոնի մարդջական շրջանի ազգաբնակչութեան թւէն: Տրապիզոնի 293,052-ի երեք շտորոքը հաւասար է 214,789-ի, իսկ Գիւմրիւխանէի 121,907-ի կէտը հաւասար է 60,953-ի, որով գումարը կը լինի 275,742: Այսպիսով, Տրապիզոնի հայկական շրջան նկատուած մասի մէջ կը մնայ 302,276

2. Երզրում	
Էրզրում	270,873
Բայազետ	103,062
Երզնկա	143,970
<hr/>	
	517,805

Այս թւէն պէտք է հանել Երզնկա գաւառի բնակչութեան կէտը՝ նկատի ունենալով որ նոյն գաւառի կէտը չի մտնէր Վիւսընի սահմանին մէջ — 445,820:

3. Բիթլիզ-Մուշ (առանց Կէնճի)	90,309
4. Վան	75,193

Ընդհանուր գումար — 913,598

Ընդհանուր անկարգով մօտեցողը առաջին առթիւ այն տպաւորութիւնը կը կրէ, թէ դատարկուած Տաճկահայաստանը այժմ հոծ ազգաբնակչութիւն ունի:

Մինչդեռ ուշադիր դիտողը եթէ բաղդատութիւն մ'ընէ 1913 և 1927 թիւ վիճակագրական տեսչներու միջև, պէտք է տեսնէ, որ Թրքական ներկայ վիճակագրութիւնը հետևած է դիւրին մեթոտի մը, այսինքն, 1913-ի հաւանական թիւերէն հանած է հայերու, յոյներու, եզիտներու և ասորիներու ազգաբնակչութեանց ամբողջական գումարը և մնացորդը նշանակած է, որպէս գոյութիւն ունեցող թիւ մը այսօրւայ համար:

1913-ին, Բայկանեան պատերազմէն յետոյ Թուրքիոյ և, մասնաւորաբար, հայկական նահանգներու ազգաբնակչութեան թւական տեսչները ըննութեան առարկայ դարձան: Թրքական կառավարութեան մարդահամարի վրա կատարեալին Հայոց Ազգ. Պատրիարքարանի և եւրոպական մօտաւոր վիճակագրութիւնները, որոնք թէև իրարմէ տարբեր թիւեր կը ներկայացնէին, բայց երբեք հարիւր հազարներու քանակով, ինչոր աչքի կը զարնէ 1927-ի նոր Թուրքիոյ վիճակագրութեան մէջ:

Թրքական և պատրիարքարանի վիճակագրութեան միջինը միշտ նկատի առնելցաւ 1913-ին: Կուզէի բաղդատական պատկեր մը տալ Հայաստանի երեք կարևոր նահանգներու ազգաբնակչութեան թւին՝ ջով ջով դեմելով 1913-ի, 1924-ի և 1927-ի վիճակագրական ցանկերը\*):

	1913 թ.	1924 թ.	1927 թ.
1. Երզրում	680,000	440,343	445,820
2. Վան	360,000	51,071	75,193
3. Բիթլիս	382,000	83,908	90,309
<hr/>			
Գումար	1,362,000	575,322	611,322

Արդ, 1913-էն յետոյ, Թրքական բարբարոսութեան հետևանքով, վերջ յիշուած նահանգներու հայ, յոյն, եզիտի և ասորի ազգաբնակչութեան մէկ մասը կտտորւեցաւ, միւս մասը Թուրքիայէն դուրս ելաւ:

Ահա այդ տողովուրդներու թիւը

	Հայ	յոյն	եզիտի և ասորի ընդհ. գում.
Երզրում	215,000	12,000	3,000
Վան	185,000	—	43,000
Բիթլիս	180,000	—	15,000
<hr/>			
գումար	580,000	12,000	61,000
			653,000

Երբ այս 653,000-ի հասնող ազգաբնակչութեան թիւը հանենք 1913-ի մարդահամարի գումարէն, որ 1,362,000 թիւ մը կը ներկայացնէր (1,362,000-էն հանենք 653,000=709,000), կը մնայ 709,000 բնակիչ: Ատկէ պէտք է զեղջի նաև Կէնճ գաւառի 67,000 (ըստ 1924թ. վիճակագրութեան) բնակչութիւնը, որ 1913թ. հաշուի մէջ կը մտնէր, մինչդեռ 1924-ի և 1927-ի մարդահամարով, առանձին նահանգ նկատուած է, և դուրս կը մնայ Վիւսընեան Հայաստանի սահմաններէն: Որով, 709,000 — 67,000 = 642,000:

Վերի հաշիւներէն պարզ կերևի, որ՝ թէ 1924-ի Թրքական անկատար վիճակագրութեան և թէ 1927-ի

\*) «The Statesman's Yearbook» 1925թ. էմկիթի.

« մասնագիտական » վիճակագրութիւններու հիմքը 1913-ի թւական վիճակը պահպանելն է: Առանց հայերու, եգիպտացիներու, յոյներու և ասորիներու էջրբումի, Վանի և Բիթլիսի նահանգներու աղգարնակութեան թիւը 1913-ին 642,000 էր, իսկ 1924-ին 575,322, 1927 թ.ին 611,322 կը հաշուեն: Այս երեք թւերը քանի մը տասնեակ ազգաբնակչու տարբերութիւնը միայն ունին: Մարդի կը տարբի մասածելու, թէ այս աճումը չունեցող երկրի մէջ տասնամեայ (1914-1924) պատերազմը տեղի ունեցած չէ, տեղահանութիւնները, կոտորածն ու հիւանդութիւնները իրական ազդեցութիւն մը կատարած չեն:

Մեզի խիստ ծանօթ այդ հողամասի վրա, բացի էջրբում և Երզնկա զաղաքներէն, թուրք ազգաբնակչութիւն մնացած չէ: Այսօր Վանի, Բիթլիսի և Մուշի թրքութիւնը գոյութիւն չունի: Այդ վայրերու մէջ կային 87,000 թուրքեր, որոնց մնացորդ բեկորները ցրուած են թուրքերից գնահատան վայրեր, և անոնց ներկայութիւնը Վան, Բիթլիս և Մուշ զաղաքներու աւերակներու մէջ չենք տեսներ: Միւս կողմէ, անուրանալի է, որ ինչոր պակաս մնացած էր մեծ պատերազմի օրերուն, թրքական և քրտական յարատե ընդհարումներու ընթացքին իր լրումին կը մօտենայ: Այս բոլոր իրաւան տւելները մենք գիտենք: Գիտենք նաև, որ այդ հողամասի ազգաբնակչութիւնը Փիղիքականօրէն չափազանց շատ աղուած է տեղի ունեցող զէպերէն, միայն թրքական տարեգրեթերն ու փիմակագրական տախտակներն են, որ բնաւ ազդեցութիւն չեն յիշեր:

Նոր մարդահամարի քանի մը տւելներն առանձնապէս շատ հետաքրքրական են: Տրապիզոնի նահանգի մարդահամարը 1924-ին Տրապիզոն 383,871, Լազիստան (Ռիզէ) 216,164 և Գիւմրիշխանէ 130,094, գումար 730,129 հոգի կը ներկայացնէ: Իսկ 1927-ի վիճակագրութեան ժամանակ այդ երեք գաւառներէն Տրապիզոն 293,052, Ռիզէ 163,059, Գիւմրիշխանէ 121,907, գումար 578,018-ի կիջնէ: Տարբերութիւնը շատ ակնբախ է, 730,129 (1924 թ.) — 578,018 (1927 թ.) = 152,111-ի պակաս մը:

Ըստ Երևոյթի 1924-ին անհրաժեշտութիւն մը կը ստիպէր թուրքեան Պոնտորը 730,000 բնակչութեամբ ներկայացնել, իսկ 1927-ին այդ անպարտկելի բազմութիւնը 152,000-ով պակսեցնելու հարկադրեցան իջեցնելով թիւը 578,018 գումարի մը, որ այդ նահանգը ունէր 1914-ին, առանց հայերու յոյներու և ուրիշ քրիստոնեաներու:

Միւս կողմէ, դիտելի է, որ Տրապիզոնի, համեմատաբար քիչ աւերած նահանգի ազգաբնակչութիւնը երեք տարւայ ընթացքին, 152,000 բնակիչ կը պակսի, իսկ Մուշի, Բիթլիսի, Վանի, Ալաշկերտ-Բայազետի բոլորովին աւերած շրջանները տարօրինակ «աճում» մը կարծանազրին:

	1924-ին	1927-ին
Վան	51,071	75,193
Բայազետ	45,358	103,062
Մուշ	23,097	90,309
Բիթլիս	60,811	
գումար	180,337	268,564

Տարբերութիւնը 88,227-ի բազմութիւն, որ դրէ շարժումով մը կը բարդէի Հայաստանի անբնակ երկրի 1924-ի ազգաբնակչութեան վրա, որ առանց այդ այ չափապանցած էր: Մինչդեռ 1925-ի սկիզբը պայթեցու Ծէյիս Սալիտի ապստամբութիւնը և անկէ յետոյ այդ վայրերու մէջ քերթը և թուրք արեւմալի ընդհարումները շարունակեցան Բիթլիսի, Սելիւան, Ձիւանի, Բայազետի և Վանի պարբերական բռնկումներով: Անցնող երեք տարւայ կոտորածները, քրտական տեղահանութիւնները, թուրք տարբի կոտորելը քրտերու կողմէ քերտ գանաղան աշխրաթներու սահմանամերձ վայրեր ապաստանելը կարճանաբեր օրը օրին մամուլի մէջ: Դատ բնական պիտի ըլլար, եթէ թրքական մարդահամարը հաստատէր 82,000 մարդու պակսիլը այդ շրջաններէն: փոխանակ աչք ծակող աճում մը յայտարարելու:

Ուրիշ պարագա մը, որ անվիճելի է, կուզայ հաստատելու, թէ այդ վայրերու վիճակագրութիւնը արդիւնք է քանի մը բազմազամներու և դորահամանատարներու հեռակիրներուն, ուրիշ ոչինչ: Որովհետև մենք գիտենք, թէ Բայազետի շրջանի քրտութիւնը ապաստանած է Արարատ լեռը, Ալաշկերտի և Արճէշի շրջանը կեդրոնացած կը մնայ Ձիւանի ձորը, Բուլաշի-Մանազկերտի ջրտարը կը գտնուին Գոստերի և Սիփանի վրա, Սիկոս սահմանի վրա, ոչ մէկ իշխանութեան ենթակայ, Մշոյ և Բիթլիսի քրտութիւնը ապստամբած կը մնայ Նժօ քէիկի ղեկավարութեամբ, Սև լեռան և Սասնոյ բարձրունքներու վրա: Այս կըղզեակներէն դուրս, ամբողջովին երկիրը անապատ է. իսկ այս կըղզեակները մշտապէս անմատչելի եղած են և այսօր ալ անմատչելի են թրքական գիւտորական իշխանութեանց: Հետաքրքրական է գիտնալ, թէ պ. Ժաքարի վիճակագրական մասնագիտութիւնը ինչպէ՞ս իր ձեռքը պիտի երկարէր այդ բարձրունքները, երբ թրքական թնդանօթն անգամ հոն չի հասներ:

Այս ակնյայտի կեղծիքը թողնենք և ուրիշ կողմէ քննութեան առնենք 1927-ի վիճակագրական տւելները, ինչ որ կը վերաբերի Տաճկահայաստանին:

Վիլսընի սահմանագծած ամբողջ Տաճկահայաստանի ազգաբնակչութիւնը, համաձայն վերի ցուցակներուն 913,598-ի կը հասնի: Պահ մը ենթադրենք, թէ պիտի գտնուին միամիտներ, որ հաւատան թրքական «վիճակագրութեան»: (Երևի, այդ ժողովրդի մէջ ալ կը գտնուին շարակամներ կամ տոչտոչներ, որոնք կը հաւատան թրքական կեղծիքին ու միանալով գումարով մը մէկ միլիոն բնակչութիւն կը հաշուեն այսօրւայ Տաճկահայաստանի մէջ): Այդպիսի ըմբռնում մը հիմնապէս պիտի խախտի, եթէ նոյնիսկ թրքական վիճակագրութեան հիմունքով, Վիլսընի Տաճկահայաստանը բաժնենք երկու խոշոր շրջանակի:

Առաջին շրջանակը սահմանագծենք Սարըղամիշէն-Հասան Գալէ-Բիւրակեան լեռներու բարձրունքով հասնինք Մշոյ Ս. Կարապետ և անկէ Տաճրոսեան բարձրունքներով, Վիլսընեան գծած սահմաններով հասնինք պարսկական սահմանը: Այսպիսով արեւելեան Տաճկահայաստանի մէջ կը մտնեն Մուշ, Բիթլիս, Բաւէն, Ալաշկերտ և Բայազետ: Իսկ արեւմտեան Տաճկահայաստանը (աւելի խոշոր Պոնտոսեան շրջանը) իր

մէջ կանէն էրգրում, Երզնկա, Գլխաւիշխանէ, Ռիզէ և Տրապիզոն:

Վերցնենք այդ երկու խոշոր շրջանները առանձին-առանձին իրենց թւական պատկերով: Արեւմտեան Հայաստանը կը ներկայանայ այսպէս. Տրապիզոն, Ռիզէ և Գլխաւիշխանէ 302,276, էրգրում 270,873, Երզնկա 71,985, ընդհանուր դումար 645,134 մարդ:

Իսկ արեւելեան Հայաստանը, որ երեք Հինգերորդը կը կազմէ Վիլսոնեան Հայաստանին, ունի՝ Վան 75,193, Բիթլիս և Մուշ 90,309 և Ալաշկերտ-Բայազետ 103,062 բնակիչ: Ընդհանուր դումար՝ 268,564:

Ինչպէս ընթերցողը կը տեսնէ, հակառակ այն ակնյայտին յաւելման, որ 1924-ի հաշւէ վրայ 82,000 բնակիչ կը բարձրէր 1927-ի թրքական տոմարի էջերուն վրայ, դարձեալ Տաճկահայաստանի մեծ մասը դատարկ կը մնայ: Այս 268,564-ի դումարէն պէտք է Հանել Մուրմարուի շրջանի վերագրած թիւը՝ 58,000-ը, որ միացած է Բայազետի 103,062 դումարին, ինչպէս նաև Բիթլիսի հարաւը, Սասնոյ և Սև լեռան քրդութեան թիւը մօտ 25,000, որ հաշւած կը թւի Բիթլիսի 90,309-ի դումարի վրայ, մինչդեռ այս մասերը Վիլսոնի սահմաններու մէջ չեն իյնար: Այդպիսով, կուսենանք 83,000-ի թիւ մը, որ պէտք է Հանել արեւելեան Տաճկահայաստանի մարդահամարի 268,564-ի ընդհանուր դումարէն և կուսենանք 165,564, նոյնիսկ թրքական հոշակաւոր վիճակագրութեամբ:

Ուրիշ խօսքով Բիթլիսի, Վանի Հայկական մասի ամբողջութեան և էրգրումի նահանգի կէսի (Բասէն, Խնուս, Ալաշկերտ, Բայազետ) սահմաններու մէջ թրքական վերջին մարդահամարով կայ 165,564 բնակիչ: Իրականին մէջ այդ թիւն իսկ կրկնապատկած պէտք է նկատել: Երբ աչքի առաջ ունենանք, որ այդ վայրերու բնակչութեան թիւը 1924-ին 82,000 հոգի պակաս կարճամիակը, քան 1927-ի մարդահամարը և նկատի առնենք բոլոր այն տեղեկութիւնները, որ այդ սահմանամերձ վայրերէն կը ստացուի, ամենայն վստահութեամբ կարող ենք պնդել, որ արեւելեան Տաճկահայաստանը, այժմ, 90,000-էն աւելի բնակիչ չունի, որու 80,000 քրտերն են՝ մեծ մասով կուիք բունած թրքական իշխանութեան հետ: Այդ ամբողջ տարածութեան վրայ թուրք և թաթար տարբը հազիւ Հանի 10-15,000-ի, որու 80%-ը կովկասեան թաթարներն են:

Որքան սահմաններէն ներս կը թափանցենք, այնքան աւելի անորոշ կը դառնան թրքական տեղեկութիւնները: Երբ աչքի առջև կուսենանք արեւմտեան Տաճկահայաստանի (Տրապիզոն, էրգրում, Երզնկա) մարդահամարը, կը տեսնենք, որ այս մասի մէջ աւելի մեծ խնամքով բազմապատկած է ազգաբնակչութեան իրական թիւը, դիտարարաբար այն պատճառով, որ թրքական իշխանութիւնը Տաճկահայաստանի մէջ, էրգրումէն դէպի արեւմուտք միայն թրքական, թէև ցանցառ տարբ մը ունի, որպէս յենարան: Առանձին հոգատարութեամբ քրտական վիճելի վայրերը պակաս նշանակած են, իսկ այն վայրերը, ուր թուրքերը նկատի առնելիք բազմութիւն մը ունեցած են 1913-ին, թրքական վիճակագրութիւնը պատերազմէ առաջ եղած քանակութիւնը վերականգնած է, հայերը՝ դուրս հանելով: Օրինակ, Հէքեարին, որ զուտ քրտաբն վայր կը նկատուի, 1924-ին 31,568 բնակիչ ունէր, իսկ 1927-ի

վիճակագրութեամբ կրկնէ 25,016-ի: Սակայն, էրգրում, Երզնկա, Տրապիզոն, Ռիզէ և Գլխաւիշխանէ միասպաղաղ գանդած մը, 645,134 բնակիչ իրենց տոմարներու մէջ կը ծրարեն:

Այս չափազանցութիւնը ակնյայտին կերեւնայ, երբ էրգրումի նահանգը իր նախկին սահմաններով նկատի առնենք և քանի մը թիւեր բաղադատենք: էրգրումի նահանգը 1913-ին կը հաշւէր 630,000 բնակիչ, որմէ երբ Հանենք Հայերու, յոյներու և եգիպտացիներու թիւը: 230,000, կը մնար 400,000 բնակիչ: Այս մնացորդ ազգաբնակչութեան թուրքերը 240,000 էին, ժերտներ (քուրտ, Ջաղա և Ղըղլըրաշ) 130,000, իսկ մնացորդ 30,000 պարսիկներ և ուրիշ ազգեր կը հաշւէին: Այս թւի մէջ կը մտնէր Ալաշկերտի, Բայազետի, Բասէնի և Խնուսի քրտութիւնը, մօտ 80,000 հոգի, որ մենք նկատի առինք արդէն արեւելեան Տաճկահայաստանի մասին մէջ. երբ այս դումարը Հանենք էրգրումի 400,000-էն-80,000=320,000 բնակիչ կը մնայ: 1913ին 320,000 բնակիչ ունեցող էրգրումի և Երզնկայի շրջանը, 1927-ին, պատերազմի աւերմունքէն ու կոտորածներէն յետոյ, կը դառնայ 414,843 բնակիչ (էրգրում 270,873 + Երզնկա 143,970). մինչդեռ այդ սահմաններու վրայ տեղի ունեցող պատերազմի և անոր կիրարկած մեթոտներու հետեւանքով 1914-ի ազգաբնակչութեան առնական 50%-ը բնաջնջած կարելի է հաշւել: Այսպէս, իրականութեան քիչ մը մօտիկ պիտի ըլլար, եթէ էրգրում-Երզնկայի շրջանի մէջ 170,000 բնակչութիւն հաշւուէր. իսկ Հայկական մասի մէջ, առ առաւելին 130,000: Նոյն բանը կրեանք ըսել նաև Տրապիզոնի Հայկական շրջանի մասին:

Արեւմտեան Տաճկահայաստանի մասին պէտք է շեշտել նաև այն պարագան, որ Վիլսոնի սահմանադրումով բաժնուած գաւառներու թրքական խիտ ազգաբնակչութիւնը կը մնար սահմանագծի արևմտեան կողմէ, իսկ Հայկական մասը, պատերազմի ժամանակ դրաւած մնաց երկար ժամանակ, մնացորդ ազգաբնակչութիւնը աւելի քան նօսրացաւ դաղթի և անօթութեան պատճառներով, ու շատ բնակիւնորէն այդ հողամասերն ալ մեծ մասով դատարկեցան, թէև ոչ այն չափով, որքան կը ներկայացնէ արեւելեան ամբողջ Տաճկահայաստանը:

Թուրքիա կամայական ու կեղծ վիճակագրական տւեալներով կուզէ լեցած ցոյց տալ, գոնէ, Տրապիզոնի, Երզնկայի և էրգրում քաղաքի շրջանը: Այս կամայական թւերը ինքնին արժէք մը չեն ներկայացնել: Երբ կը պակսին բոլոր տեսակի միջոցներ, ճշտորէն հաշուու այդ վիճելի հողամասի ազգաբնակչութիւնը, մեզի կը մնայ պնդել, որ Տրապիզոնի Հայկական շրջանի սահմաններու մէջ ցոյց տրւած 302,276 բնակչութիւնը կրկնապատկած է, եթէ աւելին չըսենք: Որով, Տրապիզոնի և էրգրումի շրջաններու մէջ կարելի է հաշւել մօտ 270,000 բնակիչ (էրգրում-Երզնկա 130,000, իսկ Տրապիզոն 140,000): Այս ազգաբնակչութիւնը բաղկացած է 150,000 թուրքերէ և 120,000 լազերէ, ժերտներէ և չէրքէզներէ:

Այս է մօտաւոր վիճակագրական պատկերը՝ Տաճկահայաստանին, Թուրքիոյ իշխանութիւնը արեւելեան մասի մէջ միայն 10-15 հարաւ թուրք ունի իր պատանդան, Տրապիզոն-էրգրում շրջանի մէջ, հաւանա-

բար, 150,000: Իսկ Բրբալիան իշխանութեան դէմ ապստամբած տարրը (բացի հայերէն) արևելեան մասի մէջ 80,000 զինուորէն էն, իսկ արևմտեան մասի մէջ 100-120 հազարի հասնող քրտեր-չէրքէզներ ու լազեր: Այսպիսով, հայ ժողովուրդը այդ հայրենիքի տէրը կը հանդիսանայ, ոչ միայն պատմականորէն, այլ և ազգապատգական վիճակի մէջ, անհամբեր կայնած կը մնան Կովկասի և Ռուսաստանի սահմաններու մէջ: Նոյն այդ նահանգներէն, մօտ 150,000 հայ ցրած է աշխարհի չորս կողմը և կը սպասէ հայրենիքի ազատագրման: Այսօր, նոյն հայրենիքի հարազատ դաւադներ պէտք է նկատուի և այդ վայրերու բնակիչ զինուոր տարրը, մօտ 150,000 բնակիչ, որ ազատագրութեան դրօշակը պարզած է այն բարձունքներու վրա, ուր

երէկ հայ արծիւները կը մարտնչէին: Տակաւին չեմ խօսեր հայկական այն հոծ զանգւածներու մասին, որոնք վտարած են Թուրքոյ ուրիշ մասերէն և Հայաստանը կը նկատեն իրենց հայրենիքը, բնակութեան վերջնական կայանը:

Այս թւական տեսանքը կը կանխորոշեն պատմութեան վիճիկը: Տաճկահայաստանը երկար չի կրնար մնալ Բրբալիան դրօշին տակ, միայն սեխներու ուժով: Հո՛ն, հայն ու զինուոր եղբայրացած՝ վճռական կեցւածք ունին վերածննդ ազատութեան և քաղաքակրթութեան ճանապարհին վրա: Կեղծ մարդահամարներով, խարդախած թիւերով կարելի չէ փոխել պատմութեան ընթացքը:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

# Խ Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն, Բ Ա Օ Ս Ը

(15-րդ համագումարի առթիւ)

Մի քանի օր ստալ Մոսկայում իր աշխատանքները վերջացրեց համամիութենական Կոմունիստական Կուսակցութեան 15-րդ համագումարը, որ առիթ է տալիս մի շարք խորհրդածուծութիւնների:

1921թ. մարտ 8-ին, 10-րդ համագումարին տւած իր քաղաքական գիւղում մէջ Լենինը ալայպս էր ընտրուած այն ժամանակայն ամենէն գլխաւոր ու առաջնակարգ քաղաքա-տնտեսական հարցը. «Պատերազմից ճնշւած՝ մենք չէինք կարող մեր ուշադրութիւնը կենտրոնացնել այն բանի վրա, թէ ինչպէս հաստատենք տնտեսական փոխարարութիւններ բանւորական պետական իշխանութեան միջև, որն իր ձեռքն ունի անյաբի քայքայած խոցոր արդիւնաբերութիւնը, և թէ ինչպէս համակեցութեան ձևեր գտնենք մանր հողագործների հետ, որոնք, քանի կը մնան իրրի հողատարձներ, չեն կարող սարքել՝ առանց մանր արտտնտեսութեան ապահովելու շրջանառութեան որոշ թուութեամբ»: Եւ որովհետև արդիւնաբերութիւնը խորտակւած էր և գիւղատնտեսութիւնը քայքայւած համայնապարական սկզբունքների կիրառման հետեանքով. ապա նրանց փրկութեան միակ միջոցը մնում էր հրաժարել այդ ձևից ու նորից վերադառնալ գէպի հին՝ դրամատիրական սկզբունքները: Այդպէս էլ եղաւ. երբ օր յետո՛ւ, մարտ 11-ին, ընդունեց նոր տնտեսական հաղահախանքաբիւր, որը նահանջ էր բրնկերային արտադրութեան ու քայքայման կիրքերից դէպի առ ու ծախիւր և դրամի շրմանառութիւնը»: Մէկ տարի հազիւ անցած, 1922թ. սկզբին, նոյն Լենինը յայտարարում էր, թէ «բաւական է ինչքան հասնելիցինք. մենք արդէն չպիտեցինք մեր ու դրամատէրերի ուժերը և՛ նոր գիտումներ չենք ամի նրանց»:

1925թ. ապրիլին կայացած 14-րդ խորհրդաժողովի ստալ դրւած էին ճիշտ այդ երկու հարցերը՝ ինչպէ՞ս լուծել բանւորի և գիւղացու փոխարարութեան խնդիրը նոր տնտեսական քաղաքականութեան հետեանքով ստեղծւած պայմաններում. արզե՞օք դնալ տնտեսական նոր գիւղումները: Հարց է ծագում. ի՞նչն էր հարկադրում բոլշևիկներին արժամտել գիւղի և քաղաքի փոխարարութեան և «Նոր-Նէպի» խնդիրը: Նոր տնտեսական քաղաքականութիւնը բաւական ուժգին զարկ տեց երկրի տնտեսական վիճակի բարձրացման, որը կատարեց ի հաշիւ գիւղացիութեան և նախկին կառավարութեան թողած հսկայ ժառանգութեան: Հնարաւորութեան ստեղծելով գիւղացու համար արդարացիներու իր տնտեսութիւնը՝ կառավարութիւնը,

առանց ոչինչ տալու նրան, գանձեց հսկայական հարկեր, որով և վերականգնեց քաղաքի արդիւնաբերութիւնը: Ի հարկէ, գիւղը չէր կարող երկար մնալ կթան կովի դերում, և, ի վերջոյ, ներկայացրեց կառավարութեան նաև քաղաքական պահանջներ: Ու գուզնթացաբար, մի շարք տեղերում տեղի ունեցան գիւղացիական ապստամբութիւններ, ապա սկսեց շրջանային ու գիւղացիական կուսակցական պայտօնէութեան մի շտեմնւած կոտորած: Իշխանութիւնը ինքզինքը զգաց փակուղու մէջ, մանաւանդ որ էին բուրժուազայի թողած հարստութիւնն էլ արդէն սպառնում վրա էր և նոր միջոցներ էին պէտք արդիւնաբերութեան վերելքը շարունակելու համար: Արտասահմանը վարկ չէր տալին, ներսում էլ հարկատուն էր ըմբոստացել: Ահա այստեղ էր, որ զգաւեց, թէ արդիւնաբերութեան դրաժքեան արտադրումը մեծապէս կայարած է գիւղատնտեսութեան անման և արտադրող գիւղացիութեան վիճակի բարեփոխման հետ: Իսկ այս վերջինի համար հարկական էր նախ հաստ ներմուծել գիւղացուն, որ իրեն հնարաւորութիւններ կը տրւէին զարգացնելու անտնտեսական տնտեսութիւնը և տէր լինելու սեփական աշխատանքի, երկրորդ՝ որ ինքն էլ բաժին ունի իշխանութեան մէջ: Այս պահանջները ընդունելով՝ Կոմկուրը ոչ միայն չէր կարող մնալ Նէպի այդ ժամանակայն գիւրքերում, այլ և ստիպւած էր սեւիլ խորացնել ու նորանոր սկզբունքային սիւնայինները դնալ:

Եւ, իբրք, կառավարութիւնը պարտաւորեց իսպառ արժատախիլ անել գիւղում ռազմական կոմունիզմի մնացորդները և քանդելով եղած ընտրութիւնները՝ նորը նշանակել, որի ընթացքում գիւղական և շրջանային խորհուրդները մէջ անցան քաղաքացիական անկուսակցականները: Նաև որոշեց լայնացնել անկուսակցական հնարաւորութիւններն ու յարաբերութիւնները ինչպէ՞ս գիւղի ներքը, այնպէս և գիւղի ու քաղաքի միջև: Յետոյ, գիւղացիական արժամութիւն սրբեց կապալով վերցնելու պետական ազատ հողերը և առանց սահմանափակումի վարձել գիւղի աշխատանքները՝ մշակութիւնը: Պարզ է, որ մանկ իրաւունքներից օգուտնու էր ոչ թէ գիւղացիութեան այն քառասուն տոկոսը, որը ձի անգամ չուճէր, այլ ունեցող տարրերը: Իսկ մասնաւոր դրամագիւղի դէմ որոշեց այլևս վարչական միջոցների չդիմել, քանի որ այսուհետև շարտութեան և մասնաւոր դրամագիւղի փոխարարութիւնները դատաւորում են ազատ մրցման հիմունքներով»: Հէջդ այն, որ մասնաւոր դրամագիւղի առև՛ն քացւում էին գիւղի

դունքը, բաւական էր, որ նա վտանգաւոր դաւնար պարկետարեալտան գիտատուարի համար:

Կուսակցական գանձաւոր գրում էր գիւղի և քաղաքի դրամատիրական տարրերի անձան վտանգը: Բայց ղեկավարները հանգստանում էին՝ յայտարարելով, թէ վախենալու ոչինչ չկայ, քանի որ իշխանութիւնն ու տնտեսական զբաւաւոր միջոցները իրենց ձեռքումն են: Ինչ վերաբերում է պայքարի միջոցներին, պէտք է շարունակել ընկերավարութեան կառուցումը՝ նոր պայմաններում, զգուշացնելով ձեռք ձեռքի միջոցով թանկութիւնը դասակարգի ղեկավարութեամբ: Առաջին հերթին պէտք է դաշն կապել գիւղի միջակի հետ, ապա ախառել աւելի խորացնել համագործակցութիւնը (յօսպիւրացիք ու տարածել թանկերը: Եւ որովհետեւ մէկ տարի առաջ, լենինեան կողմ միջոցով կուսակցութեան մէջ ընդունել էին 300,000 թանկեր, ապա ժամանակն է, որ դրամատիր դունքը բացւեն նաև ղիւղացու սոցիւ: Այսպիսով, մի շարք տնտեսական, «կուլտուրական», քաղաքական-վարչական միջոցներով յոյս ունէին ամբարնդել կայք բանուրի և ղիւղացու — քաղաքի և գիւղի միջև: Ահա այս խնդիրն էր, որ դարձաւ Կոմունիստական կուսակցութեան յետագայ քաղաքականութեան առանցքը:

Այն ժամանակ արդէն կուսակցութեան մէջ նկատու էր երկու հոսանք: Մէկը կողմնակից էր, որ այդ որոշումները իրագործեն կենդի մէջ: Այդ ուղղութեան տեսարան Բուխարինն այնքան հեռու գնաց, որ նոյնիսկ յայտարարեց՝ «հարստացէ՛ք՝ նշանաբանը, որից, սակայն, խելոյն հրատարակեց, երբ Պրոլետարույում ակնմթը քաշեցին: Միև ուղղութիւնը գտնու էր, որ «Լուր-Նէպը» արակցելու է երկրում դրամատիրական յարաբերութիւնների զարգացման, և կոմունիստները «երեսները դէպի գիւղ» գարձանելով՝ հետնում են յենիհիմարի՝ ոտնահարելով ընկերավարութեան դիմող բանուրութեան շահերը:

Բայց այս վէճի արժանները անհամեմատ աւելի խորն էին: Ինչ 1921թ. Նէպը յայտարարելուց յետոյ, կուսակցութեան մէջ մտքը «բանուրական ընդդիմադիրների» ղեկավարութեան տակ մեղադրում էր լենինին ընկերավարութեան ուղիքը շեղելու մէջ: Դրան է պատասխան լենինը յայտարարեց, որ Նէպը նաևնմջ է և նոր պայմաններում էլ հնարաւոր է «մեր տնտեսութեան ընկերավարական պատուանդանը կառուցել ղիւղացիութեան հետ միատեղ և դանուր դասակարգի ղեկավարութեամբ»: Լենինի այս թեզին Տրոցկին հակադրեց իր տեսակէտը, թէ բանուրութեան կողմից ղիւղացիութեան ղեկավարումը և ընկերավարութեան պատուանդանի միատեղ կառուցումը անիրագործելի թանք են, քանի որ երկրի քաղաքական կենտրոնը կընթանայ բանուր դասակարգի և ղիւղացիութեան մեծամասնութեան միջև ծագելիք թշնամական բաղիւմների մէջ, որոնք կարող են յուժուժ ստանալ միայն համաշխարհային յեղափոխութեան ասպարիզում:

Սակայն, արժէ մի փոքր աւելի մտից ծանօթանայ կոմունիստական կուսակցութեան ծոցում առաջացած ընդդիմադիր հոսանքին:

1-րդ համադրումում, Ստալինը յայտարարելով, որ ներկայ իրենց և ընդդիմադիրների տեսակէտները տարբերում են բոլոր կէտերում, հետեւել մեղադրանքներն էր ուղղում ընդդիմադիր բրոկին: —

1. Ընդդիմադիր բրոկը միտում է ընկերավարութեան յղթական կառուցման հնարաւորութիւնը Ռուսաստանում: 2. Հերքելով բանուրութեան խիսական ղիկատուարի գոյութիւնը՝ ընդդիմադիրների կուսակցութեանը մեղադրում են տէրմիտորի մէջ: 3. Ղէմ լինելով բանուրների և միջակ ղիւղացիութեան միջև եղած գործակցութեան՝ նրանք առաջարկում են քանզի այդ դայիքը: 4. Երկրով ընդդիմադիրների այդ երեք տեսակէտներից՝ Ստալինն այն եզրակացութիւն է հանում, որ այսու բանուրութեան ոչինչ չի մնում, բայց թէ իշխանութեան մէջ իր տեղը ղիջել մէկ ուրիշ:

5. Ընդդիմադիրները հակառակ են օգնելու ընդդէմ իմպերիալիստների մղած զարուսթիւնի յեղափոխական շարժումներին: 6. Նրանք չեն ընդունում ընդհանուր բանուրական ճակատ ստեղծելու խաղաղ եղանակների կիրառումը և խանդարում են միջնադարին բանուրութիւնը աստիճանաբար կոմունիզմի կողմը քաշելուն և 7. խախտելով լենինեան կուսակցութեան միութիւնը՝ ընդդիմադիրները գտնուում են նոր կուսակցութիւն կազմելու ուղիի վրա:

Վերջում, Ստալինը աւելացնում է, որ եթէ ընդդիմադիրները հայտութեան եզր են փնտրում, ապա պարտաւոր են հիմնապէս հրաժարուել իրենց բոլոր տեսակէտներից՝ առանց վերապահուճելուր ենթարկելով կուսակցութեան բոլոր կարգադրութիւններին:

Այս մեղադրանքներին ու առաջարկին է պատասխան հանդէս է քալիլ ընդդիմադիր պարագլուխները կամենել, որը մի կողմից խնդրում է համագործակցի մոտանալ եղադր և օդի մէջ չթողնել իրենց պարզած հայտութեան ձեռքը, իսկ միւս կողմից յայտարարում է, թէ առանց ստատաններ ինքնաբերու չհամադրում մարի բոլոր որոշումներին՝ նրանք, որպէս բուլկիներ, չեն կարող հրաժարուել իրենց տեսակէտներից: Սանահանդ որ երկու տարւա, պատմութիւնը ապացուցի իրենց մի շարք տեսութիւնների համարութիւնը: «Մի՞թէ անգլեալուսական կոմիտեն անփառուական մահման չունեցաւ, առանց արդարագնելու նրա հետ կապուած յոյսերը: մի՞թէ չիխանկա յետախուսութեան ընթացքը յայապուշեց կոմիտեան ձախ և այ թեւերի վրա դրած մեր յոյսերի սին լինելը, մի՞թէ անտեսական ենք ներկայ միջնադար չի ստատում, թէ ինչպէս ղիւղական բուճնըները խանդարում են պետական ծրագիրների իրականացման: մի՞թէ ապրանքային սովի ինքիլը նորից չի՞ սարձել մեր տնտեսական հիմնական մտահոգութիւնը: Եւ յայտարարելով, որ երեք իրենց բանուրում նստած այն ընկերների հետ են, պահանջում է ազատել նրանց և կուսակցութիւնից ղուրք արած ընկերներին յետ դնուանել:

Սակայն, ոչ Ստալինի ամբողջամբ մեղադրանքները, ոչ էլ կամենի երկերեսներ յայտարարութիւնները չեն տալիս ընդդիմադիր շարժման լրիւ պատկերն ու պատմութիւնը: Եւ քանի որ իրենք բուլկիներ, միջնադար կերտուից, միջոց երկու տարւայ պատմութիւնն են մէջտեղ բերում, մենք էլ սահմանափակելով այդ ժամանակաշրջանով՝ տեսնենք, թէ ինչպէս է սկսուել ու զարտագի այդ պայքարը՝ 14-րդ համադրումից ի վեր (1925թ. ղեկտեմբեր):

Ընդդիմադիր թէ ոչ ընդդիմադիր, կամենն թէ Ստալին՝ ինչպէս ուղում են հակադրն միմեանո իրենց տեսակէտները, ինչպէս ուղում են մեղադրն միմեանց, մնում է անհերքելի, որ նրանք տեսակէտների հիմնական տարբերութիւնն այն է, թէ ենալաւոր է արդեօք ընկերավարութեամ յաղթանակը մի երկրում: Այստեղից է ծագում Կոմիտեի ամբողջ տաղնապը: Մի տարի ստալի Կոմիտեի միջոցով՝ Տրոցկին յայտարարում էր, թէ ինքը Ստալինի մեծագոյն սխալը համարում է, նրա՝ մի երկրում ընկերավարութիւն կառուցանելու զարգախարը — մի քաղաքար, որ հերքել էին Հէնց ղիտական ընկերավարութեան հիմնադիրները՝ Մարքսն ու Էնգելսը՝ գտնելով, որ ընկերավարութեան յաղթանակ էր անանելի երկրում անհնարին է, թէ ընկերավարութեան յաղթանակը համար անհրաժեշտ է, որ միաժամանակ յեղափոխութիւն ծագի մի շարք քաղաքացած երկրներում: «Կոմունիստական յեղափոխութիւնը ոչ միայն ազգային կը լինի, այլ միաժամանակ տեղի կունենայ բոլոր քաղաքային երկրներում այսինքն՝ Անգլիայում, Փրանսիայում, Ամերիկայում և Գերմանիայում: այդ երկրներից իւրաքանչիւրում աւելի արագ կամ աւելի անդադ կը զարգանայ՝ նախով, թէ այդ երկրներից որի մէջ աւելի է քաղաքացած արդիւնաբերութիւնը, որտեղ է աւելի հարստութիւն կուտակուած և ուր կան աւելի զգալի քանակութեամբ արտադրողական ուժեր... Այդ համաշխարհային յե-



զարկախուժութիւն է, ուստի և համաշխարհային ասպարէզ կուենանայ, գրում էր Էնդելսը՝ հէնց Ստալինի մէջը-մերումով: Յետագայ մարքեմոսներից Լենինը, որի մեծութիւնը որ աշակերտները գտնում են նրանում, որ կրթեց գերի չի եղել մարքեմոսի տառին և չի ընդունել մարքեմոսը որպէս դասանալը — հերքում է այդ տեսութիւնը՝ «այսպէս չէր ճշտել»:

Լենինը նոյնպէս համարել էր, որ Էնդելսի ասածները ճիշտ են, միայն թէ էր ժամանակաշրջանի նախամեծարական դրամատիւրգիական պայմաններում, իսկ մենաստիճական դրամատիւրգիական և բանարական յեղափոխութեան պայմաններում ճիշտ չէ: Լենինը հնարաւոր է համարում, դրամատիւրգիական նոր պայմաններում, ընկերվարութեան յաղթանակը մի երկրում:

Տրոցկին հակառակ կարծիքի է. «Ուրիշներին չլսալուով, սառն է նա, մենք սկսում և շարունակում ենք այդպէսը ազգային հոյի վրա, այն լիակատար հւատալով, որ մեր նախաձեռնութիւնը խթան կը լինի նաև միւս երկրներում այսպէր սկսելու, իսկ եթէ այդ տեղի չունենայ, այնչափ է, դուր է կարծել, — այս են վկայում և պատմութեան փորձը, և տեսական ըմբռումները, — թէ, օրինակ, յեղափոխական Ռուսաստանը կը կարողանայ դիմանալ պահպանողական Եւրոպայի հանդէպ, կամ ընկերվարական Գիբրալթիսը կը կարողանայ մնալ մեկուսացւած դրամատիւրգիական աշխարհում»: 1922 թւին խորհրդային իշխանութեան հնչեց տարւայ փորձից յետոյ, Տրոցկին բանտարական կուսակցութեան հինգ առաջալ կանգուն մնալը վերագրում է բանտը դասակարգի հակայական կարողութեան: «Մակային, աւելցնում է նա, պաշտպանելով որպէս պետութիւն և կանգուն մնալով քաղաքական և ռազմական իմաստով՝ մենք ընկերվարական հասարակութիւն ստեղծեցինք ուսիճանին չենք հասել և նոյնիսկ չենք մտնել»: «Նա որովհետև եւրոպական միւս երկրներում բուրժուազիան է տիրապետող, Ռուսաստանը ստիպւած է, անտեսական մեկուսացումից դուրս գալու համար, համաձայնութեան գալ դրամատիւրգիական աշխարհի հետ, որը կարող է միայն բուժել անտեսական այս կամ այն վէրքը: «Ըսկ ընկերվարական իսկական վերելքը Ռուսաստանում հնարաւոր կը լինի այն ժամանակ, երբ բանտրութիւնը յաղթանակ տանի Եւրոպայի կարեւորագոյն երկրներում»: Կոմիտեների վերջ իջւած ժողովում, վերլուծման ենթարկելով միջազգային տնտեսութիւնը, Տրոցկին նորից յայտարարում էր, որ միանգամայն սին ռ դուր չունք է մէկ ասանձին երկրի տնտեսական ու քաղաքական բախտին մօտենալ՝ անջատելով նրան համաշխարհային ամբողջական տնտեսութեան փոխազդեցութիւններից. անհասարակապի գարգւցման օրէնքը ամբողջովին ուղղւած է մէկ երկրում ընկերվարութիւն կառուցանելու տեսութեան դէմ:

Այսպիսով, մէկ երկրում ընկերվարութիւն կառուցանելու հնարաւորութիւնների, ձևերի և միջոցների շուրջն էր, որ սկսեց պայքարը 14-րդ համազումում: Բայց զգալուութիւնները հետևանք էին նախ՝ մէկ կողմից այն դժարութիւնների, որոնք առաջացան երկրի ներսում մասնատրական ու ընկերվարական փորձերի բաղխումից, և միւս կողմից՝ արտաքին ճակատում կրած պարտութիւնների ու յուսախաբարութիւնների:

14-րդ խորհրդաժողովում արւած նոր նահանջները վերջնականապէս դիմակագեծ արին Կենտ.Կոմիտէին՝ օրը ցիպեցնելով ընկերվարական ինքնարութեան գործունէան հեղեանք: Այդ բանը չլրիւրաց գանձումների աչքից. և, առաջին հերթին, կուսակցութեան գիտակցի խաւերը ըմբոստացան այն դրութեան դէմ՝ պահանջելով, որ ամեն ինչին տրի իր իսկական անունը: Ահաջանվելու տուրը եղաւ Լենինգրադի շրջանային հարիւրազարտեց կազմակերպութիւնը յանձին իր պատգամաւորների 14-րդ համազումարում: Ժողովում դրանց միացան և ուրիշներ, որոնց մէջ՝ Լենինը

այրին, Կամենևը, ելեմտական կոմիտար՝ Սոկոլնիկովը և ռազմական կոմիտարի օգնական՝ Լաշևիչը: Ի՞նչն էին քննադատում լենինը քաղաքները Կենտկոմի պաշտօնական ղեկուցանող Ստալինի կողքին բեմ հանելով երկրորդ գեկուցող՝ Զինովիևին:

1. Քանի որ երկրում դոյութիւն ունին կոնցեսիաների և կապալի դրութիւնները և տրբում է ազատ առևտուրը, քանի որ պրոլետարական իշխանութեան կողմից վաւերացւած է «դրամատիւրգիական արտաութիւնը» և քանակաւ միլիոն գիւղական անհատական տնտեսութիւնները շուկայի միջոցով կապւած են պետական արդիւնաբերութեան հետ, ապա, ուրեմն, չպէտք է նշւել չի՞թէլ ընկերվարութեան հետ, որովհետև բանտրական պետական կողմից թոյլատրւած և նրա հակաշուքին ենթարկւած դրամատիւրգիւնը նոյնպէս դրամատիւրգիւն է՝ պետական դրամատիւրգիւն: Պարզ է, որ ուր կայ դրամատիւրգիւն՝ մասնատրական թէ պետական, այնտեղ կան և շահագործման բոլոր եղանակները:

2. Գիւղին արւած նոր գիշումները հնարաւորութիւն են աւել անելու գիւղի բուժնցքին, և կուսակցութիւնը՝ շտեմնելով դրանից առաջացող վտանգը՝ ոտահարում է գիւղական աղքատների շահերը՝ այդպիսով խրախուսելով գիւղի դրամատրական տարրերին և աղքատների վրայով ձեռք է մեկնում միջակեր. մի բան, որ նոյնպէս իրտս վտանգւոր է:

3. Կուսակցութեան անգամների 60%-ը ոչ բանտրական տարրերի է, հետևաբար, կուսակցութիւնը դադարել է բանտրական լինելուց: Պէտք է իր շահը բանտրութեան մեծացնել կուսակցութիւնը: Ի՞նչ դէմ է բանտրութեան մեծամասնութեան կուսակցութեան մէջ առնելուն, նա կորցրել է հատուր դէպի այդ ոտքը:

4. Կուսակցութիւնը չի կարող յաղթանակ ընդդէմ դժարութիւնները, քանի որ երկրից տնտեսապէս և տեխնիքապէս շատ յետամնաց է, և կազմութիւնը կարող է փրկել միմիայն միջազգային յեղափոխութիւնը:

5. Իւրը նոր գիշումներն արւում են միայն երկրի դրամատրական տարրերին՝ աշակցելով այդ տարրերի գարգացմանը:

6. Սնունդի փոքր շպէտք է ստուան ջարդի արդիւնաբերութիւնը և բանտրի շահը: Պէտք է առաջին հերթին պարկ տալ երկրի ճարտարաւեստին:

7. Կենտկոմը ճարգանահատում է Եւրոպայի բանտրական որոշ կազմակերպութիւնների և երևոյթների խորհրդային երկրի օգտակար լինելու շուքի:

8. Օղիթ թոյլտուութիւնը իրտս բացասական է անորդաւանում ժողովրդի և, մասնաւորապէս, բանտրի կենցաղի վրա: Երկրում անում է սրիկաների, պրոնիկների և անապատան երեխաների քանակը:

9. Տնտեսական ճակատում կրած կորուստներն ու անյաւորութիւնները ընթանում են ճիշտ կուսակցութեան ուժերի վերազնահատման ուղիով, երկրի ընկերվարական հասունութեան վերազնահատման դժով և պետական տնտեսութեան կողքից ամբողջ ժողովրդական տնտեսութեան այժմ իսկ ղեկավարելու կարելիութիւնների վերազնահատման առաջադրումով:

10. Թէ կուսակցութեան և թէ պետական մեքենայի մէջ տրբում է բիւրոկրատիզմ: Պրոլետարոյի մի քանի անդամների վրա (Տրոցկի, Զինովիև, Կամենև) ճնշում է գործադրւում, և կուսակցութեան մէջ նկատւում է մի քանի անհատների միահեծանութեան ձգտում:

Ինչքան էլ որ ճշմարտութեան մօտ լինին այս նկատողութիւնները, բայց և այնպէս՝ համազումարի մեծամասնութիւնը գտաւ, որ կենտկոմը իր քաղաքական և կազմակերպական ուղին տարել է շատ ճիշտ: Դրա շնորհիւ Ռոքորդային Միութիւնը ունեցել է խոշոր յաջողութիւններ արտաքին ճակատում՝ մի շարք երկրների կողմից ճանաչելով, առևտրական նոր դաշնադրերի կնքումը, կոնցեսիաների աւելանալը և արտաքին առևտրի ծաւալումը. ներքին ճակատում ստեղծւել է կայուն պետական նախահաշիւ, աշխատավարձը

բարձրացել է, արդիւնատեղիքներն ու զիւղանտեսութիւնը բարձրանում են, անում են ընկերվարական տարրերը երկրի տոլոլդրական տնտեսութեան մէջ ամբարցել է կայւր բանտրի է զիւղացու միջև, ապահովել է բանտր դասակարգի ղեկավարութիւնը, մեծացել է համագործակցականի նշանակութիւնն ու գերը...

Պատգամաւորներից 65 հոգի պայման դրին, որ իրենց ձայն կը տան բանաձեռն միայն այն դէպքում, երբ նրա մէջ վը մտցան հետեւեալ փոփոխութիւնները:

1. Այն կէտում, որ խոստում է զիւղի շերտաւորման, աղբատների կազմակերպման, բուռնաց վտանգի դերազնահատման և միջակի դերի թերազնահատման մասին պէտք է աւելացնել, որ կրատաւորական փոխարարների թիւների ամսան հետ կուտակութեան մէջ ներք է սողոսկում և նշլի բացասական կողմերը քաղաքիւրու ձգտումը:

2. Աւելացնել մէկ կէտ, որ, շերտաձեռն վնի այն հասանքի վնասակարութիւնը, որը աշխատում է վարչադպրոց անկարգերով դիտելով նշվել, թերազնահատել զիւղի դրամատիրական տարրերի դերը և լռել դասակարգային պայքարի մասին:

3. Բանաձեռն հանել այն կէտը, որ յիշատակում է, թէ կուտակութեան մէջ կան ընկերվարութեան կառուցման շահատարացող խմբեր:

4. Աւելացնել մէկ կէտ, որով յանձնարարում է նոր կենտրոնի միջոցառումները տանել այն ուղղութեամբ, որ մտ ապագայում կուտակութեան անկամները մեծապէս մասը լինեն բանտրներ:

5. Բանաձեռն որոշակի պարզել ներկայացուցական դեմոկրատիայի խնդիրը և երաշխաւորել խօսքի ու ընտրութիւնների ապատութիւնը:

Այս առաջարկները չընդունեցին, և բանաձեռն դէմ զեւարկեց համապատասխան 15%-ը (չխխարագայէս, լենինգրադցիները): Աւելորդ չէ յիշատակել նաև, որ կատարող յարձակումներից կենտրոնը խոճապի էր մասնակց և աշխատում էր զիւղանտեսութեան հարցում: Իսկ երբ ակնարկ եղաւ, թէ Պոլիտբիւրոն ուզում է խիստ միջոցների դիմել, յոսպեց հանգամանել ընդդիմադիրներին, որ նման յոսպութիւն չեն անի, քանի որ անհար է երկիրը ղեկավարել առանց կուտակութեան կողմից ճանաչում ղեկավարների (Տրոցկի, Կամենև, Չիւռովի և այլն):

Պէտք է շնչունի նոյնպէս, որ 13-րդ համադրումարում ընդդիմադիրների բուրդ դեռ կազմակերպւած չէր: Սակայն, ազգասնանք արւած էր: Այդ բուրդ կազմելու առաջին փորձը արւեց 1926թ. ապրիլին ընդհ. ժողովի ժամանակ: Իայց այսուհի Կամենևն ու Տրոցկիին համաձայնութեան չեկան: Թաւիկը դէմ էր Տրոցկուհ, որովհետև նա ըննարարում էր անցեալ տնտեսական քաղաքականութիւնը (որի ղեկավարը Կամենևն էր), երկրորդն էլ համաձայն չէր Կամենևնին, որը զիւղի շերտաւորումը որոշ չափով ճարտարաբանաբան անկախ էր դնում: Իսկ յուլիանան ընդհ. ժողովում բուրդ արւեցն ձևականորէն կազմում էր: Այստեղ Չիւռովը զանում էր, թէ Տրոցկին իր «Հոկտեմբերեան Դասեր» զբըւում ճիշտ էր նախագրուցանում, — ինչպէս ցոյց տանց ղեկավար Փրակայի բնաշրնումը, — բանտրական գծից շերտաւոր և ղեկավարող մեքենայի սպանուալից չափերով անկուր վտանգից: Տրոցկին էլ խոստովանում էր, որ կուպիտ սխալ է եղել իր կողմից այդ շերտանները Կամենևնին և Չիւռովիին վերադրելը:

1926թ. ամառը ընդդիմադիր բուրդ արդէն փաստորէն դուրսիւն ունէր և կուտակութեան մէջ հանգէս կէտ որպէս առանձին կազմակերպւած Փրակցիտ անցնելով դրոծոն աշխատանքի. գուտարում են զարդանի ժողովներ, այցելում են կուտակութեան քիմիկոսի ժողովներին և իրենց տեսակէտները քարտզում, ըննարարում են կենտրոնի քաղաքականութիւնը և այլն: 15-րդ խորհրդատոլովից առաջ, կողմից փոխադարձ զիւղանտեսութեան համաձայնութեան են գալիս, և ընդդիմադիր պոստուրուտները ստորագրում են հոկտ. 16-ի յայտարարութիւնը, բայց խոստանում են ենթարկել կուտակութեան որոշումներին: Սակայն, դեռ խորհրդատոլովում չվերջացած, խախտում են իրենց խոստումը և կրկնապէս մտով վերականգնում պայքարը: Պատարար այն ճնշում, նրանց կենտրոնը համարում էին յեղափոխութեան գերեզմանափոր, բանտրութեան խնդրիչ և վերածնուող ցարական ժանդարմերի: Կենտրոնի վարած քաղաքականութիւնը, նրանց կարծիքով, կուտակութիւնը հանում է բանտրական յեղափոխութեան ուղիից և չի համապատասխանում յայտարարական լայն գանգաձեռնի շահերին: Ճիշտ է, ընդդիմադիրները դեռ տերմիտոր բառը չէին գործածել, բայց գտնում էին, որ կուտակութեան մէջ կայ ուժեղ աջ թեքում: Իսկ պատմութիւնից յայտնի է, որ տերմիտորը հէնց ժակորդներին կուտակութեան աջ թեքի կատարած յեղաշրջումն էր, որով Փրակայիական յեղափոխութիւնը թեքեց դէպի աջ:

Այս դրութիւնը դարմանելու համար, քայի 14-րդ համադրումարում արւած պահանջներից, ընդդիմադիրները գտնում էին, թէ՛

1. Պէտք է պայքար մղել ոչ միայն ձայն թեքումների դէմ, այլ և աջ ուղղութեամբ:

2. Բանտրութեան քաղաքական դաստիարակութիւնը տանել ինչպէս յիշատակութեան կարեւորութիւնների ուղիով (մէկ երկրում սոցիալիզմ կառուցանելու դէմ):

3. Ազատել զիւղացիութեան 40%-ը (չքաղաքներին) հարկերից և տրամադրել նրանց զիւղանտեսութեան համար գործիքներ: Աւելացնել բանտրութեան աշխատավարձը շրջայանաւորելով այն արտադրութեան բարձրացման հետ և արտադրութեան ուժեղացումը պայմանաւորելով աշխատավարձի յանձնարման հետ:

Այս անգամ էլ բուրդ ընդդիմադիրները, բողոքներն և առաջարկները մնացին անհետեւանք: Ճիշտ է, Ստալինը խիստ լզուր էր բանեցնում, բայց դեռ ընդդիմադիրները շատ էին ուժեղ, նրանց զիւղչելու համար: Սիւնն որոշում էր ուժեղ զազափարական պայքար մղել ընդդիմադիրների դէմ:

1927 թիւը կոմունիստական կուտակութեան ներքին պատկերումի ու անկը պայքարի տարի եղաւ: Ընդդիմադիր Փրակայիան ձևակերպելով՝ նոր կուտակութիւն կազմելու երկնտարանքի առկէ և կանչելով: Ընդդիմադիրները գործում են զազափոր և փողոց են դուրս գալիս: Եւ բանը հասաւ այստեղ, որ գլուխները կորցրած՝ նրանք սկսեցին դիմել «Երրորդ ոյթի» անկուտակականների օգնութեան:

Ընդդիմադիր շարժման այս վերջին շրջանի մասին «Իրօշակ»-ում արդէն գրւել է, ուստի նրա վրա կանգ չենք առնի: Անհրաժեշտ ենք համարում, սակայն, մի քանի խօսք էլ ասել արտաքին քաղաքականութեան մասին:

Ինչպէս բուրդ համադրումորներին, 15-րդ համադրումարում ևս Ստալինի էր ցիւրցնումը սկսեց ժամօքմած և արդէն անհամ դարձած յայտարարութեանը, թէ իրենց Խորհրդ. Միութեան մէջ ընկերվարութիւն են կառուցանում՝ չընդարարւած զիւղանտեսութեամբ, որը, սակայն, փոսած է ներքից և գահավիժորէն դնում է դէպի անկում: Ըստ Ստալինի, դրամատիրական երկրներում արտադրութիւն անում է և անցել է նախապատերազմեան շարժմանը: Եւ յայտնէս

յալող կերպով տարւում է ճարտարներստի կատարելագործումն և ընդհանոր ամսմար ստեղծել է կայուն դրութիւն: Բայց հենց նոյն այդ տնտեսական զարգացումը խախտւո է դարձնում դրամատիրութեան կայունացումը, քանի որ մասնակի կայունացումը ինքն է արագացնում դրամատիրութեան ճգնաժամը: Նախ՝ այդ աճումը գնալով անհասարարչա՞՞՞ առաջացնում է մի շարք ակառուցիկներ ու բաղլտումներ: Շուկաների խնդիրը մնացել է հիմնական չարք և կարգակերպւում են նոր խմբաւորումներ, որչէսցի պատերազմի միջոցով տիրեն արտաքին շուկաներին, հոս նիւթի աղբիւրներն և նրանց տասող ճանապարհներն: Ողաղութեան բոլոր փորձերը մասնաւոր են անյաշնդութեան, և, հետևաբար, պատերազմն անխուսափելի նկատելով՝ դրամատիրութիւնն իր թիկունքն ապահովելու նպատակով՝ արագորէն փաշտտակասացնում ու աշացնում է իրանութեան և ռազմական անչում գործ դնում զադութեանի վրա:

Իրա հակառակ, զադութեանի յեղափոխական զարթոյնը՝ աճարանն է ինպերիակիցի վախճանի: Իստուրական դասակարգը գնալով օպտուսում է և կոմիստերնի հմայքն աւելի մեծանում: Իստական է որեւէ առիթի դանդաղաների յեղափոխական պոռթկումի համար (օրինակ, Սաքսո-Վանցեթիք դէպքը): Ճարտարուցան Ուրլ. Ս իուկեան դրամատարական այլասերումի յոյսերը: Եղազիացութիւն. դրամատիրութեան կայունացումը յեղափոխական նոր վերելք է առաջացնում: Այս է պատճառը, որ վերջում, ինպերիակիցական պետութիւններն աւելի ռազմական միտումներ են ցուցադրում Ուրլաթ. Ս իուկեան հանդէպ: Եւ որովհետեւ ամենից շատ Անգլիայի շահերն են սուտում, դրա համար էլ առաջինը նա իրենց իր յարաբերութիւնները: Բայց, ընդհանրապէս, Ուրլաթ. Ս իուկեան նկատմամբ կոչ երկու ուղղութիւն՝ խաղաղ յարաբերութիւնները և ռազմական միջամտութիւնները: Առաջինն արտասայտել է մի շարք երկրներին հետ կնքւած առևտրական, ապահովութեան և մաքային ռաշնադրերով (Տանկաստան, Պարսկաստան, Կերմանիա, Ալգանիստան և Լիտուա): Երկրորդը՝ խզում Անգլիայի հետ, Փրանսիայի սպանտանկան դիրքը, Ձիւտաստանի յարակուսները, Վոյչովի սպանութիւնը և ահաբեկումներ երկրի ներսում:

Այսուհետև խորհրդային զաղաքականութիւնը պէտք է լինի՝ ուժեղացնել և բազմացնել Կոմունիստական կուսակցութիւններն ամբողջ աշխարհում, ստեղծել քանդակարան մէկ ճակատ՝ Կոմիտաների դբոշի տակ, ամէն կերպ մերձենալ զադութեանին՝ հրահրելով այնտեղի յեղափոխական շարժումներն ու բարեկամանալ իրաւադուրկ և թոյլ պետութիւններին: Իրան զուգընթաց պահպանել խաղաղ յարաբերութիւններ դրամատիրական պետութիւններին հետ, և, որքան կարելի է, խուսափել պատերազմից:

Միջազգային խնդիրների մասին մի շատ երկար և անշահի ջրով գեկուցում կարգաւ նաև Բուխարինը, որը աշխատում էր ապացուցանել, թէ՛ դրամատիրական երկրների արտաբերութեան ու առևտրի աճումը պնայով՝ աւելի է զարգայում ներքին նրանց կայունացումը: Երկրորդ, որ Կոմիտաների հմայքն անշահ բարձրացել է և միջազգային քանդակարան նախաարձակողական շրջան է ապրում: Եւ երրորդ, որ Ձիւտաստանի յեղափոխական շարժումը նոր և շատ խառամալից շրջան է թեակախել:

Եթէ համեմատելու լինենք արտաքին ընդհանուր կացութիւնը երկու տարի առաջ եղածին հետ, կը տեսնենք, որ այն ժամանակ խաղաղ ու հասարակչիկ դրութիւն էր տիրում Ուրլաթ. Ս իուկեան ու հակառակորդ պետութիւնների մէջ, թե՛ հիմա՝ աւելի յարած ու ռազմաշունչ: Առաջ՝ դրամատիրութեան կա-

յունացումը աւելի ամրոր էր, քան այժմ: Երկու տարի առաջ նկատում էր բանւորական պայքարների յղափոխական տեղատուութիւն, իսկ հիմա տեղի է ունենում ուժեղ վերելք:

Եթէ խորը թեմանցենք արտաքին զաղաքականութեան մասին արած գեկուցումները մէջ, կը տեսնենք, որ բուլղեիկներն ամէն կերպ աշխատում են իրենց երկիրը պահել խաղաղ վիճակում, որովհետև արտաքին ոչ մի ճնշման չեն կարող դիմանալ, և զբոխ ամէն ցնցում առաջ կը բերի դիկտատուրայի պայթում ներսից: Եւ միաժամանակ ամէն ջանք գործ են դնում խանելու համար միւս երկրները՝ պղտոր ջրում ձուկ որսալու յոյսերով: Եւ եթէ Բուխարինն այնքան ուժեղ յարձակում է Երկրորդ Միջազգայինի վրա, պատճառը պէտք է որոնել այն խաղաքարիական ուղիի մէջ, որով Եթեթանում է Միջազգային ընկերվարութիւնը: Եթէ Լեթզ համադաւարին ոգևորութեան արբեր և աննախնթից յաղղութիւնն էին համարում Մարտի և Սիւրիայի սպստամբութիւնները, ապա այս անգամ դրանց անունն իսկ չլիշատակէց: Հիմա զլիսուոր գէնքը Ձիւտաստանն է:

Եթէ խօսում են միջազգային քանդակարան կազմակերպութիւնների ուժեղանալու մասին, այդ դեռ չի նշանակում, թէ՛ դրանից շահելու է կարծիք ֆաշիզմը: Որ այսօր արեւմուտքի քանդակարաններն նոյն վերաբերմունքն ու մտեղցումը չունին դէպի խորհրդային դիկտատուրան, ինչ որ մի քանի տարի առաջ, այդ արդէն անվիճելի իրողութիւն է: Ապացոյց՝ այն տեղատուութիւնը, որը նկատւում է արտասահմանեան կոմունիստական կադակակերպութիւնների մէջ, Դոժաւ չի թեւրով ու փաստերով հաստատել այդ, քայց առելով է, քանի որ ինքը Բուխարինը խտտովանեց, թէ՛ բացի Ձեխիայից, Գիւրանիայից ու Կովկասիայից, մնացած բոլոր տեղերում նկատում է ձուկուսակցութիւնների զգալի անկում, զարցայում և տեղ-տեղ էլ իսպառ վերացում: Հետաքրքրական է, որ երբ մի խումբ պատգամաւորներ դիմեցին Բուխարինին՝ պահանջելով պարզել արտասահմանեան կոմունիստականութիւնների ներքին վիճակը, նա հրաժարեց՝ յայտնելով, որ հետաքրքրուողը կարող են կարուալ Գիւտանիցու յոգւածները:..

Եթէ բուլղեիկները իրենց յաղղութիւնները պայմանաւորում են դրամատիրական երկրների և սրանց ու զադութեանի միջև եղած հակասութիւնների հետ, ապա ինչու՞ չեն անդադարւնում նաև իրենց երկրի ներքե եղած հակասութիւններին: Ի՞նչ պարզեց համադրումարումս՝ Այս, որ Ռեկրայիստիստ աղգախնացումն այնպիսի թափով ու ձևով է առաջ գնում, որ զպետիւրականութիւնը որակում է ստացել և մինչև իսկ կարիք է կղել Կոմիտաների գործկումի միջամտութեան: Իսկ չէ՞ որ Ուկրայիստիստ կողմին կայ Բելուուսիան, Կովկասը:..

Վերջնապէս, թո՛նչ արժէք ունեն յեղափոխական նշանաբանները, երբ ինքը Ստալինն է յատարարում, թէ՛ իրենց պատաստ են վճարելու ցարական պարտքերի մի մասը, եթէ իրենց վարկ տրել:

Որ այսօր զաղաքական կացութիւնը նպատաւոր չէ Մոսկուայի համար, այդ արդէն ապացուցեց խորհրդային առաջին զաղաքազէտ՝ Իսակովսկին համագումարում: Եւ Ռակովսկու վկայութեան կորիք էլ չկար, քանի որ ամէն ինչ կատարւում է հրապարակաւ, բոլորի աչքերի առջև: Իսկ որ Ուրլաթ. Ս իուկեան արտաքին զաղաքականութեան փրուցումի միակ հիմքն են պատճառը՝ երկրի վարչաձևն է և Պոլիտբիւրոյի գործիակերպը, այդ արդէն ամենքին յայտնի ճամբարաութիւն է:

# ՌՈՒՍ-ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Այժմ անցնեց Պարսկաստանի յետպատերազմեան տնտեսական կեանքին, որչափով նա, ի հարկէ, ռուս-անգլիական հակամարտութեան առարկայ է:

Ինչպէս արևելեան ամէն մի թոյլ, յետամնաց երկիր, այնպէս նաև Պարսկաստանը աշխարհակալական-դրամատիրական պետութիւնների համար տնտեսական կողմով առաւելագոյն երկու տեսակէտից հետաքրքրութեան առարկայ է հանդիսանում: Մէկ իր բնական հարստութիւններով և, յատկապէս, հանքերով, մէկ էլ՝ որպէս առևտրական շուկայ:

Արդ, Պարսկաստանը իր համախիճ հարստութիւններով աչքառու տեղ է դրաւում: Հարստութիւններ, որոնք տակաւին կուտական վիճակի մէջ են և աշխատանքի ու դրամադրի են սպասում՝ հոսանուտ դառնալու համար: Գարածուխ, սղինձ, երկաթ, մանգանէզ, նիբէլ, նաւթ և այլն չեն պակասում շահնշահների երկրին: Գրեթէ բոլորն էլ տակաւին հաստ հողաչերտերով են ծածկւած: Հասկանալի է, ուրեմն, բացւած ախորժակների անհանգստութիւնը:

Միայն նաւթը, քարիւղն է, որ այնտեղ միակ է մշակել, այն էլ լոկ Հարաւային Պարսկաստանում: Ի հարկէ, անգլիացիներին է պատկանում նրա մենաշնորհը:

Հարաւային Պարսկաստանի նաւթաշտերը տարածւում են նաւարկելի Կարուն գետի հովտում — Պարսից ծոցի եզերքին ձգող և մեր պատմութիւնից էլ յայտնի իւսթիստան (այժմ կոչւում է նաև Արաբիստան) նահանգի Աճվագ-Մոհամէթի շրջանում: Հարաւարսկական նաւթաշտերը համարւում են ի ընէ հարուստ: Երկրաբանորէն նրանք սերտ կապ ունեն Մուսուլի նաւթաշտերի հետ: Շահագործման մենաշնորհը պատկանում է Անգլիկալական ընկերութեան (Anglo-Persia Company), որ, սակայն, բացի անևան մէկ բաղադրիչից ոչինչ էլ ունի պարսկական և ամբողջովին անգլիական է: Այդպէս են արդէն անգլիացիք: Անուշը — ինչու՞նչ է՝ մասամբ կամ ամբողջովին թող լինի հողի ու երկրի տիրոջը, դրամը՝ իրենց: Նոյնը չէ՞ միթէ նաև «Պարսկաստանի» յորշորջւած, այն էլ «կայսերական» Պարսկաստանի դրամատան (Imperial Bank of Persia) պարագան:

Սկզբնական հաշուով Հարաւային Պարսկաստանի նաւթի շահագործման մէջ, որ 1908-ից է սկսւել, 25% մասնակցութիւն պիտի ունենային նաև գերմանացիք: Ի՞նչ խօսք, որ պատերազմի ելքի հետևանքով բոլոր գաղութներէից հեռացած Գերմանիայի ներկայութիւնը ո՛չ Մուսուլում ու Ռադդաստում հանդուրժելի պիտի լինէր, ո՛չ էլ՝ Մոհամէթիցալով:

Պատերազմի ընթացքին գրեթէ կանգ աւած արդիւնաբերութիւնը վերջին տարիներս նոր թափ է առել այնտեղ, որ և տարէցտարի զարգանում է: 1923-24-ին հարաւարսկական նաւթի արտադրութիւնը 3,7 միլիոնի էրհասնում, իսկ ներկայիս՝ գրեթէ 5 միլիոնի:

Այսպիսով՝ Հարաւային Պարսկաստանի նաւթաբերութիւնը յետ չէ մնում ռուսականից (Կովկաս): «Անգլիկալական ընկերութիւնը» իր հսկայական գործառնութիւններով հանդիսանում է մէկը նաւթի լիարթանների երրորդութեան շարքում՝ ամերիկեան Standard Oil-ին և անգլոհոլանդական Royal Dutch Shell-ին համագործնելով: Այն տարբերութեամբ որ մինչ վերջիններս անհատական-խմբակցական մասնատր ձեռնարկներ են, մէկը Ռոքֆելլերի, իսկ միւսը Գիտերտիցի նման «նաւթաբանների» գլխաւորութեամբ, անգլիկալական «ընկերութեան» գրեթէ բոլոր բաժնեթղթերը, ընդհանրապէս, պետական սեփականութիւն են կազմում: Պարսից ծոցում և Շատ-էլ-Արաբի վրա երթեկեկող բրիտանական ռազմանաւերն էլ իրենց վառելանիւթը Հար.Պարսկաստանից են ստանում: Վերջինս, ուրեմն, առաջնակարգ նշանակութիւն է ստանում բրիտանական դադութային նպատակների համար՝ ո՛չ միայն քաղաքական և, մասնաւոր, աշխարհա-քաղաքական տեսակէտից, որպէս կամուրջ հողկաստանի և Միջնադեղի ու Միջերկրականի միջև, այլ և՛ որպէս նաւթալատ, տնտեսական հեռանկարներով խիստ հարուստ մի շրջան: Ձի կարելի ասել, թէ Պարսկաստանը ինքը բոլորովին գուրկ է նրա բարեկեցիկներից: Նաւթաբերութեան զուտ արդիւնքը 16%-ը նրան է պատկանում: 1924-ին իր բաժինը եղել է 466,000 ֆունտ ստերլինգ, որ անարժէք տեղ չէ բռնում պետական նախահաշի մուտքի բաժնում:

Եթէ Անգլիան շատոնց ի վեր Հարաւային Պարսկաստանի նաւթին էր աչք տնկել, Ռուսաստանն էլ, իր հերթին, նման ախորժակներ էր սրած, դարձեալ հինէն ի վեր, Հիւսիսային Պարսկաստանի նաւթի համար: Մէկ տարբերութեամբ սակայն. մինչ Անգլիան, որպէս «գործի մարդ» կարողանում է ժամանակին ձեռք բերած մենաշնորհից փառաւորապէս օգտուել, ռուսները նաւթի շտրուանների հանդէպ գերադասում են խօսքի շտրուանները:

Հիւսիս Պարսկաստանի նաւթաշտերը, յայտնի է, տարածւում են կասպից լճի հարաւային եզերքներին — Գիլանում և Մազանդարանում և երկրաբանորէն Բազուի նաւթաշտերի հետ մի սերտ միութիւն են կազմում: Նրանք մենաշնորհ առաջ պատկանում էր վրացի Ողջտարիային, որ այն ժամանակ, ի հարկէ, ռուսահպատակ էր: Իսկ երբ Վրաստանը անկախ հռչակեց, Ողջտարիան էլ, արդէն որպէս Վրաստանի հպատակ, իր իրաւունքները ծախեց անգլիացիներին սուրբած «Հիւսիսային Պարսկաստանի Քարիւղի Ընկերութեան» (North Persian Oil Company), որ հաշի անուած էր որպէս «դուստր-ընկերութիւն» Անգլիկալականի:

Եւ, սակայն, այդ դէմ էր 1921-ի ռուս-պարսկական դաշնագրին: Ոչինչ չօգնեց և՛ այն պարագան, որ Ողջտարիան հրաժարւելով հրաժարւել էր ռուսահպատա-

կութիւնից: Չէ՞ որ մենանշորը ստացած միջոցին նա պարզ պիտրակներով հետո չէր փախել ո՛չ ոտսի և ո՛չ էլ Ռուսաստանի անունից: Բան դուրս չիկաւ նաև ամերիկեան Սիմկլէր ընկելուքեան փորձից՝ տիրանալու Հիւս. Պարսկաստանի նաւթի մենանշորհին: Արդեօ՞ք նրա համար, որ ամերիկեան նաւթային ծանօթ պանամայի մէջ խառնեալ լինելով՝ անկարող եղաւ թեհարանին, որպէս նախապայման խոստացած 10 միլ. դոլլարի փոխառութիւնը տալ, թէ՛ տեղի տայով աւելի մեծ դիշտիչներէ սրած ժանիքներէ առաջ, այդ չէ կարելո՞րը, փաստն այն է բոլոր պարագաների տակ, որ Հիւսիս. Պարսկաստանի նաւթադաշտերը մինչև օրս էլ մնում են խոպած վիճակի մէջ: Մանաւանդ, Ռուսաստանի հաշտին չի գայ, ի հարկէ, իր թիկ տակ, սեփական քարիւղի (հագու) կողքին՝ ստեղծած տեսնել մի նոր և վտանգաւոր մրցակից: Ու, ինչպէս էլ դասաւորուին գործերը Հիւս. Պարսկաստանի քարիւղի շուրջը, սա պիտի շարունակուի մնալ այսօրւայ վիճակում, քանի դեռ Ռուսաստանը կրպած է պահում Անդրկովկասի դոնները պարսկական տրանզիտի առջև: Մինչև որ կառուցուող երկաթուղին կասպիականի և Պարսից ծոցի միջև՝ հնարաւորութիւն կտայ Հիւսիսային Պարսկաստանի նաւթն էլ դէպի հարաւ փոխադրելու, եթէ քի հարկէ, խափանարար նորանոր արգելքներ մէջ տեղ չհանեն:

Հնարաւոր է նաև մի ուրիշ ելք: Եւ մեզ թուում է, թէ դա տակաւ նախապատրաստուում է այն հոկայական յաղուութեամբ, որ Standard Oil-ը վերջերս արձանադրեց՝ ռուսական ճնաւթային սինդիկատի՝ հետ շատ ազմուկ անած, ծանօթ պայմանագիրը ստորագրելով: 10 միլիոն դոլլարի փոխառութեան ի դին, ինչպէս յայտնեց, Մոսկուան ամերիկացիներին է դիմել ռուսական նաւթը արտասահմանում վաճառելու մենանշորհը: Standard Oil-ի և Shell-ի միջև մղուող շարունակական պայքարի մէջ նաւթի համաշխարհային շուկային տիրանալու համար, անկասկած, առաջինի մի խոշոր յաղթանակն է ռուս-ամերիկեան նաւթային պայմանագրութիւնը: Այդ հետաքրքրական է նաև այն տեսակէտից, որ իր հերթին մի ճեղք է բանում բուլղիկներէ արտաքին առևտուրի պետական մենարտօնութեան մէջ: Սակայն, մի կողմ թողնենք խնդրի այդ կողմը: Մեր ասեին այն է որ՝ ռուս-ամերիկեան նաւթային համաձայնութիւնը կարող է դարգանալ պարսկական ուղղութեամբ ևս: Արդէն իսկ՝ շատոնց ամերիկացիները կենսական շահագրգռութիւն են ցոյց տային Հիւս. Պարսկաստանի նաւթի համար: Եւ որովհետև վերջինիս փոխադրութիւնը աւելայ պայմաններում Ռուսաստանից է կախած (տրանզիտ) և որովհետև ամերիկացիք ու ռուսները հաւասարապէս շահագրգռուած են Անգլիային մեկուսացնելու Հիւս. Պարսկաստանի նաւթադաշտերից, այպ, ուրեմն, անկարելի բան չէ, որ այդ երկուսը միասին նաև այդ խնդրում՝ ընդհանուր ոտսի դէմ: Կայ, մանաւանդ, այն պարագան ևս, որ Պարսկաստանը ինքն էլ, բնականաբար, Ամերիկային պիտի կամենար տալ զերազատութիւնը, թէկուզ Հէնց այն պատճառով, որ Ամերիկայի շահագրգռութիւնը Պարսկաստանում տնտեսապիտանով է սահմանափակուում և չէ ձգտում քաղաքական ազդեցութիւններ ձեռք բերել:

Պարսկաստանի արտաքին առևտուրի մէջ Ռուսաստ-

տանն ու Բրիտանական կայսրութիւնը սկզբից ի վեր հրապարակ են դալիս որպէս հակընդդէմ ուժեր: Ոչ պակաս չափով արդէն իսկ տնտեսական հիմքեր ունի ռուս - անգլիական բովանդակ հակամարտութիւնը Պարսկաստանում: Միւս կողմից, Անգլիան և Ռուսաստանն են, որոնք առեւծի բաժին ունեն պարսից արտաքին առևտուրի մէջ:

Յայտնի է, որ մինչև դարավերջը Պարսկաստանը գրեթէ բնառնտեսական երկիր էր: Միայն վերջին 25-30 տարիներում է, որ այդ երկրի դոնները աւելի կամ պակաս լայնօրէի բացւել են համաշխարհային շուկայի առջև: Այդտեղ են, անկասկած, վճռական դեր է խաղացել ռուս-անգլիական մրցակցութիւնը, թէև վերջինս միւս կողմից ծանրապէս ազդել է Պարսկաստանի ինքնուրոյն զարգացման վրա:

1906-ի պարսիկ յեղափոխութիւնը եթէ ունէր քաղաքական հիմքեր, ոչ պակաս ունէր և տնտեսական պատճառներ: Տնտեսական-ընկերային նորաստեղծ յարաբերութիւնները, առաջնորդ ունենալով կադակերպուող քաղքենի-առևտրական դասակարգը, պահանջ էին ըզգում՝ պատռելու պարսիկ պետականութեան աւատական կեղևը և դուրս գալու լոյս աշխարհ: Առևտրական դրամապաշտը իր իրականում էր պահանջում:

Վերջինս արհամարհելի ոյժ չէ այսօր արքայից արքաների երկրում: Քաղքենիութիւնը, որպէս դասակարգ, իր ուժի մէջ է մտնում: Նրա կենսական շահերը պահանջում են մեղմացում, բարեփոխում միջնադարեան տնտեսական կարգերի: Եւ այդ ամբողջ պրոցեսի մէջ, որպէս յեղափոխիչ գործօն, բնու յետին տեղը չեն գրաւում Պարսկաստանի առևտրական յարաբերութիւնները հիւսիսի և հարաւի վիթխարի դրացիներէ հետ:

Նախապատերազմեան շրջանում Ռուսաստանին էր պատկանում առաջնութիւնը այդ մարզի մէջ: Պարսկաստանի ներածման 55%-ը և արտածման 68,9%-ը ընկնում էր Ռուսաստանի վրա (1913-14): Այս թւերը ինքնին արդէն պերճախօս են ու չեն կարօտում երկար մեկնարանութեան: Ասել է, ցարերի Ռուսաստանը անպերազանցելի էր այդ մարզում: Հիւս. Պարսկաստանը և, մանաւանդ, Ատրպատականը ներկայացնում էր գրեթէ մի զաղութի Ռուսաստանի համար, մի լայն ու զարգացող շուկայ՝ նորաստեղծ ռուս ճարտարաւեստի համար: Նրա գործարանային ապրանքները և, մանաւանդ, շաքարը, քարիւղը և հիւսամածեղէնը ամբողջակից էին մինչև թեհարան: Միւս կողմից՝ Պարսկաստանը այն շրջանն էր, ուսկից Ռուսաստանը ստանում էր իր իսկ ճարտարաւեստի համար պահանջուած նախանիւթերի մի որոշ մասը—բամբակ, բուրդ, մորթի և նաև սպառման որոշ նիւթեր — արհմ, չոր մրգեղէն և այլն: Վերը առաջ բերած թւերից երկրորդը ցոյց է տալիս, թէ Պարսկաստանը մինչև իսկ աւելի էր արտածում դէպի Ռուսաստան, քան՝ ներածում այնտեղից: Եւ, սակայն, այդ բերքը չէր մեղմացնում Պարսկաստանի կախելու վիճակը Ռուսաստանից: Վերջինիս անմիջական հարեանութիւնը, առաջինի անել վիճակը ճանապարհներ չունենալու պատճառով՝ ինքնին պայմանաւորում էին ստեղծուած դրութիւնը:

Գանջ Անգլիային: Վերջինիս առևտուրը Պարսկաստանի հետ պատերազմից անմիջապէս առաջ՝ արտայայտուում էր այս կերպ. Պարսկաստանի ներածման

27,5%-ը և արտածման 12,5%-ը ընկնում էր հարակի վիթխարի հարեանի վրա: Ասել է, ուրեմն, նախապատեհագրման շրջանում Անդրլիան, գրաւելով հանդերձ երկրորդ տեղը Պարսկաստանի արտաքին առևտուրի մէջ, անհամեմատորէն աւելի յետ էր մնում Ռուսաստանի բաղադատութեամբ: Մի ուրիշ յատկանշական գիծ է: Մինչ Ռուսաստանը աւելի արտածում էր Պարսկաստանից քան ներածում, Անդրլիան (աւելի շատ՝ Բրիտանական կայսրութիւնը) աւելի քան երկու անգամ շատ ապրանք էր ներածում Պարսկաստան, քան արտածում: Նշանակում է՝ Ռուսաստանի հանդէպ Պարսկաստանի առևտրական հաշիւը դրական էր, մինչ՝ Բրիտանական կայսրութեան հանդէպ՝ բացասական: Ասել է, անգլիական առևտուրը, ուսականի հետ համեմատած, գաղութային շնչուած կնիք էր կրում իր վրա, թէև ուսականի օրինակն էլ բնաւ Նշան չէր դիշատիչ բնազդներ բացակայութեան:

Պատերազմի և, մանաւանդ, Ռուսաստանի յեղափոխութեան տարիներում յարաբերութիւնները հիմնովին փոխեցին: Ռուսաստանի ներածումը Պարսկաստան 1920-21ին արդէն ինչ էր 4,2% է, արտածումը՝ 6,2% է:

Նոյն այդ միջոցին, սակայն, Անգլիայի մասնակցութեան բաժինը հստակի շափերի էր հասել: Նոյն թւականին (1920-21) Պարսկաստանի ներածումը Անգլիայից՝ հասել էր 75,8%-ի, իսկ արտածումը դէպի Անգլիա՝ 43%-ի:

Վերջին մի քանի տարիների ընթացքում պատկերը զգալիպէս փոխել է: Դեռ 1923-24-ին Ռուսաստանի բաժինը պարսկական ներածման մէջ՝ բարձրացել էր 15,1%-ի, արտածման մէջ՝ 41,1%-ի: Վերջին 2-3 տարիների ընթացքում աւելի ևս բարելաւել են ուսականի արտական առևտրական յարաբերութիւնները: Նոյն այդ թւականին Պարսկաստանի ներածումը դէպի Բրիտանական երկիրները ինչ էր 63%-ի, իսկ արտածումը՝ 22,3%-ի: Բոլոր պարագաներում՝ Ռուսաստանը, թէև զանգաւորէն, կանուս է գրաւել իր առևտրական նախկին դիրքերը Պարսկաստանում: Բայց այսօր էլ դեռ Անգլիային է պատկանում առաջնութիւնը Պարսկաստանի արտաքին առևտրի մէջ (Հար. Պարսկ. նաւթը հաշի մէջ չի մտնում, համարելով անգլիական ապրանք): Գալով Գերմանիային, վերջինս վերականգնել է արդէն իր առևտրական յարաբերութիւնները Պարսկաստանի հետ և հասել նախապատերազմեան վիճակին: 1923-24-ին Պարսկաստան ներածւող ապրանքների արժեքը 2,5% է նորէն գերմանական էր: Զորքող մասնակիցը՝ Միացեալ Նահանգները շատ չնչին ներածում ունին Պարսկաստան և, ընդհակառակը, գրեթէ, միայն արտածում են այնտեղից (պարսկական դորգի գլխաւոր գնորդներն ամերիկացիք են): Պարսկական ողջ ներածման 14,5%-ը (1923-24թ.) նրանց վրա էր ընկնում: Ամերիկացիք աւելի խոշոր նպատակներ են հետապնդում այդ երկրում, նաւթի և այլ կոնցեսիաներ են աշխատում ստանալ:

Մի փոքր ակեղ ծանրանանք պարսկա-խորհրդային առևտրական յարաբերութիւնների վրա: Դրանք աւելի արժանի են մեր ուշադրութեան, մանաւանդ, որ յայտնաբերում են հետաքրքրական գծեր՝ բոլշևիկների տրեսնական արևելյան քաղաքականութեան մէջ:

Ռուսաստանի արտաքին առևտրում, ինչ որ խիստ աչքի է զարնում, շատ համեմատ տեղ են դրաւել Արևելքի երկիրները: Ինչպէս առաջ, այնպէս և այժմ՝ Հակառակ այն բանի, որ առևտրական կայսրութեան սահմանները չորս-հինգերորդով ասիական երկրների հետ են ընդհանուր ու միայն մէկ հինգերորդով եւրոպական երկիրների հետ: Հակառակ այն բանի, որ բոլշևիկները մի առանձին նախափորութիւն և մինչև իսկ թուրքիւն ունեն հանդէպ իրենց արևելքի հարևաններին: Հակառակ, վերջապէս, բոլշևիկի ասիական շնչուած թաթարական բնոյթագծին, բոլշևիկները ասիական զթիւումին: Այն աստիճան, որ պատրաստ են մինչև իսկ գոցել Պետրոս Մեծի բաց արած նեղիկ լուսամուտը իսկ դէպի արևմուտք և ամբողջական դէմքը ուղղել դէպի Ասիա: Դրանով իսկ բացատրուել է՝ նրանց հոգեկան ազգակցութիւնը ուսւ էմիգրանտ յետաշրջութեան տիպիչ ներկայացուցիչների հետ, որոնք ծանօթ են Եւրասիականներ (Եւրագիտ.) անուն տակ: Ռուսաստանը Եւրոպա չէ, պնդում են հասարակապէս երկու բանակի ներկայացուցիչները. նա Եւրասիա է, — Եւրոպա և Ասիա միանգամայն, Բայց՝ ակնհեռ է Եւրասիականների գերակշռող, գրեթէ բացառիկ համակրանքը Ասիայի հանդէպ և հակակրանքը Եւրոպայի հանդէպ: Գաղափարաբանօրէն սխալ չէ դատում, ուրեմն, Կոնցիկնի՝ բոլշևիկից քաղաքական սոցիալիզմ անւանելով: Եթէ բոլշևիկները ոչ, եւրասիականները հրապարակով արդէն քարոզ են կարողում՝ վերադարձ դէպի Չինիզիբանի աշխարհը: Եւրասիականք, սակայն, բուն նւթը:

1913 թւականին՝ Ռուսիոյ արտաքին առևտուրը անում էր 2 միլիարդ 600 միլիոն ռուբլի: Դրանից միայն 320 միլիոն էր բաժին ընկնում ասիական երկիրներին, այսինքն՝ ընդամէնը 12,3% (մինչ՝ միմիայն Գերմանիայի բաժինը 36% էր): Պարսկաստանը առաջին, գերակշռող տեղն է բռնել միջու էլ, Ռուսաստանի արևելեան առևտրի մէջ: Ինչպէս առաջ, այնպէս և այժմ, երբ Մոսկան ջանք է թափում Պետերբուրգից ժառանգած իր դիրքերը վերագրաւելու հարևան երկրում: Երբեմն հին, երբեմն՝ նոր մեթոդներով: Բայց միշտ էլ՝ հին նպատակներով, որոնք առայէս նոր են:

Թէև և այժմ Ռուսաստանի արտաքին առևտուրը դեռ բաւական հեռու է նախապատերազմեան վիճակից, բայց՝ յարաբերական բաժինը արևելյան երկիրների (1925-26-ին) արդէն հասել էր նախկինին — 13%: Վերջին՝ 1926/27 տարւոյ առաջին կիսամեակին արևելեան երկիրների մասնակցութիւնը ուսական արտաքին առևտրի հաշիւում եղել է, խորհրդային թերթերի համաձայն, 107 միլիոն ռուբլի: Երկրորդ կիսամեակի համար սպասուում է 115 միլ. ռուբլի: Հաւաքոյն գէպքում, ասել է, ընդամէնը 222 միլ. ռուբլի, որ բաւական վար է նախապատերազմեան 330 միլիոնից: Մի մտաւանք նաև, որ չերվոնց-ռուբլու և նախապատերազմեան ռուբլու գնորդական ուժի տարբերութիւնն էլ շատ գզալի է:

Բոլոր պարագաներում՝ Ռուսիոյ, Ռուսաստանի արևելյան առևտրի մէջ Պարսկաստանը գերակշռող, բացառիկ տեղ է գրաւում (գրեթէ 60% մասնակցութեամբ): Նիժնի-Նովոգորոդի և Բաղդադի տնտեսականներում Պարսկաստանը անբազաւտելիօրէն ուժեղ և

ցանկալի յաճախորդ է: Բոլոր մնացածները միասին՝ իրենց շրջանառութիւններով նրան չեն էլ հասնում:

Արեւելքում ընդհանրապէս և Պարսկաստանում մասնատրական, կորցրած դիրքերը վերադարձելու և նորերին տիրանալու նպատակով՝ խորհրդային կառավարութիւնը ձեռք է մեկնում ո՛չ միայն քաղաքական և դիւանագիտական միջոցներին, այլ և՛ սկզբունքային, հիմնական փոփոխութիւն է մտցնում իր արտաքին անկարգի սխտեմի մէջ: Մտնօթ է արդէն, որ վերջինիս էութիւնը պետական մենաշնորհն է, խորհրդային տընտեսակարգի «սիւներից» մէկը, ինչպէս որ, յաճախ, սիրում են կրկնել բոլշևիկները: Մասնաւոր նախաձեռնութիւնը, լինի դա անհատական թէ՛ խմբակցական, տեղ չունի այդտեղ: Բոլշևիկները յաւ են գիտակցում, որ խախտել արտաքին անկարգի ներկայ գրութիւնը՝ նշանակում է խախտել բոլշևիզմի կառուցածքի հիմնական սիւներից մէկը:

Սակայն, մէկ վերապահումով: Եւ այդ վերաբերում է արեւելեան երկրներին: Ահա նրա էութիւնը, որ քիչ է արժանարժեք ոչ միայն հայկական, այլ և եւրոպական մամուլում:

Մէկ հատիկ խօսքով սկզբից բնորոշենք այն: Մենք կարող ենք Արևելքում նշպ անանել այն—տնտեսական նորագոյն քաղաքականութիւն՝ Արեւելքի վերաբերմամբ:

Մնչորն այն է, որ բոլշևիկները արտաքին անկարգը տակաւին 1923-ից սկսած մի մեղքաւոր է առել իր մենատիրական սխառեմի մէջ: Բոլշևիկները չեն ասում այդ, բայց ձեղբւածքը բացել է և տակաւին լայնանում է: Ուզում ենք ասել, որ Պորհրդ. Ռուսաստանի արևելքում անկարգի մէջ ոռւս պետական մեքենայի դուրս, որ ընդհանուր առումով «վնէշորդ» (արտաքին անկարգ) անունով է ծանօթ, մասնակցութիւն ունի նաև մասնաւոր. դրամագլուխը (արեւելեան երկրներ) — լինի այդ յանձին անհատ անկարգակներին, թէ՛ անկարգակն ընկերութիւններին: Ինչպէս արտածման, այնպէս և ներածման մէջ: Աւելին դեռ: Բազուի և Նիփոնի տոնամաճաններում առուծախի առարկայ եղող արեւելեան արտադրութիւնները մաքսից ազատ են: Մէկ վերապահումով է կատարւում շարեւեղան նէպը՝ որ՝ Ռուսաստան ներածող պարանջները տեսալ երկրի արտադրութիւններ լինեն և ոչ թէ օտար, մասնաւոր, արևմտեան ծագում ունեցող:

Ռուսաստանի կնքած դաշնագիրները Արեւելքի երկրներին հետ՝ յենւած են այդ արեւելեան նէպի սկզբունքի վրա: Մարտին կնքւած է յուլիսին (1927) ուժի մէջ մտած ոռւս-տանկական անկարգակն դաշնագիրն էլ պարունակում է նոյն հիմնական տրամադրութիւնը: Տաճիկ անհատ-վաճառականներ և անկարգակն հիմնարկութիւններ, դաշնագրով սահմանւած շրջանակում է փնտրել են՝ անկարգակն յարաբերութիւնները մշակել Պորհրդային Միութեան հետ: Մի բան, որ արտիներից է վեր շնադիր են իրականացնել եւրոպացիք, բայց՝ անհետանք մինչև այժմ:

Պարսկաստանի վերաբերմամբ ևս, ինչ խօսք, կիրաււում է «արեւելեան նէպ» սկզբունքը: Եւ եթէ տարիներ տեղ ոռւս-պարսկական յարաբերութիւնները՝ անկարգակն պայմանագիր կնքելու մասին՝ վերջնական արգիւնք չէին տալիս, այդ ծագում էր ուրե՛

պատճառներից: Գլխաւորները նրանք են, որ, նախ՝ ոռւսները ոչ մի դնով չէին ուզում զիջող լինել տրանս-դիտի խնդրում, մի բան, որ կենսական նշանակութիւն ունէր Պարսկաստանի համար: Յետոյ՝ Մոսկւան ուզում էր ամէն կերպ՝ իր անկարգակն հաշիւկիւր Պարսկաստանի հետ հաւասարակշիւել, այսինքն այսուհետև բաց չունենալ: Եւ, վերջապէս, Ռուսաստանը ուզում էր պարանջի դիմաց պարանջ տալ և ոչ թէ՛ սակեղրամ: Ինչպէս էլ լինի՝ ոռւսները ցանկանում էին պարսկական շուկայում «քշել» սեփական պարանջները, որոնք, սակայն, շատ էլ աչքի չեն ընկնում իրենց «էփտնութեամբ»: Եւ որովհետև Պարսկաստանը տակաւին չունի երկակի ճամբաներ դէպի հարաւ, իր տրանս-դիտի առաջն էլ փակ է, ուրեմն, ուղի—չուղի, ստիպւած է յամբարել Մոսկւայի պահանջները առաջ: Այսպէս է ահա վերջինս գրաւել շնունտ կորցրած դիրքերը Պարսկաստանում: Խորհրդային—յեղավորական և ոչ թէ՛ դրամատիրական պիտակի տակ:

Ինչ սահմաններում է իրականանում «արեւելեան նէպը» Պարսկաստանում: Այսոր այդտեղ ոռւսները ունեն արդէն անկարգակն մի շարք կազմակերպութիւններ նոյն այդ գետնի վրա — բաժնետիրական ընկերութիւններ, որոնց մէջ մասնակցում է խորհրդային պետական դրամագլուխը մի կողմից և պարսիկ մասնաւոր դրամագլուխը միւս կողմով: Օրինակ՝ այսպէս կոչւած «Պերս-խլուպոկը» (ոռւս-պարսկ բաժնակի ընկերութիւնը), որ իր ձեռքն է առել ո՛չ միայն Հիւս. Պարսկաստանի ողջ բաժնակը, որի կարիքը այնչափ զգում են բոլշևիկները, այլ և այնտեղ ունի բաժնակի ընդարձակ տնկարաններ: Նոյն կարգի կազմակերպութիւններ են՝ «Ռուս-պերս-սախարը», «Պերս-չուլը», «Պերս-ազնէֆարը» — այսինքն՝ շաքարի, մետաքսի, նաւթի անկարգով զբաղող ոռւս-պարսկական խառն ընկերութիւնները և այլն:

Հակառակ որ ոռւսները մտցրել են արեւելեան նէպը — նրանք այդ անանում են «նպաստաւորաբ» անկարգ, «ի հարկէ», արեւելքիներին համար, — բայց և այնպէս պարսիկները (մի կողմ թողնենք ուրիշներին) վերին աստիճանի դժգոհ են տիրող վիճակից, տնտեսապէս ոռւսներին մի տեսակ գերին դարձած լինելով, գոնէ, Հիւսիս. Պարսկաստանում: Ինչո՞վ է խորհրդային անկարգը, չէնց արեւելեան նէպի պայրմաններում, պակաս «նպաստաւորաբ», քան հինը: Ինչպէս հին ժամանակները, այնպէս նաև ներկայիս՝ ոռւսները աշխատում են Հիւսիս. Պարսկաստանը իրենց «տնտեսական օրգանիզմ» մաս դարձնել, «ի հարկէ», մէկ մասհոգութեամբ արտաւոր — Պարսկաստանը զբարմատիրական գործից՝ փրկելու համար, ինչպէս որ երբեմնայպէս արտայայտում են բոլշևիկները արեւելեան հրապարակագիրները:

Ինչ որ անդիւրացիք շատոնց ունէին և պինդ են պահում, ոռւսները յետում են, ուրեմն, ուժովցած թափով կորցրածը յետ քերել և ոտիին վանել նոր դիրքերից, յատկապէս Հիւսիս. Պարսկաստանում և, մասնաւոր, Ատրպատականում: Բայց՝ այդտեղ էլ դերմանացիք են սկսել թումբ կանգնեցնել ոռւսներին առջև: Խնդիրն այն է, որ գերմանացիք յատկապէս այդ շրջանն են համարել և համարում են իրենց պարսկական անկարգի շուկայ. մի շուկայ, որ ոռւսները

բացատրապէս իրենցն են համարում: Դրանից էլ վերջինների չքողարկած դժգոհութիւնը առաջիններից: Խորհրդային մամուլը աւաղելով ու ցատումով է արձանագրում այն փաստը, թէ՛ գերմանացիները ոչ միայն գուտ առևտրապէս գրաւել են իրենց նախկին դիրքերը Հիւսիս. Պարսկաստանում, այլ և՛ ընդլայնել ու որդեգրել են տնտեսական գործունէութեան նորանոր ուղիներ, անգամ որոճալով գաղութային ծրագրեր Ատրպատականում: Թէ՛ նրանք փախած ասորիների հողերն են գնում, գաղթականներ բերում, երկրագործական գաղութներ հիմնում, զբւղանտեսական մեքենաներ ներածում, Հողային կոնցեսիաներ ձեռք բերում, տնկարաններ գցում, երկաթուղային ծրագրեր մշտմտում, Հանքային հետախուզութիւններ կատարում, թող թէ՛ ուրիշ ձեռնարկներ թե՛ բանում և այլուր: «Այսօր իսկ, գրում է բոլշևիկների «Նովի Վոստոկ» (Նոր Արևելք) հանդէսը, գերմանացիք շտապում են Ատրպատականում իրենց ոտքի տակ Հող գրաւել և ամուր դիրքեր սպահովել»: Ու այն պարագան, որ Հարաւային Պարսկաստանի մասին է՝ անգլիական սպարան — Գերմանիայում ևս սպասման չուկայ է գտել, այն էլ «Գերմանիոյ Նաւթ-Բաժնետիր-Ընկեր» հետ գործակցելով, որին նա նիւթապէս օժանդակում է, որպէս թէ, անգլիական. ընկերութիւնը. Հէնց այդ պարագան ռուս Հանդէսը բարար է համարում կողջութեւն բաւականաչափ յատկանշական երևոյթ՝ Գերմանիոյ վերստին թափանցման Հիւս. Պարսկաստանում, միև կողմից էլ, որպէս պարզ նշան անգլի-գերման մերձեցման: «Անգլիան ուղում է, ասում է նա, Գերմանիան առաջ քաշել Խորհրդային Միութեան ազդեցութեան դէմ՝ Հիւսիսային Պարսկաստանում»:

Ամփոփելով խօսքը ռուս-պարսկական տակտրակամ յարաբերութիւնների մասին՝ ասենք, որ նրանք ըստ էութեան այժմ էլ տարբեր նպատակներ չեն հետապնդում զան՝ տասնամեակներ առաջ: Խորհրդային Միութեան վարիչները, հարկաւ, ուրիշ բոլք են քաշում դրանց վրա, որ շատ թափանցիկ է սակայն: «Մեր տնտեսական յարաբերութիւնները Արևելքի հետ, ասում էր Չիչերին Մոսկւայում հիմնւած առևտրական պալատի (Արևելեան Նէպի խողովակներից մէկը) անդամների առջև, շատ աւելի սերտ են և շատ աւելի սրտազին, քան՝ արևմտեան երկրների հետ: Նրանք միևնոյն ժամանակ կազմում են հիմքը մեր ընդհանուր քաղաքականութեան Արևելքում: Այդ տեսակէտով էլ՝ խորհրային արևելեան առևտրական պալատի գործունէութիւնը շատ է մեծ»:

Չիչերինի ուրաղածած արևելեան քաղաքականութեան յաղթանակին պիտի ծառայեն և՛ Արևելեան Նէ-

պը, և՛ առևտրական պալատը, և՛ ամէն ինչ: Բոլշևիկ առաջամարտիկներն էլ՝ պէտք է զգէպի Արևելքի շուկաները տանող դարպասները լայն բանան՝ Արևելքի աշխատաւոր զանգուժներին խորհրդային ճարտարաւեստի արտադրութիւններով հոգալու համար», ինչպէս որ արտայայտում է մի բոլշևիկ լրագրող: Ինչո՞վ է վերջինս տարբեր՝ երբեմնի «Նովոյէ Վրեմիայի» գրիչներից, Չիչերինն էլ՝ իր ցարական նախորդներից. Ժողովուրդ միայն:

Բոլշևիկները ինչո՞ւ մտցրին «արևելեան Նէպը»: Հարկաւ, ոչ արևելքի աշխատաւորների սիրուն աչքերի համար: Այլ՝ մէկ որ, հարկ էր նոյն այդ աչքերի մէջ փոշի փշել՝ ասելով, թէ՛ տեսէք, ձեզ գերազատում ենք արևմուտքիցներից (ուրիշ առթիւ էլ սրանց կը սիրաւահեն՝ գերազանցելով արևելցիներից). մէկ էլ նրա համար, որ այդ պահանջում էր իրենց իսկ, ռուսների արտաքին առևտրի կենսական շահը: Երկու դէպքում էլ բոլշևիկները առաջնորդւում են եսական նկատմաներով: Հարկաւոր է, ուրեմն, ամէն կերպ գրաւել արևելքը արևմուտքի դէմ ազդարարւած կուրբ յալողապէս վարել կարենալու համար (քաղաքական նկատում): Մէկ էլ որ՝ սեփական սպարանքը Արևելքի շուկաներում քշել պէտք է (վաճառականական նկատում): Ռուսաստանի տնտեսական յարաբերութիւնները Արևելքի հետ, Արևմուտքի բաղադատութեամբ, հիմնովին հակառակն են: Ռուսաստանը արևմտեան երկրներից եթէ գնելիք ունի, դրանք գործարանային սպարանքներ են միայն: Եւրոպական գերազանցողէն ճարտարաւեստային երկրների հանդէպ՝ Ռուսիան հողագործական երկիր է, իսկ արևելեան յետամնաց երկրների հանդէպ՝ ճարտարաւեստական: Եւ որովհետև Խորհրդային Ռուսիան կենսապէս շահագրգռւած է՝ սահմանափակելու իր գնումները Եւրոպայից և, ընդհակառակը, որքան կարելի է՝ շատ սպարանք ծախելու Արևելքի երկիրներին ու միևնոյն ժամանակ, իր գործարանների համար պահանջւած նախանիւթերը գնելու այնտեղից (այն էլ՝ անչափ էժան, իր թելադրում գներով), դրանից էլ ծագում է անհրաժեշտութիւն՝ պինդ կղպելու Արևմուտքի դուները և, ընդհակառակը, լայն բանալու Արևելքի դարպասները:

Ահա « արևելեան Նէպի » ծագման պատճառը: Մարքսիստ լինել պէտք է՝ երբեմնայէս մարքսիստական մեթոդից օգտուելու համար:

Ա. ԱՅԵՂԵԱՆ

(Վերջը յաջորդ անգամ)



# ՔԱՂՔԵՆԻ ԱԶԳԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

## ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ. ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ա.

Ազգերու Դաշնակցութիւն կազմը

Ընկերվարական և ժողովրդավար շրջանակներու մէջ յաճախ կրկնւած ճշմարտութիւն է, թէ Ազգերու Դաշնակցութիւնը քաղքենի հաստատութիւն մըն է, տեսակ մը փաստական ու դրական արտայայտութիւնը քաղքենի գաղափարական ու անհիմն խաղաղասիրութեան: Ձախ ընկերվարականներէն ոմանք նոյնիսկ գայն կը նկատեն աշխարհակալ ու մեծ պետութիւններու քաղաքական արկածանկողութեանց մէկ նոր մրցակցը, տեսակ մը կախարդական ու խարդախ խաղաղութեան պատ, որուն պաշտպանութեան տակ ռազմապաշտ ու յաւէտ շահագործող պետութիւնները կը շարունակեն հետաանդէլ իրենց վտանգաւոր ծրագիրները: Անտարակոյտ, դիւանագիտական ու խաղաղասիրական այդ հաստատութիւնէն ներս գործածւած նոր բառամթերքը՝ «ազատասիրական», «հաշտարական» եւ այն չի բաւեր խտրելու համար աշխատաւոր բաղամութիւնները, որ որոշ չափով լուստեղեակ են քաղքենիներու բոլոր արդար հաշիւներուն: Առաւել ևս՝ Ազգերու Դաշնակցութեան վրա կասկածելու իրաւունք ունին փոքրիկ ազգերը, որ դեռ չեն ազատագրւած: Այսուհանդերձ, այս բոլոր վերապահումներէն յետոյ, դարձեալ անառարկելի իրողութիւն է, որ առանց միջնազգային ընկերվարութեան ուժեղ ու բանաւոր օժանդակութեան այդ քաղքենի պետութիւններու դաշնակցութիւնը աւսօր չլիտի կարենար միջնազգային կեանքի մէջ այն հեղինակութիւնը վայելելու, որուն առջև, այսպէս կամ այնպէս, «խոնարհեցաւ» նոյնիսկ խորհրդային կառավարութիւնը:

Ազգերու Դաշնակցութիւնը ծնած է պատերազմէն: Ամերիկեան քաղքենիութեան դէմ կռիւ մտած, բայց այդ նոյն քաղքենիութիւնէն սերած գաղափարական ու խաղաղասէր մարդ մը՝ Վաւտը Վիլսըն, փաստօրէն կը համարէ իր հիմնադիրը: Գոյութիւն ունեցող Ազգերու Դաշնակցութիւնը այն չէ ինչ որ Վիլսըն կենթադրէր կամ կողմէր որ ըլլայ: Վիլսընի դաշնակցութիւնը պիտի ըլլար ամբողջ աշխարհի ժողովուրդներու կամ ամբողջ կամարութեանց ուղղակի ու փաստական միութիւնը, մինչդեռ այսօրայ Ազգերու Դաշնակցութիւնը պետութեանց խմբաւորում մըն է՝ կազմւած ղլխաւորաբար, նշանակովի պատիրակներէ ու մնայուն դիւանակովիներէ (պիւրօգրքային, որոնք նոյնպէս նշանակովի են, այսինքն, կը ներկայացնեն կառավարութիւններ և ո՛չ թէ ժողովուրդներ:

Ազգերու Դաշնակցութիւնը, ըսինք, ծնած է պատերազմէն՝ արգիլելու համար պատերազմը, խեղդելու համար, իր սեղմին մէջ իսկ, տպագրայ միջազգային կամ աշխարհակալական կոլիմերու աւելն հաստատականութիւն ու, հետևաբար, կազմակերպելու համար խաղաղութիւնը: Դառնալու համար տեսակ մը միջազգային պետութիւն, որ պիտի հակակշռէր, անկազմա-

կալօրէն ու բո՛լոր ժողովուրդներու հասարակաց շահերէն առաջնորդւած, առանձին պետութիւններու միջև գոյութիւն առնող քաղաքական, զինուորական կամ տնտեսական կնքիւմները: Արդ, կարենալ որոշելու համար թէ իսկապէս Ազգերու Դաշնակցութիւնը ընդհանակ է այդ դերը կատարելու, կարենալ դատելու համար գայն, արդար կերպով ու առանց՝ գաղափարական խանդավառութեան, իր գործերէն գատ, որոնք բաւական ծանօթ են հանրութեան, պէ՛տք է ճանչնալ գայն՝ ուսումնասիրելով իր օրկանական կազմը: Գիտնալ, թէ, վերջապէս, ի՞նչ է սա Ազգերու Դաշնակցութիւն ըսուածը, ի՞նչպէս կազմւած է ու ի՞նչ հիմունքներով:

Ազգերու Դաշնակցութիւնը տեսակ մը «միջազգային պետութիւն» է, պետութեան յատուկ կարգ մը ստորդելիներով, տեսակ մը բարոյական պետութիւն, որ ունի ժողովուրդ (մարդկութիւնը), կառավարական մեքենայ (քարտուղարութիւնը, խորհուրդը, համաժողովը), ելևմտացոյց (համեմատական կերպով հոգալու մասնակցող յետնը հինգ պետութիւններու կողմէ), նոյնիսկ իր անմիջական հսկողութեան տակ գտնուող երկրամասեր (Մատի աւազանը և Տանցիկ պատ քաղաքը ու նաև հոգաւորութեան տակ գտնուող երկիրները), բայց որ չունի հարկաբոլոր ոյժ պարտադրելու համար ինքնիքը, հետևաբար, իր հեղինակութիւնը ունի գոտ բարոյական արժէք ու անկարող է ունէ միջազգային կռիւ սկսելէ յետոյ խաղալ վճռական ու դրական դեր: Ուրեմն, պատերազմ արգիլելու կամ խաղաղութիւնը կայմակերպելու գործին մէջ, որու համար օտեղծւած է ինք, իր հեղինակութիւնը կը սահմանափակէ այնքանով, որքանով որ վիճող կողմերը կը համաձայնին ենթարկել իրեն: Պետութիւններէ վեր ու անոնց սեփական շահերէն անկախ՝ մարդկութեան շահերը հետապնդելու համար կը պակաս իրեն ղլխաւոր ստորդելիներէն մէկը, որ արդի պետութիւնը կը յատկանշէ՝ բանակը: Պարզ կերևի, ուրեմն, որ իր դերը բացառապէս բարոյական է ու կանխարգելիչ, բայց ոչ դրական ու վճռական, հաշտաւոր ու իրաւախոնակ, բայց ոչ պարտադիր ու վերջնական: Այս եզրակացութիւնը կարելի է ապացուցանել բազմաթիւ դէպքերով ու օրինակներով: Կը բաւէ յիշել իր տկարութիւնը, երբ Գէնիթօ Մուսօլինի, Գորժուի առջև մարտահրաւէր կարգաց իրեն: Կը բաւէ մտաբերել իր բռնադատւած անտարբերութիւնը իտալո-այլպանական ու Ֆրանքեուկոսլաւ դաշնագրերու կնքումին առթիւ, դաշնագրեր, որ հիմնապէս կը խախտեն փոխադարձ համաբարձութեան և իրաւարարութեան սկզբունքները՝ այնքան բարձրօրէն ու այնքան յաճախ պաշտպանւած ընէջիման համաժողովներու բեմէն: Ու նաև այնքան յաճախ ոտնահարւած:

Ազգերու Դաշնակցութիւնը որպէս «պետութիւն» ունի ուրիշ ստորդելի մը և: Ան կրնայ հարկ եղած ստեղծ պահել որոշ երկրամասերու մէջ որոշ պատու-

բակութիւններ, ունենալ հերկայացուցչութիւն, «զեռ-պաններ»։ Այսպէս է, որ ան ունէր «բարձր պատերազմ» մը Տանցիկին մէջ և յոյն-բէմալ պատերազմին հետեւեալքով՝ զաղթական եղած Փոքր-Ասիոյ յոյն և հայ ժողովուրդին տեղափոխելուն հսկելու համար «քաջարին» տօքթ. Նանսէնը, որուն «մեծապէս բարեբար» ղերը ծածօթ է գոնէ հայերուս։ Ու, վերջապէս, ան հակա-կշիռ որոշ իրաւունք ունի՝ հողատարութիւն ստանձնող պետութիւններու վրա, իրաւունք, որուն գործածու-թեան եղանակը որնայ շատ մը առարկութիւններու տեղիք տալ, քանի որ Սուրբոյ բնիկ ժողովուրդներու ըմբոստութեան ատեն Ազգերու Դաշնակցութեան խորհուրդը շուպեց նոյնիսկ լռել կուի մտած խաւերու իրաւացի կամ անիրաւ բողոքները՝ Փրանսական հողա-տարութեան դէմ։

Ազգերու Դաշնակցութեան մեքենան գլխաւորաբար կը բաղկանայ երեք մարմիններէ. 1. Ղնդիանուր քալ-տուղարութիւնը, 2. Ազգերու Դաշնակցութեան խոր-հուրդը և 3. տարեկան համաժողովը։

Ղնդհանուր քարտուղարութիւնը Ազգերու Դաշնակ-ցութեան միակ մնայուն մարմինն է. իր վայրը կը գտնուի Ժընև։ Կը համապատասխանէ «պետութեանց» վարչական մեքենային։ Քարտուղարութեան պաշտօ-նէութեան թիւը կը հասնի հինգ հարիւրի ու իրապէս «միջնադարին» է՝ կազմած ըլլալով գանազան ազգու-թեանց պատկանող Արմանլիկի անհատներէ։ Ձայն կը վարէ անդլիացի ատաշին կարգի քաղաքական գործիչ մը։ Ղնդհանուր քարտուղարին կից կայ Փրանսացի օգնական մը ու կան նաև չորս փոխ-քարտուղարներ, որ կը ներկայացնեն ջոջ պետութիւնները։ Քարտուղար-ութիւնը ունի շատ մը բաժանմունքներ, որոց իւրա-քանչիւրին կատարած ղերին, դժբախտաբար, չենք կրնար անդրադառնալ. կը գոհանանք թելով գլխա-ւորները՝ 1. քաղաքական բաժանմունք, 2. ելևմտական և տնտեսական գործեր, 3. քրանգիթի, 4. փոքրա-մասնաւորութեանց՝ գանձարմ երկիրներու մէջ, 5. հոգա-տարութեանց, 6. զինաթափութեան, 7. ընկերային և մարդկայնական խնդիրներու (կուր «սպիտակներու վաճառք»-ին դէմ, ալջուրմարութիւն և ալլն) 8. ար-դարադատական, 9. մտաւորական գործակցութեան և և։

Քարտուղարութեան աշխատանքները բաղադրեսակ են։ Նոյն՝ միակ մնայուն և տեսական մարմինն է, որ կապահովէ Ազգերու Դաշնակցութեան և պետութեանց միջև շարունակական յարաբերութիւն՝ կապ պահելով ուղղակի արտաքին գործոց նախարարներու հետ։ Այդ յարաբերութիւնը հետզհետէ կը ստանայ կարևոր ու հիմնական բնոյթ՝ ստեղծելով տեղեկութեան և քա-ղաքական ծանօթութիւններու յոյն ու մանրամասն պաշար մը։ Որոշ պետութիւններ, հետեւելով Պրաղիիոյ լուած ազգանշանին, նոյնիսկ հաստատած են ժընևի մէջ մնայուն պատերազմներ, տեսակ մը «զեռպաններ»՝ «միջնադարին պետութեան» քայքայողներէ մէջ, որ ուշի ուշով կը հետեին քաղաքական իրազարմութեանց ու Ազգերու Դաշնակցութեան մօտ կը ներկայացնեն իրենց համապատասխան կառավարութեանց շահերը։ Այս երևոյթը կապացուցանէ այն կարևորութիւնը, որ մեծ պետութիւնները կրնծայեն Ազգերու Դաշնակցու-թեան, որոշ նկատումներով, որ շատ ալ վստահութիւն չեն ներշնչեր։

Քարտուղարութիւնը պարզ « յարաբերութեանց դիւան » մը ըլլալէ զատ կը կազմէ նաև Ազգերու Դաշ-նակցութեան ողնաշարը։ Իր դիւանագիտական ղերէն զատ ան ունի վարչական խոշոր պէտք։ Ինք է, որ կը հսկէ որոշ բաժանմունքներու աշխատանքներուն վրա ու կը պատրաստէ խորհուրդին և տարեկան համաժո-ղովին անհրաժեշտ նախնական նիւթերը։ Ինք է նաև, որ կը կազմակերպէ և կը հրատարակ խորհուրդին և հա-մաժողովին նիստերը։ Թէ խորհուրդին և թէ Համաժո-ղովին անդամները, տարւայ մեծ մասը հեռու ըլլալով Ժընևէն՝ չեն կրնար իրապէս միջնադարին խնդիրներու շուրջ լայն տեղեկութիւններ ունենալ, կ'անւած իրենց ազգային հարցերով, յաճախ, պէտք ունին ջուշարա-րի»։ Քարտուղարութիւնը կը լրացնէ այդ թերին։

Անտարակոյս, Ազգերու Դաշնակցութեան ճակա-տագրին վրա վճռական ազդեցութիւն ունի քարտու-ղարութիւնը։ Իրաւ է, ան կազմած է դիւանակաշնեքէ, թայց զաղափարներու տեսակ մը աշխատանոց է, որ եթէ բաղկացած ըլլայ իրապէս խաղաղասէր ու ո՛չ ռազմապաշտ տարերէ, կրնայ մեծ ղեր կատարել։ Ինչպէս որ կայ հիմա, ան մեծ պետութիւններու ազ-դեցութեանց տեսակ մը մարդարան է, ուր կը բաղիին իրարու բազմաթիւ հակոտնեայ շահեր։ Յետազային՝ հոս է, որ պիտի կազմի ու դարգասայ իրապէս մի-ջնադարին հոգեբանութիւն։ Համաժողովին պատերազ-մներ ու խորհուրդին անդամները՝ կը ղերին հաշիկն կուզան ժընև՝ պետութեանց կամ ազգերու կողմէ ու ունին ազգային շահեր, դրկւած են գանոնք պաշտպա-նելու համար ու ամէ՛ն խնդրի կը մտտեան ազգային տեսակէտէ ու իրենց շահերը անկիւնէն, մինչդեռ քարտուղարութեան անդամները՝ դադրած են այսին-կաւ այնիցէ պետութեան պաշտօնեան ըլլալէ ու շար-ւած Ազգերու Դաշնակցութեան մէջ գործակալաբար։ Գոնէ պէ՛տք է դառնան։ Ու այդ պարագային, ան-ուշտ, միջնադարին կնճռոտութեանց վրա պիտի նային, միջնադարին շահերու տեսակէտէն։ Ազգային նկա-տումները պիտի սրբին միջնադարին մտահոգութիւն-ներու առջև։

Անցնինք Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին։ Խորհուրդը վերջին բարենորոգումէն ի վեր կը բաղ-կանայ տասնչորս անդամներէ ու կը կազմէ, եթէ կարելի է ըսել «պետութեան» տեսակ մը նախարարաց խորհուրդը, որ այտուհանրեմ կառավարութիւն մը չէ, որովհետև զուրկ է կազմ մը անհրաժեշտ ստոր-դիւիններէ։ Գործադիր իշխանութիւնն է ու ուղղութիւն կուտայ բոլոր բաժանմունքներու աշխատանքներուն։ Կը գումարել տարին չորս անգամ ու կը գրադի քաղա-քական բոլոր առևախ խնդիրներով։ Իր իրաւասութեան սահմանը տակաւին շատ որոշ կերպով ճշուած չէ։ Կընտրուի տարեկան համաժողովէն ու հաշւետու է անոր ու իր կարգին համարառուն է քարտուղարութեան։ Իր աշխատանքները չորս տեսակ են. 1. դիւանագիտական, 2. վարչական, 3. կառավարական և 4. հակախնդիր վերաբերեալ։ Դիւանագիտական աշխատանքներն են՝ հարթել գանազան կնճիւղներ, քննել քաղաքական խնդ-րները։ Վարչական՝ վարել ու ուղղութիւն տալ քար-տուղարութեան ու գանազան բաժանմունքներու, ստեղծել նոր մարմիններ, եթէ հարկ են։ Կառավարա-կան՝ վարել Տանցիկի և Սաաի կառավարութիւնները։

Հակակշռի՝ քննել փոքրամասնութեանց խնդիրներն ու պաշտպանել անոնց իրաւունքները, Հակել հոգատարութեանց արդար կերպով գործադրելուն:

Բայց խորհուրդին զլիաւոր աշխատանքը դիւանադիտական է: Ան է, որ գործադրութեան պէտք է դնէ համաժողովին տւած որոշումները, հետևի անոր թելադրանքներուն, հսկէ աշխարհի խաղաղութեան վրա, արգելի՛ պատերազմները, լուծէ ազգամիջեան վէճերը, սահմանային խնդիրները՝ պետութիւնէ պետութիւն, մէկ խօսքով կազմակերպէ խաղաղութիւնը: Հսկայ ու դժուար աշխատանք, որ դիտենք թէ ի՞նչ «կատարեալ» կերպով կը տանի խորհուրդը:

Բ.

Ընկերվարական կարծիքներ և քննադատութիւններ

Ազգերու Դաշնակցութեան բարձրագոյն մարմինը տարեկան Համաժողով է, որ կը խմբէ իր մէջ 55 ազգերու ներկայացուցիչներ: Տեսակ է դարավերջիկ ու խառնակեաց Բարեկո, ուր կը բաղկին իրարանքո՛րտր ազգերու և պետութեանց, բոլոր աշխարհակալութիւններու և բռնակալութեանց, բոլոր սոցիէ կոխան ու պգտիկ ազգերու Հակամարտ ու իրերամբժ շահերը: Համաժողովը (ինչպէս նաև Մորհուրդը) դիւանադիտական մարմին մըն է ամէն բանէ առաջ, կարծիքներու և տեսակէտներու տեսակ մը հնոց, տեսակ մը՝ դիւանադիտական նրբանցքներէ արձակ հրապարակ իջած պայքարի ու Հակամարտութեանց ասպարէզ: Ըստ Ազգերու Դաշնակցութեան հիմնական օրէնքին՝ ան է, որ կը քննէ իրեն ներկայացած ելևմտացոյցը և վերակաւորէն կը վաւերացնէ գայն: Ի դէպ, քանի մը խօսք այս «ժիջազգային» պետութեան ելևմտացոյցին մասին: Մասնակցող ամէն պետութիւն Համաձայնի ուժի տարեկան որոշ գումար մը կը մտցնէ Դաշնակցութեան սնունդը: Այդ գումարը կը տարբերի մէկէն միւրէ եօթանասուն տոթիւն: Նիւարակուսան կը մտցնէ սնունդը՝ մէկ միութիւն, Մեծն-Իրիտանիան եօթանասուն: Ֆրանսական իւրաքանչիւր քաղաքացիի վրա Ազգերու Դաշնակցութիւնը կը նստի տարեկան 25 սանթիմ: Այդ ի՞նչ ընդհանուր պատերազմ է, որուն ղէմ սպահովաբարի կարելի է տարեկան հինգ սուտմ:

Տարեկան Համաժողովին է դարձեալ, որ կը քննէ քարտուղարութեան և խորհուրդին գեկոյցները ու կը քննադատէ կամ կը Հակակշռէ անոնց գործունէութիւնը: Այդ առթիւ, ի հարկէ, պէտք է որ տեղի ունենան հրապարակային վիճարանութիւններ, բայց Համաժողովին անդամները Հարկի թէ կօշուէին իրենց այդ իրաւունքն: «Մեծները իրենց հաշիւները կը մաքրեն դուրսը, զպտիկ» ազգերուն ձայնը շատ տկար է Ազգերու Տուն»-էն ներս. ասով կը բացատրուի այս վերջիններուն յաճախակի «ելլոյթ»-ներն ու ցուցական ըմբոստութիւնները:

Բնորոշելով մէկ խօսքով տարեկան Համաժողովը՝ կարելի է ըսել, թէ ան Ազգերու Դաշնակցութեան «խորհրդարանն» է: Ու հարկէ սկիւնք մեր քննադատութիւնը: Ըսինք արդէն, որ Ազգ. Դաշնակցութեան մէջ ոչ թէ ներկայացած են ժողովուրդները Հաղապետութիւնները: Այդպէս է, որ «կեանք»-ն խա-

լական կառավարութիւնը կուգայ ժողովի՝ Փաշխտ կոմսերով, որոնք ամէն բան են բացի ժողովրդին ներկայացուցիչները ըլլալէ: Լեհական կառավարութիւնը վերջին անգամ Ազգերու Դաշնակցութեան մօտ կը փայլէր Մարաշայիտ Փիլաուսիկով: Արդ, այս հետաքրքրական, մարաշայտը ամիսներէ ի վեր ուղմական ծրագիրներ կործայ իր երկրի արևելեան սահմանադրուիին վրա: Պատերազմ ու մարտ պատրաստող այս մարդէն ի՞նչպէս կրնան աշխատուող բազմութիւնները խաղաղութիւն յուսալ: Աւելի կատակերգական կամ եղերական էր, անցեալ տարի դրամանեղ ու անբարոյ կոմս Պէթլիմի ներկայութիւնը ժընև, որպէս Հունգարիոյ ներկայացուցիչ: Ազգերու Դաշնակցութեան զաղափարական ու փոքր-քաղքենի հիմնադիրը, անուշտ, չէր կրնար նախատեսել այս խալատարութիւնը, որ կը խաղացի ամէն տարի պատերազմ և արևնէ յոնած ժողովուրդներու զխուն: Մարդիկ, որ իրենց երկիրներուն մէջ կը ծաղրեն ազատութիւնը, փոքրամասնութեանց իրաւունքները, դրացի ժողովուրդներուն ապրելու իրաւունքը, փոքր ազգերու ազատագրական պայքարը, մարդիկ, որ կը բանտարկեն, կը հալածեն, կը սպանեն, կը կեղեքեն, ժրմև կուգան արդարութենէ և Հասարակութենէ՛ ճառելու: Օր մը Ազգերու Դաշնակցութիւնը պիտի ընդունէ նաև արևելեակը քեմալականները իր ծոցէն ներս, բայց հայ աշխատարական Դաշնակցութեան ներկայացուցիչները կրնան յիմար կոյսերու պէս սպասել դրան սուջև: Այսպէս է, որ պատմութիւնը կը խարազանէ փոքր քաղքենիութեան խաղաղասիրական յիմար ցնորքները՝ դրամատիրական պետութեան մէջ տևական ու Հաստատ խաղաղութիւն Հաստատել:

Դիւրին է յայտարարել թէ Ազգերու Դաշնակցութիւնը կը պահանջէ պատերազմին բարձումը: Դիւրին է կազմակերպել զիստափութեան Համաժողովներ, երբ կատարութիւնները իրենք են որ կը նշանակին պատերազմները և ոչ թէ ժողովուրդներն են, որ կըմտքնեն գաղմտք, անյոյս, արդիւնէ ունէ արդիական սպասել: Քաղաքական ժամանակաշրջանի մը մէջ կապրինք, երբ բացառապէս անկայուն և խախուտ են կառավարութիւնները, հետևաբար նոյնքան փոփոխական են նաև ժրմև մեկնող պատերազմները: Բարեմիտ ու անկեղծօրէն խաղաղասէր է. շէրիոյիմ յաջորդացի խարդախ ու պատեհապաշտ Պրիանը, ընկերվարական Մատոնալտիմ՝ կայսերական Սըր Օսթին Չեմպլըլլէյն ու դարձեալ ասորեայ դիւանադիտական աղմուկներուն մէջ սուղեցաւ քաղքենի խաղաղութեան նաւը: Ժողովուրդները՝ չնն ուզեր պատերազմիլ այլևս դրամատիրութեան գիշատիչ արտոնակներուն Համար ու իրենք են, որ պէտք է ընտրեն իրենց պատերազմները:

Վիլսըմ, իր շատ մը միամիտ Հուսալքներուն մէջ վրիպելէ յետոյ, վրիպեցաւ նաև՝ կարծելով, որ կը բաւէ զաղքենի Համաձայնութիւնները խաղաղութեան տեսակէտէ վտանգաւոր յայտարարել՝ գանձեց արդիւնու Համար: Ընկերվարականները վաղուց է ըսած են, որ զաղտնի զինակցութիւններն ու զաղտնի դիւանադիտութեան այլ կարգի յարաբերութիւնները պիտի տևեն այնքան ատեն, որքան որ Ազգերու Դաշնակցութիւնը յշտունայ ժողովուրդներու իրական միջպետութիւն մը՝ պարտադրելով ինչզինքը նաև զէնքի ուժով: Վերջերս

տեսանք դիւանագիտական հին ձևերու և ուժերու հասարակչութեան նախկին ըմբռնումին յատկանշական վերադարձ մը: Եւրոպայի գանազան անկիւններուն մէջ սկսան քուսնիլ դադողնի կամ կէս-գադողնի պայմանագրութիւններ, որոնք ըստ երևութիւն, բոլորովին համաձայն կը թւին Ազգերու Դաշնակցութեան հաստատած սկզբունքներուն հետ, բայց իրականին մէջ բացարձիկ նմանութիւններ ունին նախ քան պատերազմը կնքած պատերազմական դաշինքներուն: Միայն խմբագրութեան եղանակն է տարբեր: Նոր պայմանագրութիւններուն մէջ՝ ազգերու ինքնորոշման, պատուհան, իրաւունքներու անձեռնմխելութեան մասին կան սիրուն և դատարկ բառեր, որ կը նորակեն քուն մտքը: Դեռ վերջերս ակնատես եղանք նոր երկու դիւանակցութեանց՝ իտալականական և ֆրանսեական: ուղղւած միկզմէկու դէմ: Վիլսոնի գեղեցիկ յոյժ «գադողնի դիւանագիտութիւն»-ը վերջացած տեսնելու Ազգերու Դաշնակցութեան շնորհիւ՝ իրեն հետ մտաւ զերեզման:

Ընկերավարութիւնը աշխատաւոր բազմութիւններու ուշադրութեան յանձնելով այս երևութիւն՝ չի կարծեր թէ յարձակած կըլլայ Ազգերու Դաշնակցութեան վրա՝ քաղաքներ ընելով դրամատիրական պետութիւններու վտանգաւոր ծրագիրները՝ ընդհակառակը, ան կը կարծէ իրապէս օգնել խաղաղութիւնը ցանկացող բոլոր ուժերուն՝ պատերազմին դէմ կռուելու համար: Որովհետև պէտք չէ մոռնալ, որ Ազգերու Դաշնակցութեան ներկայութիւնը ու իր ազմկարար նստաշրջանները՝ իբր թէ կազմակերպած դիւանագիտութիւնը իրականացնելու համար՝ կը շփոթեն ու կը քնացնեն միջադատային բանաւորութեան ու աղքատ խաւերու մէկ որոշ ստիպող: Անշուքի լրտեսը, Փաշիստ կոմսերու, լեհ մարալխտներու, հունգար դուքսերու խաղաղասիրական ճանքեր, որքան ալ վրաս բաց, այսուհանդերձ կը մթաքնեն բարեմխտ մարդոց սեստողութիւնը: Պատերազմը անոնց կը թւի անհնար. չէ՞ որ Ազգերու Դաշնակցութիւնը կը հսկէ: Միջադատային ընկերավարութիւնը սկիզբէն իսկ չէ դադրած յիշեցնել աշխատաւոր մարդութեան ու փոքրիկ ազգերու, որ ամէն ատենէ աւելի պէտք է գգոյլ ըլլալ պատերազմին դէմ ու մեծ յոյսեր չկապել Ազգերու Դաշնակցութեան:

Միև կողմէ, սակայն, ընկերավարական-բանաւորական Միջազգայինը ու բոլոր երկիրներու ընկերավարական կուսակցութիւնները չեն դադրած Ազգերու Դաշնակցութեան հիմնելէն ի վեր՝ զօրավիգ կանգնել անոր բոլոր աշխատանքներուն, որ անկեղծօրէն ուղղւած են պատերազմի դէմ: Յամառ ու հետևողական ճիգ է բազմը անոնց կը թւի անհնար. չէ որ Ազգերու Դաշնակցութիւնը մնայ կանգուն ու զարգանայ, դառնայ աւելի ժողովրդական ու կենսունակ: Ընկերավարութիւնը կուսակցութեան պատերազմները կրճատող ամէն դաւի դէմ ու աշխատած է վրիպցնել մեծ պետութիւններու բոլոր խաղերը: Հարկ չկայ յիշել Մաքսոնիստներու, Է. Վանտրիլիստներու, Լուի Տը Պրաբլիստներու, Ռուսներու և այնքան ուրիշ ընկերավարականներու ստանալակարգ դերը Ազգերու Դաշնակցութեան համաժողովներու, դիւանագիտութեան յանձնարարներու և խորհուրդին մէջ: Որքան ընկերավարական ներկայացուցիչները աշխատած են անյաջողու-

թեան մատնել Սըր Օսթէն Զէմպլըիէնի և ուրիշներու առաջարկը խորհուրդին նստաշրջանները երեք վերածելու: Մեծն-Բրիտանիոյ արտաքին նախարարը կառարկէր, որ իւրաքանչիւր արտաքին գործերու նախարար, որ Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին կանգամակցի, տարին առևաղի երկուգլուխ ամիս կանցնէ ժընև ու շատ կը գտնէ այդ ամանակը: Ընկերավարութիւնը անոր պատասխանեց՝ առաջարկելով, որ կառավարութիւնները նշանակեն մնայուն ու հեղինակաւոր պատուիրակներ, ինչպէս Փրանսական կառավարութիւնը ըրած էր ի պատիւ «համերաշխութեան փիլիսոփայ» Լէոն Պուրթուայի՝ զայն նշանակելով Ֆրանսայի առաջին պատուիրակ ու մնայուն անդամ խորհուրդին:

Բայց այս բոլորը պատճառ մը չեն, որպէսզի ընկերավարութիւնը չնշմարէ խորհուրդին ընտրութեան ատեն կատարած խաղերը ու ռազմական պատրաստութիւնները եւրոպական ջամաջամասին ցամազան կէտերուն վրա, Պալքաններէն մինչև Լեհաստան: Աշխատելով հանդերձ ուժեղացնել Ազգերու Դաշնակցութիւնը, պաշտպանելով զայն քաղաքներ խարդախ ու անուղակի յարձակումներու դէմ (որովհետև ո՛չ ոք կը համարձակի ճակատէն զարնել խաղաղութիւնը), Զանալով հանդերձ որ, օրինակ, Ռուսերային Միութիւնը զայն ու նստի ժընևի կանաչ սեղանին շուրջ չորս տարիներէ ի վեր հայհոյելէ յետոյ, ան չի մոռնար, որ ինչպէս ալլուր նաև ժընևի մէջ կը զծագուին նոր դիւանակցութիւններ և նոր պատերազմի կարելութիւններ: Ան չի մոռնար ամէն մտքին առթիւ շահագործել Ազգերու Դաշնակցութեան իրապէս համաշխարհային իմը տարածելու համար իր կենդանի խօսքը, ըսելու համար բանաւորական բազմութիւններու, որ վերջին հաշիւն իրական խաղաղութիւնը ու ժողովուրդներու ապաստաբարութիւնը քաղաքներ ազգերու այդ քաղաքներ դաշնակցութեանն չէ որ պիտի ծնի:

Յնորք է յուսալ պատերազմներու վախճանը հասարակակարգի մը մէջ, որ ամէն վայրկեան կը ստեղծէ կռիւ ու անիրաւութիւն: Որքան ատեն որ կան յերի ու հպատակ ժողովուրդներ, ազգեր, որ կը կեղեքին, կը տարապիւն, կը հեծեն բռնապետութեան տակ, որքան ատեն որ կան մարդոց ու ազգերու ընչադուրկները, որքան ատեն որ կան երիցս անիրաււած ու երիցս արգար Հայաստաններ, անթիլ ու մերկ բազմութիւններ ու միև կողմէ յղիացած դասակարգեր, որ ստրուկ, հնարաւոր ու սղենք մի՛նակի մէջ կը պահեն բազմամիլիոն ժողովուրդներ, որ կը սնանին ուրիշներու արիւնովը, պիտի ըլլայ նաև պատերազմ՝ քաղաքացիական կամ համաշխարհային, ազգային կամ միջազգային: .

Այս տխուր երկարաշունչ վրա շատ անիրաւութիւններ կան, որպէսզի կարելի ըլլայ հաւատալ թէ առանց լուծելու աշխատանքի և դրամադուլտի, զրկւած ազգերու թշուառութեան ու պարարտացած դասակարգերու բռնութեան յառաջադրած խնդիրները՝ հնարաւոր է ինչ որ քաղաքներ Ազգերու Դաշնակցութեանը խաղաղութիւն հաստատել: Հոս էր Վուտտ-Վիլսոնի վրէպ: Հո՛ս է նաև երիցս մարտիկու և երիցս հերոսական այս աշխատաւոր ժողովուրդին թշուառութեան դաշտնիքը:

ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԻՆՆԻՆ

# Թ ու ը ի ի ո յ շ ու ը ջ ը

Վերջին երկու ամիսներու ընթացքին, քեմալական ոստիկանութիւնը նորէն իր մտրակը շահցուց համայնավարներու դէմքում:

Նոյ. 18-ին, բոլոր հեռագրական գործակալութիւնները կը ծանուցանէին թէ համայնավարներ ձերբակալած են Պոլսոյ, Իգմիւրի և Ատանայի մէջ: Առաջին օրերը Յէ կը հաւելին կալանաւորներուն թիւը: Հետագնդումները շարունակելով, աւելի քան հարիւր հոգի հսկողութեան տակ առնեցան: Բայց հետզհետէ դատման կատարեցան, և այժմ բուն գործիչները կամ կասկածելիները կը մնան բանտ:

Առաջին անգամը չէ, որ Մուստաֆա Քէմալ իր կողմէր կը ցուցնէ համայնավարներուն, ամէն իւրաքանչիւր սաղմին մէջ խեղդելու վճռականութեամբ: 1919-ին, երբ նոր ձև ու մարմին կանոնէր Թուրքիոյ ազգայնական շարժումը, ինկիւրի չտեսնելու գարկաւ կարմիր դրոշակաւներու աշխատանքը: Մինչև անգամ թոյլատրեց, որ Թուրք համայնավար խմբակցութիւն մը կազմէի, մտերիմներու և ծանօթ անձերու մասնակցութեամբ:

Այդ օրերուն, փրկութեան թանկագին գօտի մըն էր խորհրդային իշխանութիւնը. ուստի և օգտակար կը նկատէր անոր հանելի ո՛ւկէ ձեռնարկ: Թունդ յետադիմական և պատասխանատու մարդիկ դարպաս կընէին նոր հոսանքին ոչ թէ արեւտը արեւտին համար, այլ իբրև միջոց: Նոյնը և սահմանի միւս կողմէն: Մոսկուսի չէ՞ որ սարքեց Արևելեան ժողովուրդներու համագումարը, 1920 սեպտեմբերին, նախազահուրութեամբ Ջինովիևի և մասնակցութեամբ ինկիւրի և Նուրի փաշաներու, համաթրքական և համախաղական ջահակիրներու, Կովկասի և Միջին Ասիոյ բոլոր խաւարալու աւատապետներուն և մոլլալիներուն:

Բայց երբ Թուրք նորընծաները փորձեցին խօսքէն գործի անցնել, պղատոնական սերահաբուրթեան փոխաբէն իրական պատասխաններ կատարելով, Մուստաֆա Քէմալ սթափեցաւ, և առանց շատ բարակը նայելու, առտու մը Տրապիզոնէն ծովը նետել տուանոնց առաքելով, Մուստաֆա Մուպչին և ընկերները, թիւով 21 հոգի:

Մանր էր այս հարածը, և դառն՝ Մոսկուայի համար: Սակայն, Կրէմլինի իշխանաւորները, իբրև փորձ պրոլետիկոսներ, ձայն չհանեցին, ամէն ժամանակէ աւելի պէտք ունենալով Թուրքիոյ բարեկամութեան և զինակցութեան: Կարգ մը թերթեր, Կովկասի մէջ հրատարակած թուրքերէն «Ենի Տիւնեա»-ն և ուրիշները քիչ մը պողպուացին, և խնդրել մարեցաւ քաղաքական ղէպներու ժխորներ մէջ:

Միայն թէ, սերմը ցանած էր, և նոր քարոզիչներ կերթեկեղէն, կարելի վառ պահելու համար:

Վերջին ձերբակալութեանց առթիւ, ինկիւրի հրատարակութեան տուաւ կիսակատար պատմութիւն մը, որ նոր լոյս կը սփռէ համայնավարական գործունէութեան և ռուսեթուրք զինակցութեան վրա:

Այդ պատմութեան համաձայն, 1920-ին, երբ Թուրքիա կը դալարէր ծանր ստացնալի մը մէջ,

Ալերբէշան կը կարմրէի, մասնակցութեամբ Մուստաֆա Մուպչիի: Յետոյ, յուլիսին, լուր կը տարածուի թէ ինկիւր «կանաչ բանակ» մը կը կազմէ Ռուսիոյ մէջ: «Աղբային պայքարի առաջին շրջաններուն, շատ մեծ օգուտներ կը սպասուէին ռուսներէն, որովհետև անոնք ալ թուրքերուն պէս կողորդ-կողորդի կը պատերազմէին դաշնակից պետութիւններուն դէմ: Այս պատճառով ամէն մարդ սկսեցաւ համակրանք կը տածէր Ռուսիոյ մասին, առանց հասկցած ըլլալու ռուսական յեղափոխութեան նպատակը և բնոյթը»: (Սօմ Սաաթ):

Եւ ահա «կանաչ բանակ»-ի բջիշներ կը կազմէին Թուրքիոյ մէջ ալ: «Կազմակերպութիւնը դադարեցնելու առաջ կը տարւէր: Անհամապարտութիւնը կը կատարէր քաղաքական կուսակցութիւններու ձևով: Նոյն իսկ ծրագիր կանոնադիր մը սպառաւած էր Պրուսայի մէջ:

Երբ յոյները Պրուսա մտան, ղէպի իսկիւնէն յառաջանալով, շարժումը աւելի ծաւալեցաւ: Ծիշտ այդ միջոցին ինկիւրի կը հասնէր Վէրպօֆ անուն ռուս բուլշեիկ մը, որ դադարեցնէ Անատուլը զրկած էր, Թուրքիոյ ազգային պաշտպանութեան Պոլսոյ ճիւղին կողմէն:

Այս մարդը կը սկսի քարոզութիւններ կատարել Ռուսիոյ կարգ ու սարքին և համայնավարութեան մասին: Ոգևոր ճառեր կը խօսի և կը խոստանայ վերադարձին համոզել Լենինին ու Տրոցկին, որպէսզի Թուրքիոյ հայթայթեան անբաժնու ղէպներու ու թողա՛նօթեանը: Թէ և կըսեն թէ ղժժուս կը վերադառնայ, բայց իրողութիւնը այն է, որ կորիզ մը կը կազմուի, մասնակցութեամբ կարևոր անձերու: Ժողովներ կը դուժարեն ինկիւրիի թաղանթական պարտէզին և ընթերցարանին մէջ: Վիճարկութիւններ կը կատարուին համայնավարութեան առաւելութիւններուն և անպատեհութիւններուն մասին: Բոլորն ալ գրգռած՝ օտար զրաման ղէմ, լուխեայն կընդունէին թէ «կանաչ բանակ»-ը համայնավարական կազմակերպութիւն մը պիտի ըլլայ:

Այսպէս կամ այնպէս, մարմին մը կը կազմուի ինկիւրիի մէջ:

Այդ մարմինը ծրագիր-կանոնադրին հետ, կը պատրաստէ երդման բանաձև մը, որ կը պարտադրէր դադարեցնելու երևան չհանել, առանց վերապահութեան գործադրել կուսակցութեան հրամանները ևն.:

Մարմինը գործի կը սկսի նոր անդամներ ճարելու համար, և կապ կը հաստատուի Վէրպօֆի հետ:

Այստեղ կընդհատուի պատմութիւնը, անշուշտ ինկիւրիի հրամանին վրա, որովհետև յայտնութիւններու ընթացքին կը յիշուի շատ մը բարձրաստիճան անուններ, նոյնիսկ ինկիւրիի պետական տպարանին տնօրէնը:

Ոնչիւրը այն է, որ համայնավարները անգործ չեն կեցած Թուրքիոյ մէջ, զինադադարի խառնակ օրերէն մինչև այսօր: Նոյնիսկ թերթեր կը հրատարակէին անոնք, «Այլուրժ» (Այլ)՝ Պոլսոյ մէջ, «Ենի շայաթ» (Նոր Կեանք)՝ ինկիւրի և «Ենի Տիւնեա» (Նոր Աշխարհ): 1921-ին, Երրորդ Միջազգայինը միջամտելով, կը միացնէ զանազան խմբակներ և հրատարակութեան

կը տրել նոր թերթ մը, «Օրդա-Չէջեծ» (Մուրճ-Մանգաղ)։ Սակայն, 1925-ին, անդորրութեան ամբաստանման օրէնքին վրայ, երբ անսահման իրաւասութիւններ կը տրուէին անկախութեան դատարաններուն, Թուրքիոյ համայնավարներն ալ կը կծկուին, և շատեր կը կծկեն։

Այն ատեն ծանրութեան կեդրոնը կը փոխադրուի Վիեննա, որ վառարանն է Բալկաններու և Մերձասոր Արեւելքի կարմիր մարզանքներուն։ Այդ զարգի վերջին համագումարին, իբրև Թուրք պատերազմներ կը մասնակցին Տոքթ. Շէֆիք շիւսնի (ձերբակալած), բանաստեղծ Վէլտաու Նէտիմ (պաշտօնեայ Արզոսի) և ուրիշներ։ Այս ժողովի մէջ կորուշի 1. Կազմի Թուրքիոյ համայնավարական կուսակցութեան կեդր. կոմիտէ մը, որուն անդամներուն կէտք Թուրքիա պիտի հաստատուէին, իսկ միւսները՝ արտասահման։ 2. Իւրաքանչիւր նահանգի մէջ ստեղծել նահանգային կոմիտէներ, որոնք իրենց կարգին պիտի կազմէին գիւղացիական և բանւորական կոմիտէներ։

Իբրև իրական գործ, Թուրք համայնավարները յաջողած էին աստիճան մը ազդել Պոլսոյ «Բանուորներու Բարձրացման Միութեան» վրայ, որ արգելեցաւ վերելիս, և քարոզութիւններ կատարել Պոլսոյ ծխախոտի գործարաններուն, Իզմիրի, Ատանայի և ուրիշ վայրէ մը վաշտերու մէջ։ Ուսիւսուսութեան հետասպնդումներ կը կատարէր անցնել Կոկուսներէն ի վեր, մանաւանդ երբ ձեռք անցուց Թուրքիկ մը որ կը յանձնարարէր դրամ շուս Օղանաւային Ընկերութեան։ Անակնկալ խուզարկութեանց և փոխադարձ մատնութեանց հետեւանքով, բոլոր Թակարդը ինկան և հիմա պիտի դատին իբրև պետական դաւաճաններ։

Այս առթիւ, սոցիոթական կազմախօսին հետեւելով, Թուրք մամուլը կաշխատի օտարներուն վրայ ձգել մեղքը։ «Այդ արեւածամիդիները դանազան ազգակներու մղուածով փորձած են յեղափոխութիւն հանել և տանել ու վրայ ընել երկրին ընկերային վիճակը։ Ուշագրում է, որ կայանաւորներուն միջև զաղափարական կամ բարոյական ուժէ կապ չկայ։ Անոնց մէջ կան քիչ-շատ ուսում արած երիտասարդներ, բանւորներ, յոյն սափրիչի աշխտներ, վառանաւթաւ հայեր և Թափառական ուսուցիչ»։ (Ազաւ, 21 նոյ.)։

Աւելցնենք թէ, մինչև հիմա հրատարակած անուններուն մէջ հայ չկայ։ Իսկ բուն շարժման վարիչները կը համարուին Կոնցպէրիկ, ուսումնացի հրեայ մը, Մաքսիմով, յոյն (այժմ երեսփոխան Յունաստանի մէջ) և հրեայ Կոտորակի, անպա՛մ Երրորդ Միջազգայինի և Թիջակից Մոսկուայի Փրատային։ Պոլսէն յետոյ, գործունէութեան անմիջական կեդրոններ եղած են Տրապիզոն, Կարին և մանաւանդ Ատանա։

Այս առթիւ, պերճաբոս է համայնավար և Թունդ քէմալական «Բանուորիկէ»-ի ողբը.

— «Ո՛րքան դիւրաւ կը պատուի «Նոր Թուրքիայ» ներքը, երևան հանելով հին քշնամուրթիւր յառաջդիմական և ազատական բարձր գաղափարներուն դէմ» (12 դեկտ.)։



Վաթնուճական Բալկաններէն ի վեր, Թուրքիա դրողած է արեւելեան նահանգները «Իւրազդեցներու»։

Այս գործին մէջ իր ամենէն կարճ քաղաքականութիւնն էր ցեղ ցեղի դէմ հանել, և տկարը շարդիլ տալ զօրաւորին։ Յետոյ, սիրաշահիլ զիւրա աշխրէթները, և անոնց սարսափին տակ պահել ըրայս ժողովուրդը։

Պէտէրխանիներու առաջին ապստամբութենէն, բայց մանաւանդ հայկական բարեկարգումներու խնդրին արծարծումէն յետոյ, յատկապէս մշակեցաւ քերտերը Հայերուն դէմ հանելու ծրարիքը, և ստեղծեցան «համիտէյի» գունդերը։ Մնացածը ծանօթ է։ Հիմա հայեր չկան, որպէսզի մէկը միւսով հակակռէ։ Թուրքերն ալ անհամեմատ պակասն են. իսկ մնացած ժողովուրդը, զրուսթիւնը, կամազ-կամաց իր կապը կը կտրէ Թուրք պետութեան հետ։

Պէտք չէ շատ լաւատես ըլլալ և կարծել թէ զիւրտերը բոլորովին դարձի եկած են, և այս կամ այն աշխրէթը այլ ևս գործիք չըլլար Թրքական իշխանութեան ձեռքը։ Սերունդներ պիտի միւրտուին արիւնով, որպէսզի այդ օրան հասնինք։

Իայց, կատարած է մեծ փոփոխութիւն մը։ Արեւել արտասորին հոսեցաւ 1926 փետրուարին, և կը հոսի մինչև այսօր։ Շէյխ Մայիտի տարերային պոռթկումին, անհաշիւ կախաղաններուն, շարդերուն և տեղահանութեան յալըրդեց շարժման շրջան մը. իսկ այսօր արդէն կը տեսնենք մարտական կազմակերպւած ոյժ մը, որ ուխտեր է շարունակել կուրսը։

Եւ աւելին։ Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, 1927-ի աշնան դումարեցաւ զրտական համաժողով մը, մասնակցութեամբ ազատադրական շարժման վարիչներուն և բուն Բիւրոսիստանէն նշանակած պատգամաւորներու։

Առանց այդ ժողովին մանրամասնութեանց մէջ մտնելու կամ բանաձևեր պրպտելու, ըսենք որ անոր ամենէն մեծ գործը եղած է ստեղծել զրտական միացեալ ճակատ, և ընտրել կեդր. վարիչ մարմին մը։

Այս երկու իրողութիւնները կոչւած են ընդհան և գործնական ճամբու մէջ դնելու զրտական շարժումը։ Դր անձև և տարերային հանգամանք ունէր մինչև հիմա։ Առաջին կէտը՝ միացեալ ճակատը՝ պիտի փակէ գանազան արկածախնդրութեանց դուռները, անշուշտ եթէ կեդր. Կոմիտէն տիրաբար վարէ գործերը։ Գաւառիք չէ, որ զիւրտներ ալ, մեզի պէս, ունին եթէ ոչ ծովերէ ծով, գոնէ լեռներէ լեռ սաւառնող ծրարիներն։ Անոնց երազած Բիւրոսիստանը կանցնի պարսկական սահմանը, կիջնէ մինչև Միջագետքի խորերը, իսկ Թուրքիոյ մէջ՝ կերկարի մինչև Միջերկրական։

Միւս կողմէ, իբրև շահակից-դիմադիրներ, Թուրքիա և Պոսթոլային Ռուսիա ամեն իսարախոսութիւն կը փորձեն, զիւրտերու աջատաղարակ շարժումը իր ընդհան միջավայրէն շեղեցնելու և Պարսկաստանի կամ Անգլիոյ (Միջագետք) դէմ ուղղելու համար։ Երկու դաւաղիրները պահ մը յարողեցան զբողոքի պարսկական սահմանադրութիւն ցեղերը և գրաղեցնել թէհրանի կառավարութիւնը. իսկ 1927-ի սկիզբը Շէյխ Մահմուտ քալից Միջագետքի վրայ, իբրև «Բիւրոսիստանի Թագաւոր», ծանր դառ մը առնելով։ Պարսկական կառավարութեան և հանրային կարծիքին վճռականութեան առջև, Թուրքիա ստիպեցաւ ամփոփել ինքնիջը, գոնէ երևութապէս, և նոյնիսկ իբրև զոհ ներկայանալ, անցեալ տղտոտ-սեղանմաբերին, երբ

Զախմախիչ պարտութիւն մը կրցն Արարատի զիւրտե-  
րէն չիսկ բոլլեկիեան հիւպատոսներն ու գործակալները  
կը շարունակեն հանդիպումներ սարքել զանազան  
զիւրտ ղեկավարներու հետ, իջրորմի, Տրապիզոնի,  
Ուրմիոյ, Մարմաստի և Թաւրիզի մէջ:

Արք, մեր քաղած տեղեկութիւնները կը հաստա-  
տեն, որ քրտական անդրանիկ համադրմամբ որոշած  
է ադատադրական կոբուր ամփոփել Թուրքիոյ մէջ և  
միայն անոր դէմ, իբրև իրական թշնամի. իսկ հարե-  
ւան երկիրներուն՝ Միջագետքի, Սուրիոյ և մանաւանդ  
Պարսկաստանի հանդէպ մշակել բարեկամական սերտ  
յարադրութիւններ:

Անկղծօրէն գործադրելով այս որոշումը, զիւրտ  
ադատադրական կոմիտէն ոչ միայն քաղաքական հա-  
տուութեան ապացոյց մը աւած կըլլայ, այլ և մեծա-  
պէս կը դիւրացնէ անկախութեան պայքարը, որուն  
մահացու թշնամին իսկպէս որ թուրքն է:

Այս համադրմարին և Արարատի զիւրտերու սխ-  
տեմատիկ յարձակումներուն կը գուազդիպի Թուրքիոյ  
բարենորոգչական նոր գաւեշար:

Անցեալ նոյ - 30-ին, զէմալական կառավարութիւնը  
և յետոյ Աղզ. Մեծ ժողովը, որ նոյն խմբակցութեան  
երկրորդ անունն է, առանց երկար վիճարանութեան  
որոշցին ընդհ. ընդհ. կամ մարդպան մը նշանակել  
արևելեան նահանգներուն համար, վերջնելով պաշար-  
ման վիճակը: Այս պաշտօնատարը (Իպրահիմ Թալի  
պէյ), որ Տիարպէզերի պիտի նստի, պիտի ունենայ  
արտակարգ լիազօրութիւններ 18 նահանգներու վրա:

Արեւ խօտըով, զինուորական դրութեան տեղ, կը  
հաստատուի քաղաքային դիկտատորութիւն: Համարեան  
չըջանին, գրաքննիչ մը ունէինք, որ խմբագիրներուն  
կը պատուիրէր «խնդ» բառը չգործածել (Սուլթանին  
եղբոր՝ Մուրատի խնթութեան ատթիւ), այլ չի-  
մար: Այժմ ալ, երբ Վանի, Բաղէշի և իրքրումի կարգ  
է չըջանները քրտական ապստամբութեան հնոցներ  
զարձած են, էնկիւրի յարձար կը դատէ պաշարման  
վիճակը ջնջել և փոխարէն հաստատել ուրիշ վարչաձև  
մը, միևնոյն իմաստով — կտրել-կտորելու, հարըս-  
տահարելու և թրքացնելու առաջադրութեամբ:

Մարզպան Իպրահիմ Թալի պէյ իր տրամադրու-  
թեան տակ պիտի ունենայ բարձր պաշտօնեաներու  
չճախումը մը, ներկայացուցչներ բոլոր գործավարու-  
թիւններէն, և 80,000 ոսկի վարկ: Իրեն պիտի են-  
թարկին կուսակալները:

Ձաւեռաին զիչ մը լուրջ անգամանք տալու հա-  
մար, կառավարութիւնը որոշած է իրենց տեղերը վե-  
րադարձնել՝ Վարձատեան նահանգները փոխադրած  
հայրենակիցներէ ոմանք, ինչպէս աւետեց ներքին  
գործավարը: Բայց նոյն մարտը նոյն ժողովին մէջ  
չեւտեց թէ՛ «այդ դաւաւներու չըջուն և հաստատուն  
ստիկան-գինդարներու թիւին վրա նոյնչափ մըն ալ  
աւելցնած և սահմանադրութեանը օրօքը կրկնա-  
պատկաւած է»: Արդարև, մէկ ու կէս միլիոն ոսկի վարկ  
յատկացած է ստիկան-գինդարներու գործցման հա-  
մար, ինչպէս հաղորդեց վարչապետ Լամէթ փաշա:  
Այս դումարը պիտի հայթայթուի «լեռալ» գոյքերու

վաճառումէն, — հայ ժողովուրդի հանրային և ան-  
հատական հարստութիւններէն, որոնց աւարը կը շա-  
րունակել անխնայ, և օրը օրին թիւած օրէնքներով:  
(Կարգը հասած է արդէն Պոլսոյ ազգային կալածնե-  
րուն, որոնք արձանագրւած են բարոյական անձնա-  
տրութեանց վրա):

Միևնոյն ատեն, որոշած է 250 թուրք ուսուցիչ-  
ներ զրկել արևելեան նահանգները, պարտաւորիչ ծա-  
ռայութեան պայմանով, որպէսզի թրքացնեն զիւրտ  
մանուկները: Իբրև լրացուցիչ մաս ընդհանուր ծրա-  
գրի մը, Կովկասէն և ուրիշ վայրերէն թուրքեր պիտի  
տեղաւորեն այդ դաւաճներուն մէջ, արհեստական  
մե,ամասնութեան մը հնոցին մէջ հալեցնելու համար  
որը մնացած քրտութիւնը: Չէ՞ որ վերջերս որոշած  
էր 2500 սուներ շինել Վանի, Պիթիսի, Խարբերզի և  
Տիգրանակերտի մէջ...

\* \* \*

Մինչ այս մինչ այն, էնկիւրի կը շարունակէ  
զօրացնել իր բանակն ու օղային ոյժը: Վերջերս  
թուրք թերթերը ուրբանութեամբ կարձանագրէին թէ  
Օղանաւային Ընկերութիւնը 200 սաւառակ նւիրած է  
բանակին: Այս ընկերութիւնը կազմած է կայսերական  
Գերմանիոյ Նաւատորմի Դաշնակցութեան ծրագրին  
վրա, և անողորմաբար կը կեղեքէ ժողովուրդը, դրամ  
կորցնու համար: Նախորդ չըջաններուն ունէին «Միւ-  
տաֆաայի Միլիթան» (Ազգային պաշտպանութիւն),  
որ միևնոյն ձեւի կողպուտներով նաւատորմ կազմել  
կուզէր: Թուրք թերթերը մինչև 12 միլիոն ոսկի կը  
հաշեն Օղանաւի Ընկերութեան հուսաքած գումարը:

Աւանց այս ձեռնարկներուն ալ, նոր թուրքեան իր  
չ'մտացոյցին 40%-ը յատկացուցած է ազգային  
պաշտպանութեան: Քէճաղական իւլմուտացոյցը 90-120  
միլիոն ոսկինէն բարձրաւոր 194 միլիոնի (1927), իսկ  
այս տարի կը ներկայացնէ 206 միլիոն (2,200,000,000  
Փրանք): Այս գումարին դիմաց, բանակը, նաւատորմը,  
զինուորական գործարանները ևն. կը ներկայացնեն 68  
միլիոն ոսկի. ընդհ. ապահովութեան վարչութիւնը՝  
4 միլիոն, ոստիկան-գինդարութեան ծախքը՝ 9 միլիոն,  
ուրեմն աւելի քան 80 միլիոն ոսկի՝ զէմալական իշխա-  
նութիւնը և անոր յաշիտակած հողերը պաշտպանելու  
համար: Այս վիթխարի գումարին դիմաց, չոքս միլիոն  
ոսկի յատկացած է հողագործներուն, իսկ վեց միլի-  
ոն՝ հանրային կրթութեան, ինչ որ լեզու հանած է հին  
դպրոցի հայրենասէր մը, «Քրտան»-ի ձէվտէթը...

Եւ սակայն, Թուրքիա մտահոգ է նորէն:  
Դեկտեմբեր վերջեր, զէմալական «Ճիմհուրի-  
յէթ» կը խորհրդակալէր, յիշելով անգլիտալական բա-  
նակցութիւնները Միջերկրականի մասին.

— «Միջերկրականի խնդիրը կարծուածին չափ պարզ  
չէ: Կը տեսնուի թէ պետութիւնները չեն դադարած կրտի  
հետ յապալել: Պետ է ուշադրութեամբ հետևել կա-  
ցութեան: Մենք ուշադրութեամբ կը հետևիմք »:

Մե՛նք ալ:

# Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

Ձ Ի Բ Օ

(Ձիրբայի վարդապետի)

Պարսկա-թրքական սահմանի վրա, բաւական ատենէ ի վեր բոլորովին զբոսարանի դարձած, լեռնային Սոմալի գաւառի գաւառներէն մէկն է Ձիրբայի վարդապետը, որ փոքր տարիքէ մէջ Սալմաստի Մահլամ գիւղը տեղափոխուելով՝ Մահլամցի Ձիրբո անունով ճանչցած էր:

Կեղատեսիլ Մահլամի պատմական ու հերոսական լեռներու ստորոտը, սև ու սրբատաշ քարերով հինաւուրց և հոյակապ եկեղեցիին շրջաքաղի դարևոր թթենիին տակ, իր աշակերտական կարճատև շրջանը հաղի բոլորած Ձիրբոն կամաց-կամաց գիւղի ամենավառվոտն և խոստմնալից պատանիներէն մէկը կը դառնայ և հոն դառնող Ֆէտայիներու իւր համակրանքին կարծանանայ: Պատանի Ձիրբոն մեծ խանգավառութեամբ կը սերտէ Ֆէտայական կեանքի դասերը ու հետաքրքրութեամբ կը հետեւէ յեղափոխական գործունէութեան Սալմաստի շրջանի անցուդարձերուն:

Իր պատանեկութեան շրջանին իսկ կը ճանչցի իր բնորոտ և կորովի մէկը և իր յանդուած ձեռնակներու նախափորձերովն իսկ կը դրաւ իր բնագաւառի դաշնակցական խմբակներու և ականաւոր գործիչներու ուշադրութիւնը: Անոնք իրաւամբ պտտիկ Ձիրբոն մէջ կը նախատեսեն ապագայ ռազմիկն ու վաստակաւոր յեղափոխականը:

Սալմաստայայ սովորութեան համաձայն Ձիրբոն ալ իր ծնողներու կողմէ շուտով կովկաս կը շրջի հոն արհեստ մը սորվելու կամ վաճառականի մը քով ծառայելով՝ դրամ շահելու նպատակով:

Անհանդուրժելի կռուան անոր նոր կեանքի պայմանները, և ան արդէն իսկ առիթներ և հնարաւորութիւններ կորոնէր աւելի մօտիկէն շփում ունենալու համար ժամանակի դաշնակցական ամենէն մեծ ու հոյակապ գէմքերու, ղեկավարներու և գործիչներու հետ, անոնց շունչին տակ կը թրձի ցեղին փրկագործումի համար հրովաւաւած մեծ հետցի մէջ, կը ներշնչուի մեծ ուժակրաններու ազատաւունջ և բոցեղէն դադափարներէն, կը դաստիարակուի դաշնակցութեան անդուգական և անմրցելի դպրոցին մէջ մասն ու մեծ պարտականութիւններ ստանձնելով և 1905-ի հայ-թրքական ընդհարումներու արիւնտ օրերուն մէկը կը լայն այն սակաւաթիւ հերոսներէն, որոնք ի գին իրենց արիւնի, բազմաթիւ հայկական գիւղեր ու շրջանները գերծ կը պահեն թաթարական վայրագութիւններէ:

«5000 հայ փրկած է Ձիրբոն», պարծանքով յայտարարելու համար Սալմաստի Հաֆթվան գիւղի մէջ, կարևոր հաւաքոյթի մը ատեն: Իր նախկին խմբակներին այս պերճախօս յայտարարութիւնը արձանագրե-

լով՝ կը վերջացնեն Ձիրբոի կովկասեան գործունէութեան շրջանը:

Ես գինք ճանչցայ 1910թ. ամբան. ջրտական մեծ յարձակումի մը ատեն իր գիւղացի ընկերներով օգնութեան եկած էր, Սալմաստի Ղըրջայ գիւղի հայերու դոյքն ու պատիւը թամբէ-Ջանգօի հրոսախմբէն պաշտպանելու համար, մին-մենակ կռիւ մղող մեծցի Պօղոս Պօլոեանին: Կանոնաւոր դպրոց չյաճախած, բայց Դաշնակցութեան գաղափարական մեծ դպրոցին մէջ իր մտաւոր սնունդն ստացած Ձիրբոի սքանչելի ճառը ո՛չ միայն հայերը հիացուց, այլև ներկայ պարսիկ դիւղացիները: Ձիրբո կը իտայէր փորձառու յեղափոխականի հմտութեամբ, իմաստալից ու հմայելի, պարզ, բայց ժողովրդական լեզուով:

Ձիրբոն սալմաստեցիներու ուղին էր, որ ամէն տեղ կը գտնուէր, ամէն բանի մէջ իր բաժինը ունէր, միշտ յեղափոխական դրօշը բարձր պահած, միշտ անվախ և անձնուրաց ու միշտ համոզուած իր դերին ու պարտականութեան մէջ:

Պարսկաստանի սահմանադրական կռիւներու օրերուն մասնակից եղած է Սալմաստի (Սաւրայ, Սուլաւ, Տիլման, Թասու և այլն) դէպքերուն: Իր բաժինն ունի նախնական դժուարին պայմաններու մէջ տեղի ունեցած զինամթերքի և մարդկային փոխադրական գործունէութեան մէջ:

Սահմանի վրա վիտացող Աւրօի և ուրիշ ջրտական ցեղերու հրոսախմբերու յաճախակի յարձակումներու ատեն շատ անգամ Ձիրբոն հրախրուած է պաշտպանելու հարևան պարսիկ դիւղացիներու կեանքն ու կայքը՝ աւելի զօրացնելով Դաշնակցութեան հմայքը դրացի ազգերու և ցեղերու մէջ:

Իսկ իր բնակավայր Մահլամ գիւղը արդէն իսկ անպարտելի դարձած էր, որովհետև քանիցս Մահլամի ու շրջակայ լեռներու վրա ջարդ ու փշուր եղած ու մեծամեծ վնասներով փախուտտ մատնուած զերբէ հրոսախմբերը այլևս կը սարսափէին մահլամցի կտրիճներէն և անոնց երիտասարդ ու քաղ ղեկավար Ձիրբոն:

Սաղաղ օրերուն, ան իր ընտանեկան կեանքին բարգաւաճման ներխուժ, պարկեշտ ու աշխատասեր, ժիր ու կորովի՝ ընտանիքի պատանական հայր մը կը դառնալը, միաժամանակ միշտ պիւտաւոր աւանդ դասնալով իր գիւղի կրթական, համագործակցական, հասարակական բոլոր ձեռնարկներուն և շինարարական աշխատանքներուն:

1914թ. նոյեմբերին, թրքական զօրմասը, բազմահար ջերմերու ժամնդակութեամբ, դարան մտած էր Սոմալի լեռներու մէջ՝ Սալմաստի վրա յարձակելով զբխտոնեաները քնաջնջելու և ժամ մը առաջ Թաւրիզն ու Ջուլֆան գրաւելու համար: Ձիրբոն իր տասնհինգ ընկերներով հետախուզական աշխատանք կատարած պահուն, թուրքերով պաշարեցաւ և Մահլամի ձորերու մէջ ամրոյժ վեց ժամ օրհասական և անհաւասար կռիւ մղելով՝ նահանջի մատնեց Մահլամի



և Մառնայի շրջանները կրկարող թրքական ջոկատները և ջերտո ձիարորները: Այդ գիշեր և մինչև յաջորդ օր կէսօր Մահալաբի և Մառնայի պատերու տակ դէրք բռնած գիւղացիներուն ամենէն մեծ յոյս ու դիմադրական ոգի ներշնչող և զեկամարողը Ջիբօն էր դարձեալ: Պատերազմներու և կռիւներու ստեն երբեմն ժամանակ շահելու ամենամեծ գրաւականը կըլլայ սպառաջ յաղթանակին: Ջիբօն ըմբռնեց բոլոր իմաստը և կըցաւ ժամանակ շահել, մինչև որ հասան ռուսական զինուորները և թնդանօթները և փրկեցաւ ստոյգ մահուան ենթակայ Սալմաստի ջերտոնեայ բնակչութիւնը:

1914-ի Սարիղամըշիան դէպքերէն վերջ, Պարսկական Ատրպատականի ռուսական զօրքն ալ նահանջեց. նահանջի խիտ չհրաման և երկու օր պայմանաժամ էր սրւած նաև հայերուն և սաղրիներուն: Ջիբօն իր ընկերներու հետ ստեն մը Թիֆլիս կենսակ վերջ, նորէն Սալմաստ անցաւ և ներքեցաւ իր բնադաւառի վերաշինութեան և ինքնապաշտպանութեան գործին: Ռուսական յեղափոխութենէն անմիջապէս ետք, երբ ռուս քանակները «դէպի սոսն» պոռայով՝ սրի ու հրի կը մատնէին ու կը թալանէին իրենց ճամբու երկայնքին գտնուող հազարամեայ զաղաքներն ու գիւղերը, զարաւոր հարեան հայ ու պարսիկ խաղաղ ու արդէն իսկ եղբայրացեալ ընկերներու միջև ստեղծվառ դէպքեր ստակացնելով, երբ ի թիֆլիստեան բորնիներ օրէ օր կը շատնային Ատրպատականի խաղաղ գիւղացիներն ալ կաղմակերպելու և տեղական ջերտոնեաները դրացիներու ձեռքով բնաջնջելու դիւային ծրագիրներով, Ջիբօն իր ընկերներու հետ, զգալով վայրկեանի ահաւորութիւնը և ըմբռնելով Ատրպատականի մէջ տեղաւորած մասպորականցի 10,000 հայերու և Ջուլամերիկի, Գեաւառ շրջաններէն բաղկած սաղրիներուն և տեղական հայաստրական բնակչութեան սպառնացող ջարդն ու բնաջնջումը, չուզեց օգուտել իր անձնական նպատակները պայմաններէն և շատերու նման ապահով վայրերը չապաստանեցաւ, այլ մէկը եղաւ Սամսոնի դիտակից և անձուէր գործակիցներէն և հայաստրական ուժերու կաղմակերպութեան և միասնարար գործունէութեան շատազովողներէն և այդ օրհասական ու անհաւասար կռիւներէն ծնունդ առնող Ատրպատականի մեծ դոյնամարտի ամենափայլուն դէմքերէն ու զահերէն:

Համախարհային պատերազմէն առաջ և անոր տևողութեան ընթացքին, Ջիբօն, յաճախ, եղած է Միտարէթի կոմիտէի անդամ: Գիճուակ պարողաներու տակ ահաբեկչական պատասխանատու դերը ստանձնած է, և միտ ալ յալողութեանը պատկած են իր ջանքերը: Սալմաստի տանեակ մը պարսկահայարեանի զիւղերը կեղեքող և հարստահարող վաշխառու Հաջի Թաղիի և նման դէպքերու արկածալի վախճանին մէջ մեծ եղած է Ջիբօն դերը:

1917թ. դեկտեմբերին, երբ բնաջնջումի վտանգը այլևս անխուսափելի էր և ինքնապաշտպանութիւնը հրամայական ու անխուսական պահանջ մը, ընտրեցաւ Սալմաստի Հայոց Էկեմբրական Խորհուրդը թուրք-ջերտական վտանգին հնարաւոր չափերով դիմադրելու և չզաղթելու համար: Այդ մարմնի երեք անդամներուն վիճակած էր զբաղել զուտ զինուորական խնդիրներով.

մարմնի հոգին Ջիբօն էր: Այդ մարմնի կարևոր գործերէն էր Սմիտի ձարե-Կալէ բերդի պաշարումը: Ենօրեայ կռիւէ մը վերջը, երբ Սմիտի արակ զոհեր տայով՝ լքեց իր բերդը և 70 ձիաւորներով փախաւ, շոտոնայով անդամ մալ կրկնելու «Ա՛խ, հայեր, ա՛խ Ջիբօ», թէև աւել բազմաթիւ էին և հզօր դինք շարձապատող Աղա Պետրոսի ստորական ուժերը:

1918-ի զարնան, Ալլի-Իհասան, Նուրի և ուրիշ փաշաները, թրքական թագաւանգար կռիւնաւոր զօրքերով, հրաման ստացած էին ժամ առաջ դրաւել Պարսկ. Ատրպատականը, օղակել Երևանը և խեղդել երկունքի մէջ եղող Հայաստանը: Տանեակ թնդանօթներու, հարիւրաւոր զնդացիներու, ռուսներու և զնդակներու տեղատարափի տակ, մահացող գաղտնիքին իրազեկ Սալմաստի գիղթական ու տեղացի հայ ուժերը, Ջիբօն և ընկերներու ջանքերով, անօրինակ դիմադրութիւն մը առաջ բերին, որը կըցաւ բաւական ժամանակ շահել վերջ, ապազայ կայանն ու ամուր բերդը դառնալ Վանի վերջին նահանջէն Սալմաստ հասնող մօտ 20,000 հայութեան:

Նոյն այդ օրերուն էր, որ կը վճուէր Հայաստանի բախտը, Սարդարապատի և Ղարաբաղի խեղճ կռիւները կը զուգադիպէին Սալմաստի և Ուրմիոյ կռիւներուն Սալմաստի ճակատը երթնելով կերկրու ու կը լայնանար: Գործի վրա էին Մար-Շիմօնի եղբայրն ու ջորը՝ Սիւրմէ խանումը, Աղա-Պետրոսն ու Մայիք Խոջաբան, կոստի Համբարձումեանն ու Լեւոն Շաղոյեանը, Պուր-դարացի Գրիգորը, Սամսոնը և ուրիշները:

Հայաստրական ուժերը երեք թեւերու բաժնւած էին: Կեդրոնի ուժերու ղեկավարներէն էր Ջիբօն. «Թրքական թուրքակի մը վրա պառկած էի» պատմեց ան իր երազը և իր մէկ ընկերով մասին դէշ նախազգացում մը ունենալով՝ հրամանատարէն խնդրեց, որ ինքը փոխարինէ հետախուզական խմբի այդ օրակ ղեկավարին. «մինչեւ մէկ օրակ արձակուրդով տուն վերադառնալու ստիպողականութեան առջև կը գտնուէր»:

1918 թւի յունիս 3-ի լուսարացին, երբ դէպի Սոյի գետուկը կառաջանար, ծոծրակէն մինչև ողնաշարը կրկարող վէրքը ստացաւ: Մահն անխուսափելի էր և շարատանջ, սակայն, համոզեցինք դինքը հիւանդանոց երթալու համար: Մեկնումի պահուն, մէկիկ-մէկիկ համարուրեց իր զինակիցները ու լուով բաժնեցաւ:

Յունիս 5-ին մեք պարտուեցանք, թշնամին չկրցաւ իրադործել իր դիւային ծրագիրը և Սալմաստի հայաստրական ուժերու պահպանութեան տակ՝ ժողովուրդը նահանջեց դէպի Ուրմի:

Այդ գիշեր ուշ ստեն, երբ դիրքերէն Հաջիվան վերադառնաք, հիւանդանոց փութացինք վիրաւորներու վիճակը ստուգելու համար: Իր անկողնի վրա գտանք երկտող մը. «Ինչ որ կընայի՝ ըրի»:

Զգիտցանք թէ վերջին պահուն Սոսրովայ փոխարած էին դինքը: Զգիտցանք նաև նահանջէն առաջ ստեղծւած անօրինակ խուճապի՝ թէ թիկունքային աշխատանքները վարողներու ապիկարութեան և անփութութեան պատճառով մեր Ջիբօն և վիրաւորներէն մաս մը զերի թողնւած էին Սմիտի ձեռքը: Ամիսներ յետոյ միայն լսեցինք, որ Սմիտի ջերտները իրենց վրէժը լուծած են անգթօրէն՝ կտոր-կտոր ընելով վի-

բաւոր առիւծ-Ջիբօս: Տեսանք իր անմխիթար կէտը ու սիրունիկ բարկիկները Ուրմիոյ դաշտերուն մէջ, կտոր մը Հացի կարտ: Անազնի մէկը յափշտակած էր անոնց փոխադրական միակ միջոցը՝ Ջիբօս սեփական ձին: «Ինչ որ կրնայի՝ ըրի» — Ջիբօս վերջին խօսքը — աւա ամենամեծ կտակը ողջ մնացողներու:

ՎԱԶԳԻՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵՂՐԻԿԵԱՆՆ

(Շրջիկ)

Բնիկ Կիւմիւշխանացի, համեստ ընտանիքի մը զաւակ, Տիգրան Մեղրիկեանը 1908-ի ատենները մտած էր Դերջան, ուր երբեմն ուսուցչութիւնով, երբեմն աւետարտով կը զբաղէր. իրեն անմխիթական և միակ նպատակն էր այդ խուլ և յետամնաց երկրի ժողովուրդին մէջ տարածել յեղափոխական միտքը և ինքնապաշտպանութեան ոգին: Կարճ ժամանակի մը մէջ բռնակալութեան բոլոր արհաւիրքներուն աակ կրցաւ Դերջանի հայ գիւղերուն մէջ կազմել դաշնակցական խմբեր և կոմիտէներ: Բոլոր օրը, բոլոր տարիս շարժման մէջ էր, կռնակն ատած մանր մունր իրեղէններու արկղիկը, հաւկիթի, իւղ, ցորեն հաւաքելու պատրասկին տակ գիւղէ գիւղ կը թափառէր. կը խօսէր, կը բացատրէր, կը համոզէր ու կը կազմակերպէր, ժողովուրդը ինքնապաշտպանութեան կը մղէր: Ամբողջ Բաբերդի, Դերջանի հայ ժողովուրդին ամենասիրելի և պաշտելի մարդը դարձած էր:

Դերջանի տեղական կառավարութիւնը որսկան շնորու պէս Մեղրիկեանի յեղափոխական գործունէութեան հոտը առած էր. անոր ամէն մի շարժումը, գործը, բոլոր նամակները հակոզութեան տակ էին: Եւ օր մը, 1908-ի ապրիլին, Մամախաթունի պետական նամակատան մէջ բռնեցաւ անոր մէկ նամակը՝ ուղղւած Պուլքարիս Հրատարակող և Ռազմիկ Քերթիս: Նամակի պարունակութիւնը ոտքի հանեց կառավարական ամբողջ մեծ ու փոքր պաշտօնէութիւնը. խուզարկութիւններ, ձերբակալութիւններ, ծեծ, տարտախ և արհաւիրք ամէն կողմ: Տիգրան ևս ձերբակալւած և ոստիկանական խիստ հակոզութեան տակ առնւած էր, բայց սիջերը կրցաւ բանտէն փախչիլ հակառակ պահանջներու այնքան խիստ հակոզութեան և յաջողեցաւ Բաբերդի թնկերներու միջոցաւ անցնիլ Կովկաս: Օսմ. Սահմանադրութեան հետ ան նորէն վերադարձաւ իր սիրած շրջանը՝ աւելի եռանդով և աւելի մեծ խանդով փարած իր յեղափոխական առաքելութեան: Եւ հակառակն պայքար բացաւ թուրք, քիւրտ, վաշխառու հարստահարիչներու դէմ, որոնք զիւղացիին ձեռքէն խլած էին անոր արտը, տունը և մարդագետիւնը: Բոլոր վաշխառուները և հարստահարիչ տերէպէյիմերը վախով ու սարսափով կը լսէին այդ փոքրիկ մարդուն մեծ գործերը: Քղիի, Բուրմոբիի, Դերջանի և Երզնկայի հայ և քիւրտ ժողովուրդին պատուհաս եղող և Քիւրտիստանի կէս թագաւորը քիւրտ աշխրթապետ Հայտար քէկը Մեղրիկեանի հետապնդումներէն, գրութիւններէն և բողոքներէն սարսափած՝ թողոց Դերջանի դաշտը և խոյս տուաւ իր լեռները և հայի մը յաղթւած

ըլլալուն վշտէն «Փըլլաի Քը վընտը» «հայ դուն կեցիր» պոռագեր էր իր մահւան անկողինէն մէջ:

1915-ի արևելոտ օրերը վրա հասան: Կառավարութիւնը սկսած էր հետապնդել զինքը: Մեղրիկեան փախստական հայ զինուորներու և յեղափոխական երիտասարդներու զուլար անցած՝ ինքնապաշտպանութեան ծրագիրը երբ պատրաստելու ետևէն էր հայ անարիւն դաւանանի մը ցուցումներէն վրա Ձըլմն և Սարդայիս երկու հայ գիւղերու ճանապարհին վրա՝ ծպուած վիճակի մը մէջ բռնելով՝ տեղն ու տեղը ամենասարսափելի շարչարանքներով կը մեղցի:

ՄՇԵՑԻ ՍՄԲՈՒՂ

1908-ի Օսմանեան Սահմանադրութեան խնդ օրերուն, Կարինէն Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ որպէս կազմակերպիչ Դերջան գրկւած էր: Բնիկ մշեցի, բարեկեցիկ ընտանիքի զաւակ. երկար ատեն Կովկաս ապրած, հոն դաստիարակւած՝ հոն Հ. Յ. Դաշնակցութեան քուրային մէջ թրձւած էր: Բառին բուն նշանակութեամբ յեղափոխական մը, ան ալ դաշնակցական յեղափոխական մը: Թուրքերէն խօսիլ չէր զիտեր. այս ճանգամանքը աւելի խոր թողեցութիւն կը թողար թուրք պաշտօնէութեան և թուրք ամբոխին վրա: Անշահախնդիր, խրոխտ և անաչառ էր Երկու բան կը ճանչնար՝ հայ ժողովուրդը և Հ. Յ. Դաշնակցութիւն: Բնաւորութեամբ զարթ, լաւ երգիչ, ընկերասէր ուր կը մտնէր, հետը խնդը և ուրախութիւն կը բերէր: Մտաւորապէս մէկ տարի մնաց Դերջան: Մեղրիկեանի հետ դերջանցիներու դպրոցական, կառավարական, զիւղական դանազան խնդիրներու մէջ մեծ օգտակարութիւն ցոյց տուաւ:

Դաշնակցութեան հրահանգով նոյն պաշտօնով անցաւ Քղիի շրջանը և հոն իր անվախ, խիզախ գործունէութեամբ լայն պղծեցութիւն ձեռք բերած էր ժողովուրդին մէջ:

1914-ին Երզնկայի թուրք զորամասերու մէջ ինձ բախտակեց զընցի հայ զինուորի մը հայրենիքէն ձեռքով հասած նամակի մը մէջ կարդացինք, որ Սմբուլի ակնաջները, քիթը կտրած, մէկ երկու օր վերջն ալ՝ ձեռքերը — այսպիսով բարբարոսաբար սպանած են:

ՅՈՎ.ԱՆՆԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

ՃՐԷՆԿ ՍԱՀԱԿԸ

(Ճիւղալ)

Մշոյ Առինչ զիւղէն էր, դաւանանքով կաթողիկ, որուն համար «Փրէնկ» կը կոչէին: Ուսած էր կաթողիկներու դպրոցը: 1890-ական թւականներուն Պոլիս կը գտնուի և կարգալով արտասահմանեան թերթեր՝ կը տարւի ազգային զաղափարներով ու կը մտնի հնչակեան կուսակցութեան մէջ: «Պանք օթօսանի» դէպքէն յետոյ կը ծանօթանայ Դաշնակցութեան և իրրև դաշ-

նակցական կը վերադառնայ հայրենիք, ուր հայ կաթոլիկ գիւղերու մէջ կաշարատէ հայութեան և Գառնակցութեան գաղափարները հիմնաւորել: Դժար էր անոր գործը, քանի որ մինչև այդ անոնք իրենք դիրենք ոչ թէ հայ, այլ «Քրէնկ» կը համարէին: Քանի մը հոգևորականներ արկից էին Սահակին, ուրիշներ ձեռող կանանտէին գայն և կը խնդարէին: Գէորգ Չափուշի հետ Նորչէն գիւղին մէջ կը սպանէ իրական «Քրէնկ» վարդապետ մը, որ դաւաճանութիւններ կը անէր կառավարութեան ժամ: Ետևում հայ կաթոլիկ գիւղերը կը դառնան ոչ թէ միայն հայ, այլ և գառնակցական: Կը հրատարակէ խմորատիպ թերթեր, որոնք մեծ ընդունելութիւն կը գտնեն ամբողջ Մշոյ դաշտին մէջ: Ան, 1901-էն, Մշոյ դաշտի կարևոր գործիչն է. կոմիտէի անդամ, 1903-1904-ի սպասամ-

բութեան ատեն կաթոլիկ տասնեակ մը ընկերներով կը մասնակցի կուրններուն, կը ձեռնարկուի, բայց շուտով կազատուի կաթոլիկ եպիսկոպոսին միջոցով: Կը շարունակէ իր գործը, փաստական կը դառնայ և 1905-էն Ֆէտայիներու կարգը կանցնի՝ դառնալով միաժամանակ Տարսնի շրջիկ գործիչը: Օսմ. Սահմանադրութեան կը դառնայ Զաւարեանի գործակիցը, դպրոցները ժողովրդականացնող և տարածող: 1914-ին, իբրև կոմիտէի անդամ, ինքնապաշտպանութեան ոյժ կուտայ և կը ջանայ կուածադիկ շրջանը դարձնել երկրորդ Սասուն մը: Բայց Մուշի ու Պիթլիսի ճամբու վրա ինկած այդ շրջանը կենթարկուի աղէտի: Առանց կարենալու մեծ դիմադրութիւն մը փորձել, Յրէնկ Սահակն ալ իր ժողովուրդի հետ կրպակուի զէնքը ձեռքին:

# Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

26 սեպտ. Բագու.

Միայն հիմա եմ կարողանում ձեզ գրել: Ազրբէջանի կեանքը վերջին ամիսներս դժուար է դարձել. Բաղուս և դաւաճաններում կատարեցին և շարունակում են գանգաւածային ձերբակալութիւններ: Ձերբակալութիւնները սկսեցին յուլիս ամսին այնպիսի լայն ծաւալով և այնքան ուժեղ թափով, որ շինեցնող սպաւորութիւն թողեցին ամենքի վրա: Կախ՝ միաժամանակ ձերբակալութիւններ տեղի ունեցան Բագու, Գանձակ, Նուխի, Շամախի, Սալանի և միւս քաղաքներում, ապա՝ տեղափոխեցին դաւաճանները: Բոլոր ձերբակալուածներին Տըզքիտ թիւը դժուար է ասել, բայց 2500 հոգուց պակաս չէ: Աղբամից եկած մի ծանօթ թուրք պատմում էր, որ իրենց շրջանում՝ Աղբամ, Խդրու, Չուխուր Մահալու, Սէիլու, Քեսալու և այլ գիւղերում բանտարկել են 40 հոգի, թարնառուում՝ 8, Մասսարուում՝ 10, Հետարուում՝ 10 և այլն:

Վերջին ձերբակալութիւններից առաջ բանտարկուածներին աքտորեցին Թուսաստանի ներքին նահանգները կամ Սիբիր, որպէսզի նորերի համար տեղ բացւի: Բանտերը մաքրագործելիս եղան գնդակահարութիւններ: Աղբամի բարեկամ պատմեց Հինտարիում և իրենց հայկական գիւղերում տեղի ունեցած մի շարք գնդակահարութիւնների մասին՝ առանց գառ ու դասաստանի, Գէպէտի վարչական կարգադրութեամբ:

Ազրբէջանցի թուրքերի մէջ այժմ շատ է գարգացած թայֆայութիւնը. մասնութիւնները թայֆայական հողի վրա չափ ու սահման չունեն: Փոխվրէժ լուծելու նպատակով շատերը մտել են կոմունիստական կուսակցութեան շարքերը և իրենց հակառակորդներին ներկայանելով իբրև մուսաւաթականներ՝ մտնում են չէկպի ձեռքը: Մասնաւորներից շատերը անկուսակցականներ են. նետում են քննար, ուր պահւում են ամիսներով ու տարիներով. նրանց տնտեսութիւնը քայքայում ու փչանում է:

Պէտք է խոստովանուել, որ ուսու կոմունիստները

աւելի մեղմ ու մարդավարի են վարում տեղական ժողովրդի հետ: Տեղացիները՝ անխիղճ են և ինչէ՛ր ստես չեն գործում խեղճ գիւղացիութեան դիմին: Կաշառակերութիւնն ու զոդութիւնը ամբողջ Ազրբէջանում զարգացած են անսահման: Փոխվրէժի ենթակայ թաթարը իր կոմունիստ հակառակորդից կեղեքում է մինչև վերջին կոպէկը:

Ժողովրդին շատ են զրդուում և հակակրօնական ցոյցերը, որոնք վերջերս նորից սկսել են սաստկանալ: Այդ ցոյցերը, սակայն, տալիս են հակառակ հետևանքներ. ժողովուրդը պինդ կպել է իր մղիթին ու մուրալին: Կոմունիստը, յաճախ, անպատկառ տեսարաններ են կազմակերպում մղիթիներ ժամ, ծաղիւն են մուլաներին, մի բան, որ աւելի ևս ուժեղացնում է վերջիններիս ազդեցութիւնը տգէտ ու կրօնամոլ ազգաբնակչութեան մէջ:

Ժողովուրդը չափազանց դժգոհ է հարկերից. գիւղացիութիւնը տնքում է հարկերի ծանրութեան տակ: Մասնաւոր առևտուրը կենտրոնացած է շարաշահների ձեռքին, որոնք բոլորն էլ կապ ունեն Գէպէտի հետ, որը որոշ տոկոս է ստանում շարաշահներից: Թո՛ղ զարմանալի չլիւայ այս պարագան. չէկիստները բոլոր շարաշահների ճանաչում են և նրանց թողնում են հանգիստ՝ պայմանով, որ իրենց վաստակի որոշ տոկոսը յանձնեն իրենց: Աշկիստները, այս հողի վրա կազմակերպւած են և գործում են «միասնական ճակատով», շարաշահներից ստացւած բոլոր զոււարները մտցւում են ընդհանուր դրամարկը և արդար կերպով բաժանում են բոլորին: Ա՛յ՛ որ արդարութիւնն է հիմք չէկիստական գործունէութեան...

Ժողովրդի քաղաքական տրամադրութիւնների տեսակետից յատկանշական է հետևեալը. մուսաւաթականները բաւական ետանդով գործում էին մինչև 1924 թիւ վերջերը — մինչև Վրաստանի սպասուածութեան վիժումը — և ունէին ուժեղ կազմակերպութիւններ զրեթէ բոլոր դաւաճաններում, բայց 1925 թ. սկսած զգալապէս թուլացան մասնութիւնների և դաւաճանութիւնների հետևանքով և, մանաւանդ, անցեալ

տարւոյ զանգաւածային աքտորներէց յետոյ: Այժմ մուսաւաթականները գործում են, թէ և ոչ առաջւայ ետանդով: Նախորդ տարիների պէս զօրաւոր չեն, բայց համեմատած միւս հոսանքների հետ՝ էլի որոշ ոյժ ներկայացնում են: Նրանց ազդեցութիւնը, զիտաւորապէս, զաւանդներում է:

Միւս կուսակցութիւնների մասին տեղեկութիւններ չունեն: Ստորով բեջ Սուլթանովի ազգային-դէմոկրատ կուսակցութեան մասին ոչինչ յայտնի չէ: Գուցէ, ուրիշ տեղեր գոյութիւն ունի, չէրտեմ:

Կոմունիստների հանդէպ ժողովուրդը տածում է անսահման ատելութիւն: Կոմունիստական իշխանութեան հակադրում է մուսաւաթական իշխանութիւնը, որ կազմում է արբէջանցի թաթարների ազգային տարերջի արտայայտութիւնը:

Պէտք է ասել և այն, որ թէ և ժողովուրդը հակաւած է մուսաւաթականների կողմը, բայց, մանաւանդ զիւղերում, այսօր շատ յաճախ օրերը են տալիս նախայեղափոխական օրերին: Այդ երեքը ներկայացւում են իբրև «ըրուտեալ դրախտ»: այն ժամանակ ամենքը լաւ էին ապրում, մարդիկ տէր էին իրենց ունեցւածքի...

Աղբակցի բարեկամ, որ մուսաւաթական է, թէ և ոչ գործօն, նոյնպէս կարտով էր յիշում. «Ջանըժ, ասում էր նա, այն ժամանակ խէր-բարբաթ կար, որը չբացաւ յեղափոխութեան պատճառով և որը չտեսնաք մուսաւաթականների օրով էլ: էլ այն զէտղալ օրերը չենք տեսնի, հայր՛Ք...»

Պատահական տրամադրութիւն չէ այս: Աղբէջանցի զիւղացին, որ ծայրահեղ սեփականատէր է, կարտով է յիշում Նիկոլայի օրերը: Անկախութիւնը դեռ խոր արմատներ չի ձգել նրա մէջ. մուսաւաթական շրջանը յիշելէք թաղցր բաներ չաւեց, իսկ բուլշևիկները անում են ամէն բան, որ արժանանան նրանց ատելութեան: Այսպիսի պայմաններում զարմանալի չէ, որ ցարական օրերի «խէրն ու բարբաթաթը» յիշում այնպէս, ինչպէս իւրայայտիները յիշում էին Եղիպտոսի սոխն ու սխտորը:

Բազէի կեանքի վրա շատ չպիտի կանգ առնեմ, թէ և հետաքրքրական բաներ քիչ չեն: Այսխնում եմ նամակ ծանրաբեռնել: Վերջերս ամենքը զարդւած են ընդդիմադիրներով. բանտորական շրջաններում բաւական շատ են ընդդիմադիր կոմունիստները, որոնք կապ են պահում իրենց կենտրոնի հետ, հրահանգեր ու գրականութիւն են ստանում և խիստ եռանդուն դործունէութիւն են ցոյց տալիս: Ընդդիմադիր շարժումն այստեղ, որոշ չափով, ուղղւած է և ազբէջանեան կոմունիստ վարիչների վարած նեղ-ազգայնական քաւաքականութեան դէմ:

Ընդդիմադիրները գործունէութիւնը ոմանց յոյսեր է ներշնչում, թէ խորհրդային իշխանութեան վերջը մօտիկ է: Իմ տպաւորութիւնս. բոլորովին այլ է: Ճիշտ է, խորհրդային իշխանութեան արդէ դրութիւնը չափազանց ծանր է, բայց կոմունիստները դեռ բաւական ուժեղ են ներքին թշնամիների հանդէպ: Անկասկած, նրանք մեծ պարտութիւն կրեցին չինական և այլ գործերում. համաշխարհային յեղափոխութիւն տեղի չունեցաւ և այժմ էլ դրամական սուր կարիքի ու ներքին պառակտման մէջ են, բայց չպէտք է կարծել,

որ այդ ամենը կը վերջանայ անմիջական փլուզումով: Մօտ ապագայում դժուար թէ որեւէ փոփոխութիւն տեղի ունենայ, անպատեթ է արողիխտները յաղթեն, թէ և նման հաւանականութիւն չի նկատւում: Բուլշևիկների իշխանութեան անկումը կարող է փութացւել երկու բանով. կամ արտաքին պատերազմով և կամ ներքին երաշտով ու սովով: Այժմ, երբ արտաքին պատերազմ չկայ, զիւղացին տիրացել է հողի, հաց ունի և, ընդհանուր ամսամբ, կուշտ է, ինչքան էլ դժգոհ լինի տիրող կարգերից, ոտքի չի կանգնի իշխանութեան տապալման համար: Այս տեսակէտից, եթէ արտասահմանում որոշ յոյսեր կան, պէտք է դրանք համարել անհիմն. դժգոհութեան արտայայտութիւններ Ռուսաստանում շատ են պատահում, բայց նրանք զանգաւածային ու կազմակերպւած բնոյթ չեն կրում, այլ՝ անհատական ու տեղական:

\* \* \*

Մի քանի խօսք էլ այս ազգային-հասարակական կեանքի մասին: «Աղբային-հասարակական» բառերն այստեղ հնչում են իբրև սուր հեգնանք. վաղուց է, որ հայերն ազգային-հասարակական կեանք չունեն Բագում և ամբողջ Սորհրդային Միութեան մէջ: Հայկական բոլոր հիմնարկութիւնները բռնադրուած ու ոչնչացւած են, ազգային ամէն արտայայտութիւն՝ խեղդւած:

Ահա, օրինակի համար, Բագէի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը, որ այնպիսի փտաւոր դեր ունէր հայկական մշակոյթի զարգացման մէջ: Այդ ընկերութիւնը այժմ գոյութիւն չունի: Նրա դպրոցի շէնքը զարծրել էին ուս. զինուորական զարոց: Հայեղը, նոյնիսկ հայ կոմունիստների միջոցով, ամբողջ ինչ տարի դիմումներ արին և բանակցութիւններ լարեցին, որ այդ շէնքը վերադարձի իրենց: Եարուակ խոտոտանում էին վերադարձնել ու միշտ էլ ձգքով ուղում էին: Այս տարի, վերջապէս, զատարիեցին ու յեղը... տեղաւորեցին թուրքական զարոց: Դրանով էլ հարցը փակւեց:

Մի ուրիշ օրինակ: Նոյն Մարդասիրական Ընկերութիւնը ունէր ճոխ զբաղարան՝ տասնեակ տարիների ժրաջան աշխատանքի արդիւնք: Կովկասի Հայկական լաւաղոյն զբաղարաններից մէկն էր: Հայաստանի խորհրդային իշխանութիւնը բազմաթիւ դիմումներ արաւ Աղբէջանի խորհրդային իշխանութեան՝ խնդրելով արտօնել այդ զբաղարանը փոխադրել Հայաստան: Այդ դիմումները ազբէջանցիք լսում էին, խոտոտաներ էին տալիս, բայց չէին կատարում, մինչև որ Երազարանը մկրտեցին Լենինի անունով և այդպիսով անձեռնմխելի դարձնելով՝ ջուրը ձգեցին հայ կոմունիստների խնդրեցները:

Գրադարաններ, որպէս « հակայեղափոխական », վերցւած ու ոչնչացւած են թէ՛ Մարդասիրական Ընկերութեան հիմնադիրների և թէ՛ հայ գրողների մեծադիր ու փոքրադիր պատկերները, այն ինչ նոյն զբաղարանում գտնւած ուսու և ազբէջանցի հեղինակների պատկերները մինչև օրս էլ մնում են կախւած: Երբ այդ առիթը հայերը հրաւիրել են պատահաւ իշխանութեան ուշադրութիւն՝ խնդրելով, որ հայ հեղինակների նկարներն ևս թողնեն, պատասխանը եղել է ծաղր ու հեգնանք:

Նոյն ճակատագրին է ենթարկւած և Բագրի Հայոց Կուլտուրական Միութեան շէնքը, որ սրւած է երկաթուղային վարչութեան : Քանի՛քանի դիմումներ եղան, որ վերադարձնեն Հայերին, բայց կտրականապէս մերժեցին : Առհասարակ, Բագրի Հայկական բոլոր ազգային շէնքերը դրաււած են :

Բայց չկարծէք, թէ միայն Բագրում է այսպէս : Ամէն տեղ դրութիւնը նոյնն է . Պետրոպոլ, Մոսկւա, Նախիջևան, Ռոստով, Ստաւրոպոլ, Արմաւիր, Եկատերինոպոլ, Հաչտարխան — մի քանի տասնեակ միլիոն ոսկի ուրբուտ արժողութեամբ անշարժ ու շարժական ստացւածքներ խլւած են Հայկական ազգային հիմնարկութիւններից : Հետո շինարար Համար մի-երկու օրինակ բերենք Թիֆլիսից :

Գիտէք, երևի, որ Ներսիսեան դպրոցի բոլոր շէնքերն ու կաւածքները, ի շարք որոնց և Ա. Մանթաշեանի կառուցած Հոյակապ շէնքը, դրաււած և վրացացւած են : Փորձեր արեցին, որ գէթ դպրոցի նոր շէնքը վերադարձի Հայերին — մերժեց :

Այնուհետև, Ա. Մեղե-Ազարեանի Հայաստանի Հանրապետութեան ներքաձ գեղեցիկ ու հսկայ շէնքը վերայի անկիւնին : Այժմ այդ շէնքը նոյնպէս դրաււած է և դռնդռւմ է վրացիների ձեռքին :

Աւելին դեռ : Ահա Թիֆլիսի առաջնորդարանի շէնքը վանքի բակում . մի մասը վեր է ածւած թրքական դպրոցի, իսկ միւս մասը սրւած է մի կօմունիստ վրացուհի մասաթ սնողի : Դասամեջնոցներին թուրք երկխաները քար ու քանդ են անում, պղծում են վանքի բակում գտնուող շէնքները, կտրատում են գերեզմանաբարերը, կտրատում ու փշացնում են ծառերը : Հայերը մէկից աւելի անգամներ դիմեցին, որ գէթ Հայկական դպրոցի յատկացնեն առաջնորդարանի շէնքը, իսկ թուրք աշակերտներին փոխադրեն իրենց թաղը, բայց խորհրդային իշխանութիւնը կտրականապէս մերժեց : Կարո՞ղ էք երևակայել, թէ ինչ վրդովում է առջ դալիս Հայերի մէջ, երբ նրանք տեսնում են, որ թուրք աշակերտները քար են նետում վանքի պատուհաններին, աղմկում են եկեղեցական արարողութեան ժամանակ, քանդում և աղտոտում են վանքի շուրջը թաղւած Հայ գործիչների գերեզմանները . . .

Բոլշեիկները պնդում են, որ նման ձևերով իրենք ազգային Համերայնութիւն են պատուաստում կովկասեան ժողովուրդներին մէջ :

ՅՈՒՄԻԿ ՓԱՅՏԱԿԱՐԱՆՅԻ

ՔԻՒՐԴ-ԹՐԲԱԿԱՆ ՊԱՅՐԱՐԸ

Քրդական ապստամբական շարժումները մինչև այսօր էլ շարունակուով են : Թուրքիայի գանազան կողմերում կազմւած են քիւրդ ապստամբական օջախներ, որոնք անընդհատ խռովում են թուրք կառավարութեան հանդէստը : Թուրքերը ստիպւած են ահապին ուժեր ուղղել ապստամբների դէմ և իսկական պատերազմական զործողութիւններ կատարել :

Միև կողմից, Անգորայի կառավարութիւնը մեծ ճիգ է լարում համոզելու Համար արտաքին աշխարհին, որ քրդական ապստամբութիւնների լուրերը չիմծուրաներ են, և որ Արևելեան նահանգներում ամէն՝ ոք Հանդիստ ու խաղաղ կեանք է վարում :

Թէ ինչ Հանգստութիւն է տիրում Արևելեան նահանգներում, ցոյց են տալիս ստորև բերուող փաստաթղթերը : Դրանք թուրք զորամասերի պաշտօնական հրամաններն են, որոնք ձեռնկ են Բայազետի շրջանի քիւրդ ապստամբների ձեռքը : Նոյն ապստամբները գերի են առել ամբողջ զորամասեր, թնդանօթներ, գնդացիներ, մեծ քանակութեամբ հրացան ու ռազմամթերք : Յաջորդ անգամ մենք կը տանք քրդական շարժման վերջին ամիսների պատկերը :

Ահա յիշեալ փաստաթղթերը :  
 I  
 Բայազիտ  
 27/9/15  
 Տաւ շտապ  
 Արևելի օդատարնի հրամանատարին  
 Դեմիր Կարուի հարաւը, 27/9/15 ժամը 11-ին .

Ներքեի հրամանագիրը այսօր իսկ օդանաւով խնդրում եմ 12-րդ լիվային նետել :

1. — 18-րդ և 19-րդ օրերի Համար, գինւորների և կենդանիների ուտելիքի և այլ իրերի պատրաստութիւնը հրամայւած է Բայազետի քաղ. գինւորական հրամանատարին : Մէնդիլի հրամանատարին ենթարկւած Բայազետի հետեակ վաշտը և ծանր արագահարած վաշտը ամբողջովին Փուրզայի մէջ առնւած լինելով՝ Լիվան հիւսիսից և Դեմիր Կափուի վրայից Բայազետի հետ կապը պէտք է պահել : Մանրութիւնները յարմար պահակներով Բայազետ ուղարկելով՝ այդտեղից պէտք է ապահովուի : Լիվան այս հրամանագիրը ստանալուց պէտք է կարճ կերպով լուսարձակով

Ֆրկային յայտնի: Իրեն ենթարկւող ձեւորներով պէտք է կապ պահէ Ֆրկայի հետ: Երեկւայ տեղեկագիրը լուսարձակով 5 Ժամից է հասած: Կը պահանջեմ տեղեկագիրները կարճ գրել:

3. — Ծէխի Սուր հարաւում, Գարաբուրունի շըրջանում գտնուած են 36-րդ ալայի 10-րդ վաշտի երկու ութնակները, իսկ Ծէխիի կամուրջէն, Դէմիր Կարուի դիմաց, Ծէխի Սուր հարաւում էմին էֆէնտիի առաջին վաշտը:

4. — Ֆրկան մնացեալ ուժերով Ժամը 10-30-ին Հալալի արևմուտքը պիտի ուղղուի:

5. — Գ-րդ Ֆրկայի . . . . .-ի հիւսիսը երկու թարուրների այսօր Ժամը 8-ին գալը նկատուած է մեր օդանակների կողմից: Ապստամբները Արդիկի հովտի հիւսիս-արևելեան ուղղութեամբ հողի շերտերի միջից յառաջանում են դէպի արևելք: Աստուծով 9-րդ Ֆրկայի զորախմբերի հետ կապ ստեղծելով՝ կարելի կը լինի նրանց մարտիներու վրայով հարաւ-արևելք յառաջանալ: Խնդրում եմ, որ գոնէ ջոկատը Արդիկի հովտի արևմտեան ափը, մինչև Դէմիր Կարուի ուղղութիւնը հասնի:

Երէկւայ և այսօրայ շարժումներուն, 14/15 տեղեկագիրը սեպտ. 927-ի օրերուն անպայման պէտք է խնդրում եմ այս մասին ալ հնարաւոր չափով աշխատէք: Զինուոր և սպայ ընկերներուն բարև. յաջողութիւններ հարաւի զորամասերուն:

6. — Ֆրկան այսօր կէսօրից յետոյ ի հարկին Արդիկի ձորի ափերը բռնելու պիտի ձեռնարկի:

12-րդ Ֆրկայի հրամանատար՝

ԱԼԻ ՆԵՋԻԲ

II

927/9/15

Արմէշի օդային տարզիկ հրամանատարաւքեան

927—9—15

1. — Դիւիգիայի շտաբը մտնոյ 12-ին Հալալի արևմուտքը դալով՝ գրաւեց Հալալի արևմտեան մասերը և 36-րդ ալայի 9-րդ, 11-րդ և 4-րդ ու 12-րդ վաշտերից երկու միթրայտողից, 6-րդ հրետանիից և իր ձեւոր վաշտից կազմած ջոկատը Հալալի շըրջաններից Ծէխի Ահմի անցնելով՝ Հալալի հիւսիսային արևմուտքը գտնուող Արդիկ ձորի միջի եզերքների վերջամասերը պահելու մտադրութիւնով առաջացրեց:

2. — Արդիկի ձորի և արևելեան եզերքի անցքերը ընտղ ապստամբները՝ Արդիկի ձորի արևելեան եզերքները գրաւելով՝ տիրապետում են Արևելեան Արդիկին: Ապստամբների հօտերից ոչինչ ձեռք չէ բերւած: Յիշուած ձեւոր վաշտը և ուրիշ ջոկատներ Արդիկի ձորի ուղղութեամբ, ձորը մաքրագործելու մտադրութեամբ մղւելով դէպի հիւսիս, Գարնը Եարըք բարձունքին հարաւը, վերին Դէմիրի Գարուի ուղղութեամբ յառաջացող Գ-րդ Ֆրկայի զորամասերի հետ աշխատում են կապ հաստատել:

3. — Ապստամբները Ժամանակին իրենց նախիրները և հօտերը, ընտանեկան գոյքերը առանց Արդիկի ձորում պահելու, Գարնըարըզի հարաւից Զամրախի ուղղութեամբ, մի մասն էլ ուղղակի Արդիկի ձորից Գեօզլիջա տանող ճանապարհներով Պարսկաստան են ուղարկել: Եթէ Գ-րդ Ֆրկայի զորամասերը Գօզլի ուղղութեամբ դեռևս ոչ չեն ուղարկել, այս վերջինների խոյս տալը բնական է: Սակայն, Գարնը Եարըզի ուղղութեամբ լսուղ ուժեղ թնդանօթի և միթրայտող մայրերը նշանակում են նրանց գոնէ մի մասի բռնած լինելու հաւանականութիւնը: Հեռադիտակով կատարւած հետազոտութեան շնորհիւ, նկատուած են Բուլաղ Բաշիից դէպի հիւսիս երկարող Գօզլի ձորերը արևմտեան ափերի բարձրագոյն կէտերի վրա հեռզհետէ հաւաքուող հակառակորդները:

4. — Դէմիր Գարուի հիւսիսից յառաջացող Գ-րդ Ֆրկայի զորամասերի հետ կապ հաստատելու մէջ է:

5. — Հալալի արևմտեան մասի նախօրօք այս ուղղութեան տիրապետելու շնորհիւ պէտք եղած կերպով արգիլեց Արդիկի ուղղութեան մէջ գտնուող Նախշէն և Սուրհաթա գիւղերու մօրուստերը գիւղացիներին օգնութիւն հասցնել ապստամբներին:

6. — Ֆրկայի շտաբը այս քիչերը պիտի անցկացնի Արդիկի ձորի կողմերում: 12-րդ լիվայի հետ դեռևս կապ չի հաստատւել: Յոյս ունենք, որ կէսօրից յետոյ թռչելիք օդանաւը Գ-րդ Ֆրկայի 12-րդ լիվայի մասերի հետ կապ հաստատելու միջոց է դա՛նալու:

7. — Մինչև Հալալի մօտերքը գալ և թռչելուց օգտւելու մտադրութեամբ կը բանակցենք Բալալիտի հետ: 32—2822 է: Գրած է Գ-րդ Ֆրկայի օդային տորմդի մէջ նստւելու համար Գ. Ֆրկայի 12-րդ լիվային:

Ստաբագրութիւն

12-րդ Ֆրկայի հրամանատար՝

ԱԼԻ ՆԵՋԻԲ

# Վ Ե Ր Չ Ի Ն Ժ Ա Մ

Բուշիբ (Պարսկաստան), 5 դեկ.

Ղարաբաղից և Չանգեղուրից երեք հայ երիտասարդների յաջողւել է մեծ դժւարութեամբ անցնել այստեղ: Ճանապարհներին նրանք մի քանի անգամ ձերբակալւել են, բայց միշտ յաջողւել է այս կամ այն պատրակով ազատւել:

Երիտասարդներից Ա-ը, որ անցել է Չանգեղուրից, պատմում է, թէ ինչպիսի ծանր օրեր է ապրում և ինչպիսի մահաւան սարսափի տակ է գտնւում Չանգեղուրի երբեմնի հերոս ժողովուրդը: Երիտասարդ և մտաւորական ուժերը կամաց-կամաց քաշւել հեռացել են օտար երկրներ, իսկ մնացածներն էլ բանտարկւած են և կամ աքսորւել են դէպի Ռուսաստանի սահամասիքները:

Երկրի տէրերը գիւղական այլասերւած կօմբլիներն են, որոնց խայտառակութիւնների ու շահատակութիւնների առաջ ժողովրդին մնացել է մի միջոց՝ կամաց-կամաց հեռանալ իր սիրած լեռներից ու հայրենիքից՝ բախտ որոնելու օտար երկրների տակ, մասնաւորապէս դէպի Պարսկաստան:

Ղարաբաղի թ-ը, որին յաջողւել է անցնել Վարանդայի շրջանից, հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում, սակայն, նա վախենալով իր այնտեղ մնացած հարազատների վիճակից, որոնց կարող են նեղութիւն տալ, առայժմ շատ զգուշ է հաղորդում իր ունեցած տեղեկութիւնները:

Նրա ասելով, նոյ. 4-5-ին, Ղարաբաղի մի շարք շրջաններում՝ Խաչնի, Դիզակի և Ջւանշիրի՝ ցրւած են սպառուած թուռցիկներ հետեւեալ նշանաբանով՝ «Ղարաբաղը Հայաստանին»: Դրանց մէջ ի միջի այլոց գրւում է. «Պատմական Ղարաբաղի հայ ժողովուրդը, որ դարերից ի վեր պայքար է մղել ազատ ապրելու և իր բայտը ընդմիջու կապելու մայր Հայաստանի հետ, չի կարող հանգիստ սրտով դիտել, որ ռուսական դաժան գեմբի ուժով ստիպում են իրեն հպատակւել և գլուխ ծռել թուրք Աղբրէշանին, որի դեկավարները և երկրին տոմ տուղները փաստօրէն հանդիսանում են տանիկ սպաներն ու էմիսարները»:

Թուռցիկը վերջանում է. «Կեցցէ Ղարաբաղի ժողովուրդը, թ՛ող կորչի Տանկա-Աղբրէշանեան իշխանութիւնը, Ղարաբաղը - Հայաստանին»:

Թուռցիկը երկալուց յետոյ տեղի են ունեցել հարիւրաւոր ձերբակալութիւններ ու խուզարկութիւններ: Ձերբակալւած են դարաբաղցի մի շարք կօմունիստներ, որոնք սկզբից մինչև այսօր դէմ են եղել և միշտ բողոքել են Ղարաբաղը Աղբրէշանին կցելու դէմ:

Փայտատկան թ-ն տեսել է Աղւաճում, Բարդայում և Ղարբանդում տանկական տասնեակ սպաներ և զինւորներ:

Ղարաբաղի շրջանում, որքան բարձր է թուրք ժողովրդի տրամադրութիւնը, նոյնքան ընկած և ընկճւած է հայերի տրամադրութիւնը:

Մանրամասնութիւնները կը հաղորդեմ առանձին նամակով:

Մ. Շ.

## ՍՍԱՅԻԱՄ ԳՐՔԵՐ

Արսէն Աճեմեան, Սիրոյ և Հայրենի երգեր, Ա-շարք, Լիոն, 1927, գին 5 Ֆր.:

Մինաս Ձերբազ, Ազգային խնդիրներ, պատասխան առ Պ. Արշակ Ալպոյանեան, Պարիզ, 1927, գին 5 Ֆր.:

Յովհ. Աւագեան, Նշանաւոր Օրբերաներ (պատկերազարդ), Հրատ. Հայ Կրթական Հիմնարկութեան, Նիւ-Եօրթ, 1927, գին 1 տոլար:

Վսեան Թոքոպեց, Սեղաւք, Սրկամ, 1921, գին 20 կոպէկ:

Մի շարք բիւրիմացութիւնների վերջ տալու համար, խնդրում եմ մեր գարծակալներին և բաժանորդներին, նամակներ գրելու և, մանաւանդ, դրամական առաջումների ժամանակ (մասնա-փոստեր) հասցէն գրել լրիւ ու անպայման ամբողջութեամբ դնել Mademoiselle բառը S. Agopian-ից առաջ:

«ԳՐՕՇԱԿ»-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ԲՍՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

1927 — 1928 (խմբագրական) . . . . .	1
Թուրքիոյ մարդահամարը (Կ.Սասունի) . . . . .	3
Խորհրդային քաղաք (Աշոտ) . . . . .	7
Ռուս-Անգլիական հակամարտութիւնը Արևելքում (Ա. Արեղեան) . . . . .	12
Քաղճեկի Ազգերու Դաշնակցութիւնը և միջազգային ընկերվարութիւնը (Վ. Շուշանեան) . . . . .	17
Թուրքիոյ շուրջ . . . . .	21
Մեր գտեւերը . . . . .	24
Թղթակցութիւններ . . . . .	27
Քիւրդ-քրճական պայքարը . . . . .	29
Վերջին ժամ . . . . .	31

**ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՆԿԱՐՆԵՐԸ**

«Դրօշակ»-ի խմբագրութիւնը պէտք ունի հետևեալ ընկերներու նկարներու. —

Աւետիգ Շահխաթունեանի, Սաշ. Կարճիկեանի, Սար. Մանասեանի, Արշ. Շիրինեանի, Ներ. Ջաղէթեանի, Ներ. Աւազեանի, Պատ. Աթաբէգեանի, Մամհուրի, Պօղ. Զուպարի, Հմ. Մանուկեանի, Պար. Կապուտիկեանի, Մովսէս Գիւլնազարեանի, Լ. Զարաֆեանի, Գ. Քեաղաչեանի, Վարդ. Տէր-Թորոսեանի, Սաշ. Տէր Յովհաննիսեանի (գրաշար Սաշատուր), Փառնակ Յակոբեանի, Մասունցի Մանուկի, Ռուսնոյ Յ. Զարիֆեանի, բժ. Կաղանջեանի (Կարսից), Լևոն Մուշեղեանի, զնդ. Մազմանեանի, Մոնիկ Օհանջանեանի, Սուբէն Թաղէտեանի, Միհրան Թերլեմեզեանի, Ալ. Առաքելեանի, Մարգար Սարգսեանի, Հ. Մուսայէլեանի, Հրպ. Զուլխեանի, Պուլանբզցի Մուրատի, Շիրինի և 1915-ի եղեռնին ու ազնկէտը, Հայաստանի կամ տարագրութեան մէջ նահատակած ու մեռած ընկերներու նկարները:

Խմբագրութիւնը կը խնդրէ բոլոր ընկերներէն, որոնք ունեն յիշեալ ընկերներէն ունէ մէկէի լուսանկարի, ղրկել մեզ օգուելու և վերադարձնելու պայմանով:

Խմբագրութիւնս չնորակալ կը լինի, եթէ ղրկուելիք նկարները նւիրեն Հ.Յ.Գ. կենտրոնական արխիւին:

**ԵՐԿՐԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ**

Սնդրում ենք ուշադրութիւն դարձնել, որ թղթակցութիւնները հասնեն ժամանակին: Ուշացած նիւթերը կորցնում են իրենց արժէքը: Անհրաժեշտ է մանրամասն ու փաստացի կերպով լուսարանել Կօմկուսի ներքին պառակտումը և Թրոցկի-սթալինականների պայքարը: Եթե մին — Սպասում ենք ձեր թղթակցութեան շարունակութեան: Սնդրում ենք զրել յանձնախ և երկարաշունչ ու խնամած ուսումնասիրութիւններ Երկրի տնտեսական և մշակութային վիճակի և ժողովրդի տրամադրութեանց մասին:

**« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Եւրոպական այլ երկիրների, Սիւրիայի և Պարսկական Ատրպատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ: Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրների համար՝ երկու դոլար: Բաժանորդագրուել կարելի է իւրաքանչիւր ամսի սկզբից:

**Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի**

Գ. ԳԻԻՋԱԼԱՆՆԻ  
Հայ քաղաքական մտքի զարգացումը և  
Հ. Յ. Դաշնակցութիւնը  
Հրատարակութիւն  
Մասնաշար «ԴՐՕՇԱԿ»-ի № 1  
Գին՝ Ֆրանսա և Միւրիա 8 ֆր. Ամերիկա, Եգիպտոս, Պարսկաստան և Անգլիա 50 սենտ. ուրիշ երկրներ՝ 9 ֆր.  
Ստանալու համար դիմել L. kevonian  
208-bis rue Lafayette, Paris.  
«Հայրենիք»-ի խմբագրատուն, 13-15 Shawmut St, Boston Mass.

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼ**

Դրօշակ, ամսագիր, Փարիզ, տարեկան 25 ֆր. կամ 2 դոլար.  
Հայրենիք, օրաթերթ, Բոստոն, տարեկան 6 դոլ.  
Յուսաբեր, օրաթերթ, Գահիրէ, տարեկան 150 եգ. դաշնական.  
Արաբս, օրաթերթ, Սոֆիա, տարեկան 550 լւա.  
Հայրենիք, ամսագիր, Բոստոն, տարեկան 5 դոլ.  
Նոր-Կեանք, շաբաթաթերթ, Թեհրան, տարեկան 2 թուման.  
Աւսարէզ, շաբաթաթերթ, Ֆրէզնօ, տարեկան 1,50 դոլար.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2ֆր. 50 սանտ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝

M<sup>no</sup> S. AGOPIAN.  
5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)